


## ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ԶԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2013 թուականի, Սեպտեմբեր 11-13, Ծաղկաձորի մէջ, Ս.Գ. Նաչակեան Կուսակցութիւնը գումարեց իր 20-րդ համագումարը: Կուսակցութեան գերագոյն ժողովին կը մասնակցէին 17 երկիրներէ եկած պատգամաւորներ:



Համագումարը հանգամանալից կերպով քննարկեց Հայաստանի, Հայ ժողովուրդի եւ սփիւռքահայութեան առջեւ դրուած կենսական հարցերը, միջազգային եւ շրջանային փոփոխական իրավիճակները, ինչպէս նաեւ կազմակերպչական բնոյթի հարցերը:

Քննարկելով Հայաստանի ներքին փոփոխական, տնտեսական եւ քաղաքական իրավիճակը համագումարը վերահաստատեց կուսակցութեան հիմնական ուղեգիծը՝ թիկունք կենցաղի եւ առաջնորդելու ժողովուրդի քաղաքացիական արդար պահանջներն ու բողոքները կաշառակերութեան, հովանաւորչութեան եւ սակաւատէրութեան (օլիգարխիա) դէմ: Համագումարը անդրադարձաւ արտագաղթի մտահոգիչ երեւոյթին ու գտաւ, որ ան մեծ մասամբ արդիւնք է քաղաքացիական անարդարութեան ու իր ապագայի նկատմամբ փախուցիկ յոյսի կորուստին: Համագումարը շեշտեց, որ միայն վերոնշյալ արատաւոր երեւոյթներու վերացմամբ կարելի է կասեցնել այս ազգային ողբերգութիւնը:

Համագումարը արձանագրեց նաեւ, որ վերջին տարիներուն Հայաստանի մէջ դրական տեղաշարժ եղած է խօսքի ազատութեան ասպարէզէն ներս, սակայն ժողովրդավարութեան ամրապնդման ծիրէն ներս արձանագրուած յոյսերն արդարեւ տակաւին բաւարար չէ:

Համագումարը գտաւ, որ Հայաստանի հանրապետութիւնը պէտք է վարէ տարածաշրջանային աշխարհափոփոխական իրավիճակներէ թելադրուած արտաքին փոփոխականութիւն: Սյո առումով, համագումարը գոյշաւոր լաւատեսութեամբ ողջունեց Հայաստանի՝ Մաքսիմի Միտրոպոսեանի անդամակցելու որոշումը, միաժամանակ յոյս յայտնելով, որ Հայաստան կը շարունակէ խորացնել իր համագործակցութիւնը Եւրոպական կառոյցներուն հետ:

Համագումարը վերահաստատեց, որ Լեւոնային Ղարաբաղի հարցը պէտք է լուծուի ազգերու ազատ ինքնորոշման իրաւունքի միջազգային սկզբունքի հիման վրայ ու գտաւ, որ որեւէ լուծման ձեւ պէտք է արժանանայ Արցախի ժողովուրդի, ազատ ու թափանցիկ հանրապետութեան ամրագրուած հաւանութեան: Համագումարը կարեւորեց Արցախի հանրապետութեան բանակցային գործընթացի լիիրաւ կողմ դառնալու անհրաժեշտութիւնը:

Համագումարը վերահաստատեց, որ Արցախի անկախութեան ամրապնդումը միջազգային դիւանագիտութեան ներս կը մնայ հայ ժողովուրդի հիմնահարցը:

Հայ-Թուրք յարաբերութիւններու առումով, Համագումարը որոշեց շարունակել Հայկական ցեղասպանութեան իրականութիւնը ընդունող Թուրք յոյսերով մտաւորականներու եւ կազմակերպչութիւններու հետ սկսած իր յարաբերութիւնները, անոնց հետ փնտռելով գործակցութեան նոր դաշտեր:

Համագումարը միաժամանակ անհրաժեշտ համարեց՝ Թուրք-Հայկական արձանագրութիւններու փաստաթուղթին յետ կանչումը Հայաստանի Ազգային ժողովէն:

Հայկական ցեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակի ծիրէն ներս, Համագումարը վերահաստատեց կուսակցութեան պատրաստակամութիւնը մասնակցելու այս նպատակին համար ծնած

Շարք էջ 4

## Սէյրան Օհանեան,- «Առանց Ռուսաստանի Հայաստանի անվտանգութեան ապահովումը չափազանց դժուար կը լինի»

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան Հայ-Ռուսական համալսարանի ռուսալեզու ճեմարանի ղեկավարութեան հետ հանդիպման ժամանակ յայտարարեց, որ Մաքսիմի Միտրոպոսեանի միանալու Հայաստանի որոշման մէջ նկատի առնուած է նաեւ անվտանգութեան խնդիրը:



Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան

Օհանեանի համաձայն, Մաքսիմի Միտրոպոսեանի միանալու որոշումը առնուած է նկատի առնելով տարածաշրջանին ներս գոյութիւն ունեցող հակամարտութիւնները, Արցախի խնդիրը, ինչպէս նաեւ Ռուսաստանի հետ ռազմավարական յարաբերութիւնները:

«Հայաստանը չի ուզում երկրորդ անգամ լինել պարտադրուած վիճակում: Առաջին անգամ մեզ պարտադրել են պատերազմ եւ այդ պատերազմում մենք յաղթել ենք: Որպէսզի երկրորդ անգամ բանակցային գործընթացը չաջողութեամբ աւարտուի, այն պէտք է կառուցուի երկխօսութեան, փոխադարձ հասկացութեան շրջանակներում, եւ եթէ լինելու են զիջումներ, ապա պէտք է լինեն փոխադարձաբար»,-

նման կարծիք յայտնեց Օհանեան: «Բայց, ցաւոք սրտի, մեր հարեւանները փորձում են մեզ հետ նորից ուժի միջոցով խօսել, պարտադրել իրենց ուժը, հասնել նրան, որ զիջումները լինեն միակողմանի, ինչն անընդունելի է», - աւելցուց նախարարը:

Խօսելով հայ-Ռուսական յարաբերութիւններու մասին խօսելով Օհանեանը յայտնեց, որ Ռուս

Շարք էջ 4

## Բողոքի ցոյց Հրանդ Տինքի գործով դատավարութեան ընթացքին

Հայազգի լրագրող, «Ակօս»-ի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործով Պոլսոյ ծանր յանցագործութիւններու դատարանին ներս տեղի ունեցած նիստի ընթացքին չէնքի մօտ հաւաքուած են մօտ երկու հարիւր ցուցարարներ, որոնք իշխանութիւններուն կը մեղադրէին պետական համակարգին ներս ընդլայնակեցող գործող ազգայնական տարրերու յանցանքները կոծկելու մէջ:

րած եւ իրականացուցած է անուանի ազատական մտաւորականներուն, ինչպէս նաեւ քուրտ առաջնորդներուն ոչնչացնելու նպատակ հետապնդող ազգայնական գաղտնի կառույցը, որ առնչութիւն ունի պետութեան հետ:

Յուցարարները վանկարկած են՝ «Մարդասպան պետութիւնը պատասխան պիտի տայ» եւ «Բոլորս Հրանդ Տինք ենք, բոլորս հայ ենք» կարգախօսները: Անոնք ձեռքերնին մէջ ունեցած են հայերէն, թրքերէն եւ քուրտերէն լեզուներով պատասխաններ:

Այս նիստին հետեւած է նաեւ «Ռոյթըր» լրատուական գործակալութիւնը, որ կը լիչեցնէ, որ Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար Թուրքիոյ իշխանութիւններուն անդադար քննադատած Հրանդ Տինքին 2007-ի Յունուար 19-ին «Ակօս»-ի խմբագրատան մօտ սպաննած է Օզիւն Սամասթ, որ այդ ժամանակ 17 տարեկան էր: 2011-ին Սամասթ դատապարտուած է 23 տարուայ բանտարկութեան:

Յուցարարները համոզուած են որ, Տինքի սպանութիւնը ծրագր

Հրանդ Տինքի ընտանիքը՝ ի նշան բողոքի,, մերժած էր ներկայ գտնուելու դատավարութեան:

## ԸՆԹԵՐՑՈՂԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հրատարակչական թէքնիք պատճառներով «Մասիս» անցելով շաբաթ լոյս չի տեսաւ: Ներկայ միացեալ թիւը կը կրէ 33 եւ 34 համարները: Կ'ապաւիճինք մեր ընթերցողներու հասկացողութեան:



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 22, 2013  
 VERDUGO PARK - ԿԼԷՆՏԷՅԼ



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՍԿՈՒՄՅԻՑ ՅԵՏՈՅ, ՎԻՆԻՒՈՒՄԻՑ ԱՌԱՋ, ՎԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՖԻՑԻՏ

### ԷԴԻՏՍԱԳԱԽԹԵԱՆ

Սեպտեմբերի 14-ին Եւրա-միութեան ընդլայնման հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիլլին «Ազատութիւն» ռատիոկայանին տուած բացառիկ հարցազրոյցում անդրադառնալով հարցին, թէ՛ այնուամենայնիւ, Հայաստանի համար ինչ-որ լուծում կա՞ց, թէ՛ ամէն ինչ վերջացած է, պատասխանել է «Ոչ» վերջացած չէ, եւ մենք հաստատ չենք հրաժարուել Հայաստանից եւ հայ ժողովրդից: Նման բան տեղի չի ունենալու: Նախ՝ մենք քննարկեցինք տեղի ունեցածը եւ Մաքսային միութեանը միանալու նախագահի որոշումը, եւ ես նրան վստահեցրեցի, որ այն, ինչ մենք պահանջում ենք ուրիշներից՝ յարգել ազատ ընտրութիւն կատարելու իրաւունքը, մենք ինքնքրա էլ ենք յարգում ազատ ընտրութիւն կատարելու այդ իրաւունքը»: Այնուհետեւ գալով հարցին, որ հայաստանցիների համար շատ անսպասելի էր Սեպտեմբերի 3-ին Սերժ Սարգսեանի արած յայտարարութիւնն այն մասին, որ Հայաստանը միանալու է Մաքսային միութեանը, իսկ իր համար էլ է՞ր շուրջ, Ֆիլլին նկատել է «Այսպէս ասեմ՝ մենք նոյն վիճակում էինք, ինչ հայաստանցիները»:

Երեւանում, իհարկէ, Ֆիլլին նշեց, որ Հայաստանի պաշտօնեա-

ների հետ քննարկումներում իրեն որեւէ բան չի ասուել ճնշումների մասին ու յաւելեց, թէ՛ հետեւաբար, իրեն իրաւունք չի վերապահուած հարցականի տակ դնել Հայաստանում իր գրուցակիցների անկեղծութիւնը: Բայց միւս կողմից կարելի է հասկանալ, թէ՛ Հայաստանի իշխանութիւններին, որոնք, բնականաբար, չեն կարող ասել, որ Փութինը մեզ ճնշել է, թէ՛ միւս կողմից, Բրիւսելին, որն էլ չի կարող իր յայտարարութեամբ ի հակառակ Մոսկուայի՝ «բացառապէս» Հայաստանի իշխանութիւնների «ճնշուածութեան» աստիճանը:

Այս իրավիճակում, մնում է գոնէ արձանագրել, որ ամէն ինչ վերջացած չէ, եւ որ ԵՄ-ն չի հրաժարուած Հայաստանից:

Այնուհետեւ Ֆիլլին հետաքրքիր խոստովանութիւն է արել, որը, իհարկէ, Հայաստանի իշխանութիւններին ուղղուած ապսպակ կարելի է համարել՝ «Ես ասացի նախագահին, որ եթէ հաւատ եւ վստահութիւն լինի, այդ հենքի վրայ շատ բանի կարելի է հասնել: Բայց հիմա հաւատ եւ վստահութիւն չկայ, չկայ ստեղծագործականութիւն եւ գրեթէ չկայ ընդառուջ գնալու ցանկութիւն»:

Իսկապէս, ի՞նչ հաւատի մասին կարող է խօսք լինել, երբ չորս տարուայ բանակցութիւնների,

հաւատարացումներից յետոյ քիչ է Մոսկուայում Մաքսային միութեանը անդամակցելու որոշում է կայացուած, դեռ հիմա էլ, իշխանութիւնները որոշել են «ապացուցել», թէ իրենց չեն ճնշել:

Ապագային ուղղուած պատգամներ, իհարկէ, Ֆիլլին, յղեց Հայաստանի եւրոպական ինտեգրացիայի առումով, բայց ինչպէս զգացուց նրա երեւանեան յայտարարութիւններից՝ ամէն ինչ դեռ անորոշութեան մէջ է: «Մենք պէտք է ինչ-որ ձեւ գտնենք, որպէսզի այս երեքուկէս տարիները մոռացութեան չմատնուեն, այսպէս ասած՝ դեռ չչարտուեն: Պէտք է դրանց հիմքի վրայ առաջ շարժուելու ճանապարհ գտնել: Պէտք է քննարկել հայերի հաւակնութիւնները եւ տեսլականը յարաբերութիւններն աւելի բարձր մակարդակի վրայ դնելու, այդ թւում մեր յարաբերութիւնների նոր իրաւական հիմքերի վերաբերեալ: Մենք միանշանակ պատրաստ ենք», նկատել է նա:

Ի վերջոյ, կարող է լինել մի փաստաթուղթ, որը կարող է ստորագրուել՝ Վիլնիոսում, հարցին Ֆիլլին պատասխանել է. «Ես կը ցանկանայի զզոյշ լինել այս հարցում, որովհետեւ մենք խօսում ենք այս Ասոցացման համաձայնագրի գործընթացի մասին, որը տեւել է երեքուկէս տարի: Այսինքն՝ սա

լուրջ խնդիր է: Չեմ ասում, թէ փոխարէնը մենք ունենալու ենք համարժէք նշանակութեան փաստաթուղթ, բայց միեւնոյն է՝ խօսքը վերաբերում է շատ լուրջ գործի՝ անդամ երկրների մասնակցութեան, մանդատի, նոր համաձայնագրի շրջանակներին... Այնպէս որ, եթէ մինչեւ Վիլնիոսը մենք կարողանանք առնուազն ձեւակերպել, թէ ինչի ենք ուզում հասնել, դա արդէն բաւական մեծ առաջընթաց կը լինի»:

Հայաստանը փաստացի, Մոսկուայից յետոյ, Վիլնիոսից առաջ յայտնուել է բաւական բարդ իրավիճակում: Մոսկուայում կայացրած որոշումը հրապարակելուց յետոյ ստեղծուել է մի իրավիճակ, երբ Հայաստանի իշխանութիւնները շարունակում են վստահեցնել, թէ Հայաստանը հաստատակամ է առաջ տանել ամենատարբեր ուղղութիւններով Եւրոպական միութեան հետ հնարաւորինս սերտ փոխգործակցութիւնը՝ այնքանով, որքանով դա չի հակասի Մաքսային միութեանը Հայաստանի անդամակցութեան որոշմանը:

Բայց սա նաեւ կրեմլի համար ոչ այնքան ցանկալի յայտարարութիւն է, եւ այս առումով, գուցէ, Հայաստանի իշխանութիւնները նոյնիսկ կրեմլի համար ոչ այնքան վստահելի համարուեն, չնայած Սեպտեմբերի 3-ի յայտարարութիւնը՝ Մաքսային միութեանը Հայաստանի միանալու վերաբերեալ: Այնպէս որ, Հայաստանի իշխանութիւններին չի կարելի նախանձել այսօրուայ իրավիճակում ոչ Մոսկուայ, ոչ Բրիւսելը Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ վստահութիւն չունեն, եւ հնարաւոր է, որ դեռ երկու ժամանակ այդ վստահութիւնը հնարաւոր չլինի վերականգնել:

«ՀԱՅԵԼԻ»

## ԱՄԵՆԱԳԻՇՏԸ ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ Է

### ՄԱՐԿ ՆՃԱՆԵԱՆ

Սերժ Սարգսեանի՝ Մաքսային միութեանն անդամակցելու վերաբերեալ Մոսկուայում ստորագրած համաձայնագրի շուրջ քննարկումները կարծես թէ կամաց-կամաց տեղափոխուած են իրաւական հարթութիւն: Այլ կերպ ասած՝ առաջին պլան է մղուում այն հարցը, թէ արդեօք Սերժ Սարգսեանը նման փաստաթուղթ ստորագրելու լիազօրութիւններ ունէր:

Չուտ ձեւակախօրէն ՀՀ Սահմանադրութիւնը Սերժ Սարգսեանին նման լիազօրութիւններ, իհարկէ, տալիս է: Յամենայն դէպս՝ ՀՀ Սահմանադրութեան որեւէ յօդուածում գրուած չէ, որ «ՀՀ նախագահն իրաւունք չունի ախմախ պայմանագրեր ստորագրել»: Բայց ՀՀ Սահմանադրութիւնը լուրջ փաստաթուղթ է եւ նման հնարաւորութիւնը չի բացառում: Ի՞նչ իմանաս, մէկ էլ տեսար՝ նախագահը վատ երազ տեսաւ, ինչ-որ թունաւոր խոտ կերաւ, ուղեղը ժամանակաւորապէս մթազնեց, ու արդիւնքում՝ գնաց ու ինչ-որ ախմախ պայմանագիր ստորագրեց: Դրա համար էլ ՀՀ Սահմանադրութեան 6-րդ յօդուածում ամրագրուած է, որ «Միջազգային պայմանագրերն ուժի մէջ են մտնում միայն վաւերացուելուց կամ հաստատուելուց յետոյ: Այսինքն՝ կապ չունի, թէ ինչ է ստորագրել Սերժ Սարգսեանը Մոսկուայում կամ ինչ կը ստորագրէր Վիլնիոսում: Քանի դեռ Ազգային ժողովն այդ պայմանագրերը չի վաւերացրել, դրանք ոչինչ չարժեն: Հիմա խօսենք ըստ էութեան: ՀՀ Սահմանադրութեան առաջին յօդուածում (որն, ի դէպ, փոփոխման ենթակայ չէ) ամրագրուած է, որ «Հայաստանի Հանրապետութիւնը ինքնիշխան, ժողովրդավա-

րական, սոցիալական, իրաւական պետութիւն է»:

Սահմանափակուելու է արդեօք ՀՀ ինքնիշխանութիւնը Մաքսային միութեանն անդամակցելուց յետոյ: Իհարկէ սահմանափակուելու է: Իշխանական համակարգի տարբեր պաշտօնեաներ տարիներ շարունակ իրենք էին խօսում այդ մասին: Եւրամիութեան հետ ասոցացման համաձայնագիրն, ի դէպ, նոյնպէս սահմանափակելու էր այդ ինքնիշխանութիւնը, այսինքն՝ նոյն խնդիրն այն դէպքում էլ էր առաջնալու: Իսկ սա նշանակում է, որ այդ պայմանագրերը հակասում են ՀՀ Սահմանադրութեանը: Նման իրավիճակում ՀՀ Սահմանադրութիւնը շատ կոնկրետ լուծում է առաջարկում: Սահմանադրութեան նոյն 6-րդ յօդուածում պարզ գրուած է. «Սահմանադրութեանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վաւերացուել»: Կապ չունի՝ ՀՀԿ խմբակցութեան բոլոր պատգամաւորները կարող են գալ, վազվզել դահլիճում, հնարաւոր բոլոր կոնակները սեղմել, 200 տոկոս ձայն ապահովել, միեւնոյն է՝ Սահմանադրութեանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վաւերացուել, եւ վերջ: Մի ուրիշ հարց էլ կայ՝ Սահմանադրութեան 112-րդ յօդուածում պարզ գրուած է, որ «Հանրաբուէի միջոցով ընդունուած օրէնքները փոխուում են միայն հանրաբուէով»: Իսկ ՀՀ անկախութիւնը հանրաբուէով է հռչակուել:

Ինչի՞ համար ենք ասում այս ամէնը: Որպէսզի տպաւորութիւն չստեղծուի, թէ իշխանութիւններն ամէն ինչ «օրէնքի տառին եւ ոգուն համապատասխան» են անում: Եթէ պէտք լինի՝ ՀՀԿ խորհրդարանական մեծամասնութիւնն, իհարկէ, ներկայանալու է խորհրդարան

ու մէկ մարդու նման սեղմելու է անհրաժեշտ կոնակը, Սահմանադրական դատարանն ուշիմ մի տեղեկանք է տալու առ այն, որ տուեալ միջազգային պայմանագիրը համարեալ չի հակասում ՀՀ Սահմանադրութեանը եւ այն: Պարզապէս արդէն այսօրուանից պէտք է արձանագրել, որ դրանով իսկ բոլոր այդ մարդիկ ՀՀ Սահմանադրութեան խախտման հարցում յանցակից են դառնալու Սերժ Սարգսեանին: Պատասխանատուութիւնը միայն նրա վրայ բարդել չի ստացուելու:

Չնայած՝ «յանցակից» բառը երեւի այնքան էլ տեղին չէ: Մեծ հաշուով՝ առաջժ օրեւէ յանցանք տեղի չի ունեցել, որովհետեւ Սերժ Սարգսեանի ստորագրած փաստաթուղթն առաջժ օրեւէ իրաւական ուժ չունի: Ցանցանքը տեղի կ'ունենայ այն դէպքում, եթէ միջազգային այդ պայմանագիրը վաւերացուի առանց հանրաբուէի: Դա, ի դէպ, նաեւ փոքր-ինչ կը շտկի Հայաստանի խիստ սասանուած միջազգային հեղինակութիւնը: Յամենայն դէպս՝ եթէ հանրաբուէի արդիւնքը դրական լինի, կը մեղմուի այն տպաւորութիւնը, թէ Սերժ Սարգսեանին պարզապէս դալաթ արած աշակերտի պէս անկիւն են կանգնեցրել, մի քիչ վրան գոռոռացել ու ստիպել ստորագրել անհրաժեշտ փաստաթուղթ: Այդ դէպքում գոնէ կարող ենք ասել, որ դա մեր ժողովրդի որոշումն էր, եւ ճնշման մասին խօսք լինել չի կարող:

Իսկ եթէ հանրաբուէի պատասխանը դրական չլինի, Սերժ Սարգսեանը, բնականաբար, պիտի հրաժարական տայ: Սա է նորմալ քաղաքականութեան տրամաբանութիւնը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

**ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
 MASSIS WEEKLY

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՐԹԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Րաֆֆի Յովհաննիսեան. «Սերժ Սարգսեանը Պէտք է հեռանայ նախագահի պաշտօնից՝ յանուն Հայաստանից»**

Սերժ Սարգսեանը Պէտք է հրաժարուի իր գեղեցիկ պաշտօնից՝ յանուն Հայաստանի, մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը:

Յովհաննիսեանի խօսքով՝ եթէ երկրի արտաքին եւ ներքին քաղաքականութիւնում տեղի ունեցող գործընթացները շարունակուեն նոյն տեմպերով, Հայաստանը կը դառնայ երրորդ սորտի երկիր. «Մաքսային միութեանն անդամակցելով՝ Հայաստանը կը կորցնի իր աշխարհաքաղաքական նշանակութիւնն ու այնքան կը գրկուի իր ինքնուրոյնութիւնից, որ անգամ կարող է նշանակութիւն չտալ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին»:

Յովհաննիսեանը միաժամանակ ընդգծել է, որ առանց Մաք-

սային միութեանն անդամակցելու ժողովրդական Հայաստանն ու Ռուսաստանը կրկին կարող են արագացնել իրենց գործընկերութիւնը: «Մաքսային միութեանն անդամակցելու որոշումը միանձնեայ է կայացուել, կառավարութեան եւ ոչ մի անդամ, անգամ վարչապետը, նոյնիսկ իշխող կուսակցութեան անդամները դէմ չեն արտայայտուել», - ասել է ընդդիմադիրը:

Յովհաննիսեանի խօսքով՝ «Ժառանգութիւն» կուսակցութիւնը կողմ է եղել եւ հիմա էլ հաւատարիմ է իր դիրքորոշմանը՝ եւրոպական արժէքները իւրացնելուն եւ ԵՄ հետ Ասոցացման մասին համաձայնագիրը ստորագրելուն: «Մինչ այդ, ներկայիս պայմաններով Մաքսային միութեանն անդամակցելն անընդունելի է, - եզրափակել է Յովհաննիսեանը:

**Աղուան Յովսէփեանը հեռացաւ պաշտօնից**

Հայաստանի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը հրաժեշտ տուեց պաշտօնին: Նա գլխաւոր դատախազութիւնը ղեկավարում էր 15 տարի, երկու անգամ վերանշանակուել էր այս պաշտօնում, բայց այս անգամ Սերժ Սարգսեանը չառաջարկեց Աղուան Յովսէփեանի թեկնածութիւնը:

Աղուան Յովսէփեանն բաւական դրամատիկ հեռացաւ դատախազութեան շէնքից. նրան հրաժեշտ տալու համար շէնքի մօտ հաւաքուել էին դատախազութեան համակարգի աշխատակիցները, Յովսէփեանը համբուրեց դատախազութեան դուռը, ձեռքերը միացրեց ինչպէս աղօթքի ժամանակ, խոնարհուեց, յետոյ աշխատակիցներին հրաժեշտ տուեց եւ լրագրողների մի քանի հարցի պատասխանելուց յետոյ հեռացաւ:

Արդէն նախկին գլխաւոր դատախազը չյստակեցրեց, թէ արդեօք այլ պաշտօնի է նշանակուելու, միայն ասաց՝ «միասին դեռ աշխատելու ենք»: Ի դէպ, Աղուան Յովսէփեանը բարձր գնահատեց 15 տարիների իր աշխատանքը:

«Այդ տարիների ընթացքում, վկայ է Աստուած, արել եմ ամէն ինչ, որպէսզի համակարգը կայանայ, եւ

բոլոր ինդիւրները, որ առաջադրուած են եղել դատախազութեան համակարգի առջեւ, լուծուեն արդարադատութեան, օրէնսդրութեան սահմաններում», - ասաց նա:

Յովսէփեանը խօսեց դատախազութեան բարեփոխումներից եւ յոյս յայտնեց, որ նոր նշանակուելիք գլխաւոր դատախազը կը շարունակի իր գործը: Իսկ թէ ում է տեսնում իրենից յետոյ, չասաց: Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ինչպէ՞ս է տեսնում իր հետագայ գործունէութիւնը, արդեօք կա՞ն առաջարկներ, պայմանաւորուածութիւններ պաշտօնավարման, եւ արդեօք շարունակելու է իր հասարակական գործունէութիւնը, պատասխանեց. - «Հասարակական գործունէութիւնը իհարկէ, շարունակելու եմ եւ աւելի ակտիւ, քանի որ, ցաւոք սրտի, մեր հանրութեան մէջ թոյն կաթեցնողները շատ են եւ օր-օրի աւելանում են: Այն, ինչ ես անում եմ, ուղղակի հակաթոյնն է մեր հանրութիւնը թունաւորելու դէմ, եւ ամէն ինչ անելու եմ, որ մեր հասարակութիւնը առողջ ապրի: Կապուած հետագայ պաշտօնավարման հետ միայն կարող եմ ասել, որ մենք դեռ միասին աշխատելու ենք: ոտքով գնաց:

**Նորաստեղծ կուսակցութեան ղեկավարը հայ աղջիկներին կոչ է անում զրկուել կուսութիւնից**

Եթէ աղջիկը 26 տարեկանից յետոյ կոյս լինի, ես նրան չեմ յարգի: Այս մասին, Aravot.am-ի թղթակից հետ գրուցումը նշել է «Նոր քաղաքական մշակույթ» կուսակցութեան ղեկավար Անի Զախարեանը, որը պատրաստուած է հայ հասարակութեան մէջ կոտրել կուսութեան վերաբերեալ կարծրատիպերը:

Նա նշել է, որ վերջին շրջանում խորապէս ուսումնասիրել է կնոջ ֆիզիոլոգիան եւ պարզել, որ կնոջ մէջ աւելի շատ են սրուած էմոցիաները եւ հենց նա Պէտք է աւելի շատ սեռական կեանքով ապրի, քան՝ տղաները:

33-ամեայ Անի Զախարեանն ասխատու է, որ կուսութիւնից զրկուել է միայն 32 տարեկանում: «Այն հայ աղջիկը, որը 26 տարեկանից յետոյ, կրթութիւն ստանա-

լուց, գիտակցական որոշ մակարդակի գալուց յետոյ որոշում է, որ իր սիրած տղամարդու հետ Պէտք է ակտիւ սեռական կեանքով ապրի, ուրեմն պիտի ապրի: Ո՞վ ասաց, որ միայն հայ տղան իրաւունք ունի սեռական կեանքով ապրելու, ընդհակառակը, կնոջ մէջ են էմոցիաները աւելի սրուած, քան տղամարդու մէջ, եւ հենց կինն աւելի շատ պահանջ ու իրաւունք ունի ակտիւ սեռական կեանքով ապրելու»:

«Յորդորելով, խօսելով: Ես գիտեմ իմ խօսքի ուժը: Համոզուած եմ, որ բոլոր հայ աղջիկները հենց դրան են սպասում, որ վերջապէս ձեռքագրուենք էդ լիմարութիւնից: Ուզում ես յղիանել, արա: Քո սեռական կեանքը ոչ մէկին չի վերաբերում», - ընդգծել է նա:


**«Պէտք էր գնալ Եւրոպական Միութիւն՝ Ռուսաստանին չզայրացնելու համար»**

Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազրատեանը համոզուած է՝ Պէտք էր գնալ Եւրամիութիւն, որպէսզի չզայրացնէինք Ռուսաստանին եւ արդիւնքում նա մեզ չստիպեր մտնել Մաքսային միութիւն:

ՀԱյ պատգամաւորն ասում է, որ այս պարզ բանը ասել է նաեւ իշխանութիւններին, սակայն նրանք պատասխանել են՝ «Ռուսները մի քիչ կը խօսեն, կ'անցնի, կը գնայ»:

«Պէտք էր հասկանալ, որ մեզ մօտ ռազմական բազա կայ, որ մենք գրգռելու ենք Ռուսներին: Ես յստակ ասում էի՝ ոչ նա է պէտք, ոչ այն: Եթէ մենք Եւրոպայի հետ չսկսէինք բանակցութիւնները, հիմա Մաքսային Միութիւնն էլ չէինք մտնի: Մինչեւ 2013 թուականի Մայիսի 26-ը ոչ մի ճնշում չի եղել, Ռուսները լուռ հետեւել են, մերոնք էլ սխալ անալիզներ էին անում, որ դա մեզ չի վերաբերելու, եւ ի՞նչ... պէտք էր գալ, հասնել Սեպտեմբերի 3-ին, խայտառակ ձեւով Եւրոպացիներին ասել՝ չենք ստորագրում, մենք արդէն մի յիստեն տարով յարաբերութիւն չենք ունենայ նրանց հետ, եւ Ռուսների մօտ էլ գնացինք, ոչ թէ գնացինք, այլ՝ տարան... սա՛ էիք ուզում՝ կորցնելով ձեր արժանապատուութիւնը: Եւ Ռուսների մօտ էլ արդէն ունենք սպաւորութիւն, որ արդէն ցանկացած պահի կարող են «քցել», - ասաց Բազրատեանը:

Այն, որ Հայաստանին Մաքսային Միութիւնը պէտք էր, նախկին վարչապետի փոխանցմամբ միանշանակ է, քանի որ զարգացման



Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազրատեան

հեռանկարները շատ սահմանափակ են, բայց այժմ Մաքսային Միութիւնն չմտնելու հնարաւորութիւն չկայ: Եթէ Պուտինը պնդում է, տարբերակ չկայ, ասում է Բազրատեանը. - «Որովհետեւ Ռուսները հազար անգամ ասացին՝ մենք ձեր համբալը չենք, մենք զանք ձեր սահմանները պահենք, դուք գնա՞ք Եւրոպա տնտեսական հաճույքների»:

Հայաստանի նախկին վարչապետի համոզմամբ՝ այս պահի պէտք է ամէն ինչ անել, որպէսզի Հայաստանի տնտեսութիւնը ինչ-որ բան շահի այս միութիւնից: Իսկ այն, որ Մաքսային Միութիւնում այժմ գործող մաքսատուքերով Հայաստանի տնտեսութիւնը անկում է ապրելու, ըստ Բազրատեանի, միանշանակ է, քանի որ յայտնուելու ենք մի տարածքում, որտեղ մաքսատուքերը պէտք է մի քանի անգամ բարձրանան:

**Ազատամարտիկները հանդիպել են քաղաքական ուժերին**

Սեպտեմբերի 17-ին Ազատամարտիկների ռազմադաշտային խորհրդի անդամները հանդիպել են ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանին: ՀԺԿ նախագահի կողմից դրական արձագանքի են արժանացել պետութեան առջեւ ծառայած մարտահրաւէրների, երկրում առկայ սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, Հայաստանի իշխանութիւնների ոչ համարժէք կարգավիճակի, այլ կուսակցութիւնների հետ հնարաւոր կլոր սեղանի շուրջ առաջնահերթ խնդիրների քննարկման մասին մտահոգութիւնները: Պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել ՀԺԿ-ի՝ ազատամարտիկների շարժմանը պաշտօնապէս զօրակցելու մասին:

Ստեփան Դեմիրճեանը բարձր է գնահատել ազատամարտիկների աւանդը հայոց պետականութեան կայացման գործում եւ պատրաս-

տակամութիւն յայտնել բազմակողմանի համագործակցութեան:

Սեպտեմբերի 17-ին Ազատամարտիկների ռազմադաշտային խորհրդի անդամները աշխատանքային հանդիպում են ունեցել նաեւ «Հայրենիք եւ պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեանի, կուսակցութեան քաղխորհրդի անդամների, ինչպէս նաեւ «Հակախուսակցի» հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչների հետ: Քննարկուել են երկրում օրէցօր խորացող ճգնաժամը, կոռուպցիոն դրսեւորումները, խօսուել է միջազգային նմանատիպ կազմակերպութիւնների եւ «Հակա-կոռուպցիոն» հասարակական կազմակերպութեան համագործակցութեան արդիւնքների մասին: Առաջիկայ համահաւաքներից մէկում Գառնիկ Մարգարեանը հանդէս կը գալ այս մասին զեկուցով:

**Ակտիւիստներին ծեծի ենթարկողներից մի քանիսը յայտնաբերուել են**

Երեւանի քաղաքապետարանի մօտ բողոքի ակցիայի մասնակիցներ Միհրան Մարգարեանի եւ Բաբկէն Տէր-Գրիգորեանի վրայ Օգոստոսի 25-ին յարձակուած անձանցից երկուսի ինքնութիւնը պարզուել է: Ըստ ոստիկանութեան պաշտօնական տեղեկատուութեան, Մարգարեանին եւ Տէր-Գրիգորեանին ծեծի ենթարկելու մասին խտտովանական ցուցմունքներ են տուել երկու անձինք՝ 25-ամեայ մի երիտասարդ՝ Բաբեանն ազգանունով, եւ Փուրտոեանն ազգանունով 39-ամեայ մի տղամարդ:

Ըստ ոստիկանութեան, նրանք ներկայացուել են ոստիկանութեան կենտրոնականի բաժին եւ ինքնախոստովանական ցուցմունքներ տուել: Նրանց մեղադրանք առաջադրելու եւ խափանման միջոցի մասին առայժմ տեղեկութիւն չի տրամադրուել:

Ծեծուած երիտասարդները՝ Միհրան Մարգարեանն ու Բաբկէն Տէր-Գրիգորեանը ի սկզբանէ հնազանդուած էին, որ առնուազն 7 հոգանոց խումբ է իրենց շրջափակել եւ «մեր պապաներին նեղացրել են», «մեր հայրերի դէմ էք դուրս եկել» խօսքերից յետոյ սկսել ծեծը:

# ԼՈՒՐԵՐ

## Հնարաւոր է՝ Եգիպտոսն ընդունի Հայոց Ցեղասպանութիւնը

Եգիպտոսը Մուհամեդ Մուբարիի ռեժիմի տապալումից յետոյ կարող է դառնալ առաջին մուսուլմանական երկիրն աշխարհում, որը կ'ընդունի 1915թ. Օսմանեան կայսրութեան տարածքում տեղի ունեցած հայերի կոտորածները որպէս ցեղասպանութիւն, գրում է Vatican Insider-ը:

Այս իրադարձութիւնը կարող է յաջորդել եգիպտոսցի փաստաբան, Եգիպտոսի «Ազգային ճակատ» ինստիտուտի տնօրէն Մուհամմադ Սաադ Կայրալլահի անհաղթելի քայլին, որն իրաւաբանական հայց է ներկայացրել տուեալ հարցի վերաբերեալ: Պատմութեան ընթացքում առաջին անգամ այս լսումները կահիրէի դատարանում կը սկսուեն 2013թ. Նոյեմբերի 5-ին:

Նման յայտարարութիւնն արուել է հեռուստատեսային բանավեճի ժամանակ, որին հետեւել են միլիոնաւոր եգիպտոսցի հեռուստադիտողներ: Մուբարիի տապալումից յետոյ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը խիստ քննադատութեան է արժանացրել նոր ժամանակաւոր կառավարութեանը, որին աջակցում են զինուորականները, եւ կողմ արտայայտուել իր իսլամցի ընկեր

Մուբարիի իշխանութեանը վերադառնալուն:

Էրդողանի միջամտութիւնը եգիպտական հասարակութեան ոչ բոլոր անդամներին է դուր եկել, ինչը կարելի էր կանխատեսել՝ ենթադրելով երկու երկրների միջեւ եղած սրուած յարաբերութիւններից: Եգիպտական թերթերում բազմաթիւ հակաթուրքական ուղղութեան ռեպորտաժներ եւ մեկնաբանութիւններ են յայտնուում: Այստեղ էլ առաջ է գալիս Հայոց ցեղասպանութեան խնդիրը: Պարբերականներում հրատարակում են նիւթեր, որոնք կոչ են անում Եգիպտոսի նոր կառավարութեանն ընդունել Հայոց ցեղասպանութիւնը:

Առաջարկում է նաեւ Կահիրէում ցեղասպանութեան գոհերի չուշարձան կանգնեցնել: Կառավարութեանն առաջարկում է նաեւ դիւանագիտական քայլեր ձեռնարկել եւ Թուրքիային ստիպել փոխհատուցել Երեւանի գոհերի սերունդներին: Այս թեման քննարկուել է Եգիպտոսում յայտնի «Ամբողջական լուսանկար» շոուի ժամանակ, որին մասնակցել են փաստաբան Կայրալլահը եւ Կահիրէի համալսարանի միջազգային իրաւունքի պրոֆեսոր Այման Սալաման:

## Ռուս քաղաքագետ. «Ադրբեջանը ամէն տեսակի սպառնալուծութիւններ է ձեռք բերում՝ Ղարաբաղը ետ նուաճելու նպատակով»

Ադրբեջանը ամէն կերպ սպառնալուծում է, որպէսզի ետ նուաճի Լեռնային Ղարաբաղը: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ գրոյցում յայտարարել է ռուս քաղաքագէտ Ալեքսանդր Խրամչիխինը՝ անդրադառնալով Արդբեջանի կողմից Ռուսաստանին 18 ինքնագնաց «Վենա» հրատանային սարքաւորումների պատուերին:

Նրա խօսքով, եթէ պատուէրը կայ, համապատասխանաբար, սպառնալուծութիւնը կ'արտադրուի: Ի պատասխան այն նկատումանը, որ Ռուսաստանը նախկինում «Վենա» չէր թողարկում, Ալեքսանդր Խրամչիխինը ընդգծել է, որ դէպքը արտակարգ չէ: «Լինում

են դէպքեր, երբ երկիրն այս կամ այն տեսակի գէնք չի կիրառում, սակայն պատուէրի դէպքում արտադրում է», - կարծիք է յայտնել քաղաքագէտը:

Ինչ վերաբերում է ադրբեջանական կողմին, Ալեքսանդր Խրամչիխինը նշել է. «Ադրբեջանը ամէն տեսակի սպառնալուծութիւններ է ձեռք բերում, որպէսզի ետ նուաճի Լեռնային Ղարաբաղը: Այդ պետութիւնն այլ նպատակ չի հետապնդում»:

Նշենք, որ ռուսական «Կուր-գանմաշգավոդը» Ադրբեջանի համար սկսել է ինքնագնաց «Վենա» հրետանային սարքաւորումներ արտադրել:

## ՍԴՀԿ 20-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ծառունակուած էջ 1-էն

որել է համագգային մարմինի կամ ոչ Հայկական նախաձեռնութեան որ կը նպաստէ Հայ դատի հետապնդման:

Համագումարը Բնարկեց հայ հիմնաւորը գաղութներէն՝ Սուրիահայ գաղութի տագնապալի վիճակը ու գտաւ թէ Սուրիոյ տագնապը պէտք է լուծուի խաղաղ միջոցներով եւ առանց արտաքին միջամտութիւններու: Համագումարը կոչ րբաւ համայն հայութեան շարունակել ու կրկնապատկել միգրիւն օժանդակելու Սուրիահայ մեր եղբայրներուն եւ հոյրներուն:

Համագումարը, լսեց նաեւ տարբեր գաղթօճակներէ եկած պատգամաւորներու գեկոյցները իրենց շրջաններու ազգային կեանքին մասին ու վերահաստատեց հետեւողականօրէն շարունակել Հայապահպանութեան համար տարուող աշխատանքները:


Քննել է ետ կուսակցական շրջաններու կազմակերպչական կառոյցներուն իրավիճակը, Համագումարը այս կապակցութեամբ առաւ որոշումներ եւ տուաւ համապատասխան ցուցմունքներ:

Իր օրակարգի վերջին հարցով, Համագումարը ընտրեց մեր Կեդրոնական վարչութիւնը:

Համագումարը իր աշխատանքները աւարտեց այցելելով Եւրոպայի յարգանքի տուրք մատուցելու մեր նախապատկերներուն եւ վերահաստատելու անոնց ուղիէն ընթացալու Ս.Դ.Հ.Կ.-ի հաւատամբը:

Ս.Դ.Հ.Կ. 20-րդ Համագումար Ծաղկաձոր, Հայաստան, Սեպտեմբեր 13, 2013.

## Մոսկուայում բացուեց հայկական եկեղեցական համալիրը



Մոսկուայի Հայոց առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպութեան եկեղեցին

Ռուսաստանի մայրաքաղաքում օծուել է Մոսկուայի Հայոց առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպութեան եկեղեցին, որին ներկայ է եղել Սերժ Սարգսեանի տիկնոջ՝ Ռիտա Սարգսեանի եւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակեանի հետ:

Հանդիսաւոր ծիսակատարութիւնը կատարել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Արարողութեանը ներկայ է եղել եւ իր օրհնութիւնն է բերել Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Կիրիլը: Չնայած ԶԼՄ-ներում նախապէս տարածուած տեղեկութիւններին՝ հայկական եկեղեցու բացմանը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ներկայ չէր: Ներկայ չէին նաեւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ, անգամ Մոսկուայի նորընտիր քաղաքապետ Սոբեանինը, ում Սերժ Սարգսեանը հապտապ շնորհաւորել էր, հարկ չէր համարել ներկայ գտնուել:

Ըստ ՀՀ նախագահի մամուլի

գրասենեակի հաղորդագրութեան՝ արարողութեանը ներկայ են եղել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը եւ տիկին Ռիտա Սարգսեանը, Ռուսաստանի պետական եւ հասարակական գործիչներ, Հայ Առաքելական եկեղեցու Հայաստանի եւ արտերկրի խոշորագոյն թեմերի առաջնորդներ, Ռուսաստանի կրօնական առաջնորդներ, բարերարներ: Որեւէ անուն նշուած չէր:

Յուզողութեամբ կազմուած Սերժ Սարգսեանին ուղեկցում էին հայ եւ ռուս ժողովուրդների հոգեւոր առաջնորդները, սակայն պետական քիչ թէ շատ աչքի ընկնող այլեր՝ ռուսական կողմից չկային: Սերժ Սարգսեանը բաւական անտրամադիր էր երեւում. հաւանաբար, մոսկովեան սառնութիւնը նրա համար անսպասելի է եղել: Հայկական եկեղեցու բացումը անշուշտ իրադարձութիւն էր Մոսկուայի եւ ընդհանրապէս Ռուսաստանի հայ համայնքի կեանքում:

## Առանց Ռուսաստանի դժուար կը լինի

Ծառունակուած էջ 1-էն

սաստանի հետ Հայաստանի համագործակցութեան ամենակարեւոր ուղղութիւնը ռազմական ու համագործակցութիւնն է, յատկապէս որ, Հայաստանը ունի Ատրպէյճանի եւ Թուրքիոյ նման հարեւաններ: Նախարարը նաեւ աւելցուց, որ 2010 -ին Ռուսաստանի եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարներուն միջեւ ստորագրուած է համաձայնագիրը, որու համաձայն Ռուսաստանը պարտաւորուած է ապահովել Հայաստանի Հանրապետութեան անվտանգութիւնը ամբողջութեամբ:

«Որովհետեւ նոյն մեր հարեւանների արդէն իսկ այն ժամանակահատուածի պաշտպանական կարողութիւնները հետզհետէ վերածուած են յարձակողական կարողութիւնների, եւ այդ առումով առանց Ռուսաստանի Դաշնութեան մեր անվտանգութեան ապահովումը չափազանց դժուար կը լինի, եթէ միայն Ատրպէյճանը լինէր,

մենք խնդիր չունէինք», - ըսաւ նախարարը:

Օհանեան յայտնեց, որ Ռուսաստանի հետ կնքուած ռազմավարական գործընկերութեան համաձայնագիրը երկարաժամկէտ է եւ միացեալ զօրախումբի կազմով եւ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան համակարգէն ներս կ'իրականացուին միատեղ անվտանգութեան ապահովումը:

«Արդէն երկար տարիներ իրականացուած է ժամանակակից եւ համատեղելի սպառնալուծեան մատակարարումը Հայաստան, որպէսզի մենք կարողանանք տարածաշրջանում համապատասխան հաւասարակշռութիւն պահպանենք, եւ այն շարունակելի է լինելու, եւ այդ խնդիրներում ներառուած են նաեւ հրթիռային համակարգերը, որոնց ուղղութեամբ մենք այսօր բանակցութիւններ եւ համապատասխան աշխատանքներ ենք տանում», - ըսաւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան:

Ձեր Ծանուցումները Կատահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Massis2@earthlink.net

# ԹԱԼԻՇ ԽՄԲԱԳՐԻ՝ «ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՊԵՐԸ»՝ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱՏՐՊԵՅՃԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 12-ին Բաքուի դատարանում կայացել է «Թուլիշի սյաղո»՝ «Թալիշի ձայն» թերթի գլխավոր խմբագիր Հիլալ կամ Նիլալ Մամեդովի դատավարության հերթական դատական նիստը: Ի տարբերություն նախորդների՝ այս մեկն անցել է բավականին լարուած իրավիճակում:

Խնդիրը դատախազ Թուրալ Յուսուֆովի բողոքունջ էլույթն էր:

Վերջինս նախ պնդեց, որ Մամեդովին մեղադրանքներ ներկայացրեցն պետական դատախազության, միջխնդրական հակամարտություն սերմանելու եւ թմրանյութերի ապօրինի վաճառքի յօդուածներով: Դատախազի խօսքերով՝ դեռեւս 1992-ին իրանական յատուկ ծառայություններն իբր վարձել էին Մամեդովին, որը ստանձնել էր «Ատրպեյջանի տարածքային ամբողջականության ու անկախության ղեկավար» գործելու պարտավորությունը:

Նշենք, որ «Թուրան» գործակալության լրագրողների վկայությունները՝ դատախազի խօսքերն ուղեկցում էին դահլիճում ներկայանալիս բուռն առարկություններով եւ բացականչություններով՝ «Դատադրանք է, դա սուտ է»:

Ըստ աղբյուրի՝ ներկայների համբերության բաժակը լցուցեց, երբ դատախազը բառացիորեն մեղադրեց Մամեդովին «Ռուսաստանի հայկական համայնքի հետ սերտ կապեր հաստատելու ու նրանց աջակցելու» մէջ: Դահլիճում ներկայները ոտքի կանգնեցին ու սկսեցին բացականչություններով լիզեցնել «Արցախեան պատերազմում Ատրպեյջանի անկախության համար իրենց կեանքը տուած թալիշներին»՝ հաւատարման ելով, որ Մամեդովին մեղադրում եմ միմիայն իր ազգային պատկանելության համար:

Դահլիճի բուռն արձագանքից յետոյ դատախազը հարկադրուած եղաւ անյայտ լքել նիստը, ապա նրան հետեւեցին դատաւորները: Ներկայներին եւս խնդրեցին որոշ ժամանակով հեռանալ դահլիճից: Այնուհետեւ դատաւորները վերադարձան, ներկայներին հետ կանչեցին՝ վկայելով, որ նրանք ունենորեն ընդամենը դատախազի ելույթը, իսկ որոշումն իրենք են կայացնելու: Դահլիճը պահանջեց, որպէսզի հանուի «հայերի հետ առնչուելու հետ կապուած հարցը»: Դատաւորները տեղի տուե-

ցին՝ խոստանալով, որ հայերի հետ կապեր ունենալու հարցն այլեւս չի բարձրացուի:

Յիշեցնենք, որ Հիլալ Մամեդովին ձերբակալել են 2012-ի Յունիսի 21-ին՝ իբր թմրանյութեր պահելու մեղադրանքով: 2013-ի Յունուարի 9-ին սկսուել է վերջինիս փակ դատավարությունը, որտեղ թալիշ խմբագրի դէմ ցուցմունք տուող վկաները հրաժարուել են իրենց բառերից, իսկ Մամեդովի հարազատներն ու փաստաբանները պարբերաբար ենթարկուել են ճնշումների եւ հետապնդման:

Այժմ անդրադառնանք հայերի հետ առնչություն ունենալու հարցին: Նախ մեզ՝ հայերիս համար, առանձնապէս որեւէ նշանակություն չունի՝ կը մեղադրեն Մամեդովին հայերի հետ կապեր ստեղծելու մէջ, թէ ոչ, ինչպէս եւ մեծ հաշուով նշանակություն չունի Մամեդովի պատասխանը: Այնուհանդերձ, վաղուց արդէն գաղտնիք է, որ հայերն ու թալիշները որոշ հիմնականում՝ գիտական ոլորտներում, համագործակցում են: Աւելին, թալիշ գիտնականները բազմիցս եղել են ու դեռ կը լինեն Հայաստանում: Մասնաւորապէս, թալիշ յայտնի գիտնական, հասարակական-քաղաքական գործիչ Ֆահրադդին Աբուսոլթան մշտապէս բարեկամական յարաբերություններ է ունեցել հայերի հետ, համագործակցել հայ գիտնականների հետ, բազմիցս հարցազրոյցներով հանդէս եկել հայկական լրատուամիջոցներում, ներկայ եղել Երեւանի գիտաժողովին: Հայկական կայքերին տուած հարցազրոյցում Աբուսոլթան դրական է արձագանքել Արցախի Շուշի քաղաքից ընթացիկ տարուայ Մարտի 20-ից հեռարձակուող թալիշական ռադիոյի մասին՝ ընդգծելով, որ թալիշները մեծ մասը ոգեւորություններ է ընդունել այս նախաձեռնությունը: Իր հերթին, թալիշ-Մուղանեան հանրապետության առաջնորդ, նախագահ, մտաւորական, ռազմական ու քաղաքական գործիչ Ալաքրամ Գուլամատովը Շուշիից հեռարձակուող «Թալիշական ռադիո»-ի եթերում ողջունել է ռադիոյի նախագիծը՝ շնորհակալութիւն յայտնելով հայերին ու ցանկութիւն յայտնելով ժամանել Հայաստան:

Շաբ.ք էջ 19

# ԹԵՔԱԼԻ Ի ԳՆՈՒՊՈՒՄԸ ԻՆՉՈՒՄ Է ՀԵՏԱՔՐՔՐԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԵՌՈՒՍԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Պատճառը Ատրպեյջանի նախագահական ընտրություններն են:

Սեպտեմբերի 14-ին Վրաստանի Մաունթուլի շրջանի ատրպեյջանաբնակ թեքալի գիւղում կայացան հասարակական լուծումներ: «Թեքալիի գործընթացը որպէս հարաւային կովկասում հակամարտությունների լուծման սոցիալական մոդել», «Հարակովկասեան շուկայ» թեմաներով կայացան քննարկումներ, «ազատ միկրոֆոն» ընթացակարգով քննարկուեց Մաունթուլի շրջանի ատրպեյջանաբնակ Բուրմա գիւղի բնակիչ Ալլահվերդի Փելենգովի հետ կապուած խնդիրը, ներկայացուցին հանդիպման մասնակիցներ Պարոյր Հայրիկեանի «Դէպի բացարձակ ժողովրդավարութեան ճանապարհին» եւ ատրպեյջանցի գրող Սեյմուր Բայջանի «Գուգարք» գրքերը:

Թեքալի գիւղում հայ վրացի եւ ատրպեյջանցի լրագրողների, հասարակական գործիչների, Յերկրների բնակիչների հանդիպումները մի քանի տարի շարունակուած են, սակայն առաջին անգամ այն լուսաբանելու էին էկել Ատրպեյջանի «AZ TV» եւ «ATV» հեռուստաընկերությունների թղթակցական խմբերը: Հանդիպման ատրպեյջանցի մասնակիցներին հարցրեցինք, թէ ինչն է պատճառը, որ ատրպեյջանական հեռուստաընկերությունները հետաքրքրութիւն են ցուցաբերել այս հանդիպման նկատմամբ: Նրանք մեզ ոչ պաշտօնապէս յայտնեցին, որ պատճառը Ատրպեյջանում Հոկտեմբերին կայանալիք նախագահական ընտրություններն են:

Վրաստանի ատրպեյջանցիները ֆորումի ղեկավար Ջեմֆիրա Արիմբեկովան, Սադախլոյի բնակիչ Սաբիր Մեհթին, Սադախլոյի եւս մէկ բնակիչ անդրադառնալով Սադախլոյի յարակից ատրպեյջանական Բուրմա գիւղի բնակիչ Ալլահվերդի Փելենգովի (վերջինս մեղադրուած է Օգոստոսի 20-ին հայ-վրացական սահմանը անօրինական խախտելու մէջ եւ ներկայումս անազատութեան մէջ է Հայաստանում-Ո.Ս.) գործին, մեղադրեցին հայ սահմանապահներին, ովքեր խորանում են վրացական տարածքի մէջ, յայտարարեցին, թէ Հարաւային կովկասի երկրների անկախանալուց յետոյ

տեղի է ունենում Հայաստանի կողմից Վրաստանի տարածքի գաւթում, ասացին, որ Սադախլոյի եւ յարակից գիւղերի բնակիչները տուժել են հայ սահմանապահների գործողություններից:

Խաղաղար նախաձեռնությունների հարակովկասեան կենտրոնի տնօրէն Գէորգի Վանեանն ասաց, որ դեռեւս 2011թ. իրենց կողմից Նոյեմբերեան քաղաքում հայ-վրացական սահմանի ղեմարկացիային նուիրուած քննարկում է կայացել, որ ինքը ակտիւորէն հետաքրքրուած է Ալլահվերդի Փելենգովի վիճակով: Տողերիս հեղինակը՝ «Առաւօտի» թղթակիցը իր ելույթում ասաց, որ Թեքալիի գործընթացում տիրում է հանդուրժողականութեան մթնոլորտ, որին յարիր չէին ատրպեյջանցիների ելույթները: Նաեւ հարց նշեցրինք, թէ ինչպէս են ատրպեյջանցի բանախօսները յայտարարում հայ սահմանապահների կողմից սահմանի խախտման մասին, եթէ սահմանագիծը դեռ որոշուած չէ, նաեւ նշեցինք փաստեր, երբ վրացի սահմանապահներն են խախտել սահմանը: Մենք կարծիք յայտնեցինք, որ Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունները պէտք է արագացնեն հայ-վրացական սահմանագծման աւարտը: Նաեւ չիշեցրինք, որ սահմանագծման խնդիրներ կան նաեւ Ատրպեյջանի եւ Վրաստանի միջեւ, օրինակ՝ երկու երկրների սահմանին գտնուող Դալիթ Գարեջիի վանական համալիրի պատկանելիութեան հարցը: Հայաստանի գրողների միութեան Տաւուշի մարզային մասնաճիւղի ղեկավար Սամուէլ Բեգլարեանը իր ելույթում տարօրինակ համարեց, որ ատրպեյջանցիներն են հանդէս գալիս որպէս Վրաստանի տարածքային ամբողջականութեան պաշտպաններ, իսկ Վրաստանի կառավարությունը նման խնդիր չի տեսնում: Ս. Բեգլարեանը նաեւ տարակուսանք յայտնեց, թէ ինչպէս է փոքրիկ Հայաստանը կարողանում գաւթել հարեւան, տարածքով եւ բնակչութեամբ աւելի մեծ երկրների տարածքները: Ուշագրաւ է, որ Սադախլոյի ներկայացուցիչները եւ Ջեմֆիրա Արիմբեկովան իրենց ելույթներն աւարտելով՝ լքել էին հանդիպման տարածքը, այդպէս էլ չլսելով հայ մասնակիցների խօսքը:

[www.massispost.com](http://www.massispost.com)  
daily news updates

<b>Bedros S. Maronian</b> <b>818/500-9585</b>		<b>Siamanto B. Maronian</b> <b>818/269-0909</b>	
<b>SERVING THE COMMUNITY SINCE 1975</b> <i>More locations and more ways to service your insurance and financial needs</i>			
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101	
<ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>	
 <b>A.B.A. INSURANCE SERVICES</b>			
			
<b>Insurance coverage can help you financially!</b> <b>Ապահովագրութիւնը ԱՕհրաժեղտ է</b>			
<i>Coverage &amp; Protection should be on the top of your priority list.</i>			
			
<b>Seniors 65 &amp; Up</b> Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits			

ԲԱԶՍԱԲԵԻԵՌ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ՍԵՐՁԱԲՈՐ ԱՐԵԻԵԼԲԸ ԵՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ »ՎԱԶՈՂ ՏՈՂԻ« ՌԵԺԻՍՈՎ

Ցանկացած պաշտպանութեան նախարարի, որը նախագահին խորհուրդ կը տայ խոշոր ամերիկեան ցամաքային ուժեր ուղարկել Ասիա կամ Մերձաւոր Արեւելք, անհրաժեշտ է ուղարկել զննման հոգեբանի մօտ: Ռոբերտ Կէյթս, ԱՄՆ պաշտպանութեան նախարար 2006-2011թթ.

**Գագիկ Յարութեան**  
**«Նորավանդ» գիտակրթական**  
**հիմնադրամի տնօրէն**

Այսօր դժուար է վիճել այն փաստի հետ, որ անցեալ դարավերջին միաբեւեռ գերիշխանութեան հաստատումից յետոյ սկսուած ազդեցութեան ոլորտները համատարած զաւթումը փոխակերպում է բազմավեկտոր չամառ դիմակայութեան, որն ընթանում է բազմաբեւեռ աշխարհակարգի նոր եւ աւելի քան հեղեղեղ կանոններով, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապէս առանց դրանց: Այս նոր իրավիճակն առաջին հերթին պայմանաւորուած է նրանով, որ Միացեալ Նահանգները, համաշխարհային առաջատար մնալով, դարձեալ է հեզեմոն լինելուց: Հետաքրքիր է, որ ոմանք կանխատեսում են անզամ գերտէրութեան փլուզումը, եւ այդ կանխատեսողների մէջ միայն Ռեյչանի վարչակազմի ֆինանսների փոխնախարար, փոքր-ինչ օրինոջ Փոլ Կրեյց Ռոբերտսը կամ էլ «Թրենդների հետազօտութիւնների ինստիտուտի» տնօրէն պերալդ Սելենտեն չեն, այլ նաեւ հեղինակաւոր համալսարանական պրոֆեսորներ: Անհանգստացնող են նաեւ այլախոհներ պ. Ասանժի եւ Էդ. Մնոուդենի հետապնդումները, որոնք հանդէս են գալիս տեղեկատուական տոտալ վերահսկողութեան դէմ: Այդ գործողութիւններն (ինչպէս նաեւ շարքային Բ. Մենինգի «խղճի բանտարկեալի» կարգավիճակ ստանալը) աշխարհով մէկ ակտուալացրին պորձ Օրոուելի հանձարեղ ստեղծագործութիւնները:

Բայց եթէ հեռանանք կանխատեսումներից եւ ընդունենք Ֆարիդ Չաքարիայի The post-American World-ի աւելի իրատեսական եզրաբանութիւնը, ապա աշխարհաքաղաքական այլ դերակատարների հզօրացումն էսպէս փոխել եւ շարունակում է փոխել ուժերի դասակարգութիւնը համաշխարհային ասպարէզում: Այս համատեքստում տեղի ունեցող գործընթացները նկատելիօրէն իջեցրել են գլոբալ անվտանգութեան ընդհանուր մակարդակը, եւ դա, առաջին հերթին, վերաբերում է միջուկային ուղղորտին: Նկատուող միտումը տարբերում է փորձագէտների՝ նախկինում ունեցած այն ենթադրութիւններից, թէ բազմաբեւեռութիւնը գլոբալ մակարդակով յանգեցնում է համեմատական կայունութեան, ինչպիսին էր այն, օրինակ, երկբեւեռ Սառը պատերազմի դարաշրջանում: Սակայն չի կարելի բացառել, որ բազմակենտրոն աշխարհի կայացման «անցումային շրջանից» յետոյ կնքուի մի նոր վեստֆալեան պայմանագիր եւ յարաբերական կայունութիւն հաստատուի:

«Նոր ժամանակների» տրամաբանութեան առաւել ցայտուն արտայայտութիւնն են Եւրասիայի մի ընդարձակ հատուածում՝ «Նոր Մերձաւոր Արեւելքում» (Մարդկութից մինչեւ Փաքիստան) ընթացող զարգացումները: Յայտնի է, որ ամերիկացիները կրճատում են իրենց ուղղափառ ներկայութիւնն այս

տարածաշրջանում՝ զօրքերը դուրս բերելով իրաքից եւ Աֆղանստանից, ինչը կապուած է տնտեսական ռեսուրսների անբաւարարութեան հետ: Միեւնոյն ժամանակ, ռազմական նահանջն ուղեկցում է եւրոպական եւ տարածաշրջանային գործընկերների աշխուժացմամբ եւ քաղաքականութեան վարման աւանդական, իսկ աւելի յաճախ՝ ոչ աւանդական մեթոդների սաստկացմամբ: Բոլոր պարագաներում պէտք է փաստել, որ ռազմաքաղաքական վարչիվերումների արդիւնքում մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքը յայտնուել է ապակայուն նացած իրավիճակում: Աւելին, այդ զարգացումները յանգեցրել են խոշոր հումանիտար աղէտի՝ ցեղասպանութեան:

Այսօր կարելի է հանդիպել «նոր ժամանակներում» ընթացող քաղաքական գործընթացների խիստ տարբերակ մեկնաբանութիւնների: Կարծում ենք, որ նման բազմազանութիւնը լոկ նպաստում է իրողութիւնների աւելի համարժէք ընկալմանը, ուստիեւ ներկայացնենք նաեւ այդ հիմնախնդիրների վերաբերեալ մեր տեսակաւոր: Սակայն այս հարցերի քիչ թէ շատ որոշակի քննարկման համար փորձենք հակիրճ ներկայացնել բազմաբեւեռ աշխարհի որոշ բնութագրական գծերը:

«Այդ բազմաբեւեռ աշխարհը»

Քաղաքական եզրերի իմաստը ժամանակի ընթացքում փոփոխութիւններ է կրում, եւ դա վերաբերում է նաեւ «բազմաբեւեռութեանը»: Այս հասկացութեան կոնտենտն այսօր նկատելիօրէն ընդլայնուել է առաջին հերթին այն պատճառով, որ «բազմա» («մուլտի») բառի մէջ, պայմանականօրէն ասած, «մտել» են ոչ միայն ազգային պետութիւնները, այլեւ ոչ պետական կառույցները (այս նոր աշխարհն առաւել պատկերաւոր նկարագրել է, թերեւս, Պարագ Հաննան): Վերջինները պայմանականօրէն կարելի է բաժանել հետեւեալ կարգերի:

Համաշխարհային տնտեսութիւնում աճել է տրանսազգային կորպորացիաների (ՏԱԿ) դերը, որոնց ֆինանսական եւ կազմակերպչական հնարաւորութիւնները համադրելի են, իսկ երբեմն էլ գերազանցում են զարգացած պետութիւններին: Յայտնի է, որ ՏԱԿ-երի մի մասն ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն կապակցուած է այս կամ այն երկրի հետ, սակայն դրանց մի մասն արդէն գործում է բաւական անկախ՝ ելնելով բացառապէս իր շահերից:

Ըստ շուէյցարացի հետազօտողների՝ ՏԱԿ-երի միջուկն են կազմում 147 կորպորացիաներ, որոնք, նկատի ունենալով նրանց գործընկերներին եւ մասնաճիւղերը, իրենց ձեռքում են պահում համաշխարհային ՀՆԱ 60%-ը: Յատկանշական է, որ այս կոնսորցիումում պարահանդէսը ղեկավարում են ոչ թէ արտադրական, այլ ֆինանսական կորպորացիաները՝ Barclays, JP Morgan Chase, Merrill Lynch & Co Inc եւ այլն: Նման

իրավիճակում զարմանալի է, որ «գերՏԱԿ»-ն ի գօրու է իր պայմանները թելադրել ազգային պետութիւնների կառավարութիւններին: «Կառավարութիւն-ֆինանսական ոլորտ» յարաբերութիւնների համակարգում տեղի ունեցող էւոլիուցիան լիովին համապատասխանում է անգլիացի սոցիոլոգ Քոլին Քրաուչի «պոստդեմոկրատիկ հասարակութեան» հայեցակարգին, համաձայն որի՝ պետական կառույցներում գերիշխում է օլիգարխիա, իսկ արեւմտեան հասարակութիւններում տեղի է ունենում ժողովրդավարական նորմերի կազմալուծում:

Վերջին տասնամեակներում էսպէս աւելացել է միջազգային ոչ կառավարական կազմակերպութիւնների, կամ այլ խօսքերով՝ ՀԿ-ների թիւը (հիմնականում «տեղերում»՝ դրանց բազմաանալու արդիւնքում): Մեծացել է նաեւ ցանցային ռեժիմում գործող այդ կազմակերպութիւնների ազդեցութիւնը. չիչենք, որ որոշ ՀԿ-ների ուղղակի աջակցութեամբ են իրագործուել, օրինակ, «գոնաւոր յեղափոխութիւնները» նախկին խորհրդային հանրապետութիւններում եւ Մերձաւոր Արեւելքում: Աւելի վաղ ՀԿ-ները, ինչպէս եւ ՏԱԿ-երը, բացառապէս ընկալում էին որպէս գործիքաւոր խոշոր տէրութիւնների քաղաքական գինանոցում: Դա որոշ երկրների (մասնաւորապէս՝ Ռուսաստանին) դրդեց օրէնսդրօրէն սահմանափակել նման ՀԿ-ների ազդեցութիւնը ներքին կեանքում: Նշենք, որ նմանօրինակ գործողութիւնները հնարաւոր էին դարձել սոսկ բազմաբեւեռութեան շնորհիւ, քանի որ աւելի վաղ ՀԿ-ները «սրբազան կովերի» կարգավիճակ ունէին եւ անգամ քննադատութիւնը նրանց հասցէին ոտնձգութիւն էր համարում ժողովրդավարութեան հիմքերի դէմ:

Սակայն ժամանակի ընթացքում ՀԿ-ները սկսեցին ձեւափոխուել: Տեղեկատուական հոսքերի խճանկարից այն տպաւորութիւնն է ստեղծուած, թէ «իրենց տեղն ամրացրած» որոշ ՀԿ-ներ (ոչ վերջին հերթին՝ գաղափարախօսական ուղղուածութեան) սկսեցին աւելի ինքնուրոյն գործել: Այսօր դրանք կատարում են ոչ միայն որոշակի պետական կառույցների պատուէրները, այլեւ սպասարկում են քաղաքական ու ֆինանսական խմբակաւորումների (օրինակ, այդ նոյն ՏԱԿ-երին), ինչպէս իրենց երկրի ներսում, այնպէս էլ նրանից դուրս, իսկ յաճախ էլ գործում են ինքնուրոյն, ըստ իրենց հայեցողութեան: Դրան նպաստում է ՀԿ-ների գաղափարականացումը՝ որոնց մի մասը հանդիսանում է Մ. Բետտի եւ Բ. Քոլչնի հայեցակարգի հետեւորդը, համաձայն որի՝ անհրաժեշտ է «պաշտպանել մարդու իրաւունքները՝ առանց հաշուի առնելու ազգային ինքնիշխանութիւնը» (այս թեզը 2005-ին ՄԱԿ-ի կողմից ընդունուեց որպէս միջազգային իրաւաբանական նորմ): Յայտնի է, որ ցանկացած գաղափարի բացարձակացումը յղի է անկանխատեսելի հետեւանքներով, եւ ՀԿ-ների գործունէութեան արդիւնքները Մերձաւոր Արեւելքում դրա վառ պայցոյցն են:

Ազդեցիկ ոչ կառավարական կազմակերպութիւնների կարգին պէտք է դասել աւանդական եւ

համեմատաբար վերջերս կազմաւորուած կրօնադաւանաբանական (յաճախ՝ որպէս տարբեր տեսակի աղանդներ) կառույցները: Նման կառույցների (որոնք վաղուց օգտագործում են, պայմանականօրէն ասած, ցանցային կառավարման մեթոդները) դերն անշեղօրէն աճում է ոչ միայն հանրային կեանքում, այլեւ միջազգային քաղաքականութիւնում: Մասնաւորապէս, Մերձաւոր Արեւելքում քաղաքական դիմակայութիւնն ընդունեց դաժան առճակատման ձեւ սունիականութեան եւ շիականութեան տարբեր ճիւղերի ներկայացուցիչների, իսլամիստների եւ հակաիսլամիստների միջեւ, եւ անհանդուրժողականութեան այս ֆոնին տարածաշրջանի քրիստոնէական համայնքները յայտնուեցին վերացման շեմին:

Տեղեկատուական բազմափուլ յեղափոխութեան դարաշրջանում ազդեցիկ ոչ պետական դերակատարների խմբին պէտք է դասել նաեւ զանգուածային խոշոր լրատուամիջոցները, ինտերնետ կորպորացիաները եւ այլն: Յատուկ նշանակութիւն են ձեռք բերել վիրտուալ սոցիալական ցանցերը, որոնք, մասնաւորապէս, կարեւոր դեր խաղացին մերձաւոր արեւելեան յեղափոխութիւններում: Երկրապագի համատարած «ֆեյսբուքացումը» լուրջ ազդեցութիւն է գործում մեր մոլորակի բոլոր երկրների հասարակութիւնների վրայ: Նշենք, որ տեղեկատուական ոլորտում նոյնպէս տեղի է ունենում ռեսուրսների մոնոպոլացում եւ, ասենք, տպագիր ՁԼՄ-ի հանդէպ վերահսկողութիւնը կենտրոնացած է հինգ մեղիահակներ ձեռքում: Այդ կառույցները գլոբալ տեղեկատուական քաղաքականութիւն են վարում, որը RAND-ի փորձագէտներն անուանում են անգամ ոչ թէ որպէս քաղաքականութեանն ուղեկցող եւ այն ուժեղացնող գործընթաց, այլ առանձնացնում են որպէս ինքնուրոյն ժանր՝ նեոքաղաքականութիւն՝ լիովին համապատասխան երկրորդ սերնդի տեղեկատուական պատերազմների հայեցակարգին:

Տեղեկատուական հոսքերն այսօր աւելի, քան երբեք, ձեւաւորում են ողջ համաշխարհային հանրութեան արժեհամակարգն ու մենթալիտետը: Զարմանալի է, որ ոլորտի խոշոր դերակատարները հետապնդում են նաեւ սեփական շահերը եւ անտեսում պետական ու մասնաւոր հանրային շահերը: Յատկանշական է, որ աւելի վաղ տեղեկատուական հարթութիւնում լիովին գերիշխում էին արեւմտեան լրատուամիջոցները: Սակայն, շնորհիւ «բազմաբեւեռ միտումների», այժմ դրանց հետ փորձում են մրցակցել այլ երկրների, առաջին հերթին՝ չինական եւ ռուսական լրատուամիջոցները: Արդիւնքում՝ փոքր-ինչ փոխուել է անգամ գլոբալ «նորալեզուն»՝ «=>2>07»-ը. օրինակ, Միւրիայի վերաբերեալ մեկնաբանութիւններում «ընդդիմադիրներ», ծայրահեղ դէպքում՝ «ապստամբներ» կլիշէի կողքին սկսել են ի յայտ գալ նաեւ աւելի համարժէք մակդիրներ. ասենք՝ «գինեալներ» եւ «վարձկաններ»:

Եւ վերջապէս, միջազգային զարգացումներում էսպէս աճել է ահաբեկչական եւ յանցաւոր այլ

# ԻՆՉ Է ՅԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԸ ԱՌԱՋԱՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, ՕԲՄՅՈՐԻ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին այսօր աշխարհով մէկ մարտահրաւերներու, հիմնախնդիրներու, վարչական, բարոյական հարցերու խաչմերուկին վրան է: Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Սրբազանի բանաձեւումով՝ «Մեր ազգն փորձութիւններով է գնում: Մեր եկեղեցին էլ իր փորձութիւններով է գնում»: Ո՞ր ուղղութեամբ երթալ, ի՞նչ առաջնահերթութիւն տալ խնդիրներուն եւ անոնց վերաբերող լուծումներուն, նման բազմաթիւ հարցեր վստահաբար անքուն պիտի պահեն յառաջիկայ Եպիսկոպոսական Ժողովին առնուազն կարգ մը անդամները:

Ինչպէս պատմութեան ընթացքին՝ սկսեալ Ծրբ դարու Շահապիւ վանի ժողովէն, Հայց. Եկեղեցու Եպիսկոպոսական Ժողովներ գումարուած են եկեղեցու կեանքին մէջ դաւանական, վարդապետական եւ աստուածաբանական հարցեր քննարկելու ինչպէս նաեւ կարգ ու կանոն հաստատելու նպատակով: Եպիսկոպոսական Ժողովի արդիւնքներն ու եզրակացութիւնները կը ներկայացուին Կաթողիկոսին՝ վաւերացման համար կամ ալ Ազգային Եկեղեցական Ժողովին՝ (Եկեղեցու բարձրագոյն օրէնսդիր եւ վարչական մարմին) հաւանութեան համար: Անցնող հարիւր տարուան ընթացքին Եպիսկոպոսական Ժողովը պաշտօնապէս միայն երեք անգամ գումարուած է: Վազգէն Ա. Կաթողիկոսի հրաւերով 1956 Հոկտեմբերին գումարուած Ժողովին որոշուած էր որ «տարին գոնէ մէկ անգամ գումարուել» Եպիսկոպոսական Ժողովը, բայց ինչ-ինչ պատճառներով այդպէս չեղաւ: Յաջորդը 1969ին էր ու անկէ ետք ո՛չ պաշտօնական Ժողովներ գումարուեցան (միայն «խորհրդակցական»), ո՛չ ալ եկեղեցիին ու հաւատացեալները յուզող հրատապ հարցեր քննարկուեցան: Ուշագաւ երեւոյթ է՝ որ ներկայիս Հայց. Եկեղեցու (Էջմիածինը եւ Անթիլիասը գումարած) 76 եպիսկոպոսներէն հազիւ երկու-երեքը նախապէս մասնակից եղած է որեւէ պաշտօնական եւ լիարժէք Եպիսկոպոսական Ժողովի:

Եկեղեցու ներկայ վերիվայրումները յատուկ նորութիւն մը չէ: Եկեղեցին ընդհանրապէս եւ եկեղեցու նուիրապետականութիւնը յատկապէս՝ անցնող առնուազն հարիւր տարուան ընթացքին բազմաթիւ խորունկ տագնապներ տեսած են՝ Կոստանդնուպոլսէն մինչեւ Էջմիածին, 1950ականներու Անթիլիասէջմիածին «տագնապ»էն մինչեւ 1960ականներու եւ 1980ականներու Երուսաղէմի տագնապները: Բայց ի տարբերութիւն անցեալին երբ արտաքին դրդապատճառները աւելի շեշտակի դեր եւ ներգործութիւն ունէին տագնապներու դրսեւորման վրայ, այսօր Եկեղեցին անյաղթահարելի խնդիրներ չ'ունի: Բոլոր ներքին հարցերը լուծելի են: Հաստատութիւններու կեանքին մէջ որեւէ լուրջ «տագնապ» յետաձգուած կամ չլուծուած խնդիրներու կուտակումն է: Այսօր նման կուտակումներու «տոմարը» լուրջ եւ հետեւողական քննարկումներու եւ լուծումներու առաջարկներ կը պահանջէ:

Իւրաքանչիւր կազմակերպութեան կեանքին մէջ պահեր կան,

երբ անհրաժեշտ է յետադարձ հայեացք մը նետել որդեգրուած արժէքներուն վրայ ու խորհիլ անոնց առաջադրած պահանջներուն մասին: Այսօր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, որպէս կազմակերպութիւն, անյետաձգելիօրէն պէտք է յստակացնէ այժմէական հասարակական պայմաններու համահունչ իր առաքելութիւնն ու ուղենիշները որպէսզի նորովի ծառայէ իրեն վստահուած ժողովուրդին:

Եպիսկոպոսական Ժողովին ամենամանրաժեշտ քայլերէն մէկը պէտք է ըլլայ քննարկել, ճշդել եւ սահմանել Եկեղեցու «առաքելութեան առանցքը» այս արագընթաց եւ համաշխարհայնացուած 21-րդ դարու յառաջիկայ տասնամեակներուն:

Անշուշտ Եկեղեցու առաքելութիւնը երկու հազար տարի առաջ ճշտուած էր առաքելներու շրջանին Քրիստոսի հիմնական պատգամներուն եւ Աւետարանին հիման վրայ (օրինակ՝ ՂՈՒԿ. 4:16-20, ՄԱՏԹ.0 28:19-20), բայց այսօր մեծաւ մասամբ ո՛չ եկեղեցականները ո՛չ ալ աշխարհականները յստակ գաղափար կամ միահամուռ ըմբռնում ունին թէ ի՞նչպիսի սկզբունքներ, ուղենիշներ, նպատակներ, արժէքներ եւ հեռանկարներ կը ներարկէ Հայ Եկեղեցու առաքելութիւնը: Անշուշտ Եկեղեցին դարերէն եկող յստակ առաքելութիւն ունի, բայց ի՞նչպէս պէտք է իրականացնել այս առաքելութիւնը: Ի՞նչպէս այդ առաքելութիւնը հաղորդական ու իմաստալից դարձնել Երեւանի, Գիւմրիի, կամ Շուշիի, կամ Պէյրութի, Ապոն Տապիի, Փարիզի, Ամսթերտամի, կամ Լոս Անճըլըսի, Թորոնթոյի, Գորտոպայի, Մելպուրնի կամ Հոնկ Գոնգի մէջ ապրող Հայուն համար:

Ինչպէս որեւէ աշխարհիկ կամ կրօնական կազմակերպութեան կեանքին մէջ՝ առաքելութեան առանցքի յստակեցումը արժէքներու ամփոփագիր մըն է (ինչպէս ուղղափառ հաւատքի պարագային Նիկիական Հանգանակը): Այնտեղ կ'ամրագրուին այնպիսի սկզբունքներ, որոնց ընդմէջէն տուեալ կազմակերպութիւնը իր հունաւորումը կը գտնէ եւ ուր կը սահմանուին այնպիսի չափանիշներ, որոնց համաձայն կը գնահատուի կազմակերպութիւնը իր հետեւորդներուն, ինչպէս նաեւ ուրիշներուն կողմէ: Նման յստակ առաքելութեան ուղեցոյց մը արդիւնաւէտ է որովհետեւ կ'օգնէ կազմակերպութեան անդամներուն՝ որպէսզի կեանքի կոչեն ամրագրուած արժէքները: Սա որեւէ կազմակերպութեան վարչապետը պէտք է ըլլայ, անոր հիմնաքարը՝ բոլոր առումներով:

Հայ Եկեղեցու ժամանակակից առաքելութեան կարեւորագոյն արժէքներու յստակեցումը եկեղեցու սպասաւորներուն պիտի տրամադրէ հիմնական ուղենիշ մը, նպատակաուղղուած աշխատանքի եւ հոգեւոր ասպարէզի «քարտէս» մը որուն հիման վրայ կարելի պիտի ըլլայ Եկեղեցու իսկական նպատակներուն ծառայել եւ որուն շուրջ պիտի համախմբուին հոգեւորականներն ու աշխարհական սպասաւորները: Առաքելութեան եւ արժէքներու յստակեցումը կենսականութիւն կ'երաշխաւորէ եւ կ'ամրապնդէ ժողովուրդի հարազատութիւնն ու վստահութիւնը

իրենց «հոգիի ծննդավայրին» նկատմամբ:

Անիմաստ է խօսիլ Հայ Եկեղեցու «ազգային» կամ «ընկերամշակութային» ծառայութեան կարեւորութեան մասին, առանց առաջնորդելու անոր հիմնական հոգեւոր եւ կրօնա-բարոյական առաքելութեան սկզբունքներով: Որքան ալ ընդունինք որ եկեղեցին նաեւ ունի «աշխարհիկ» կարեւորութիւն կ'արժէ ընդգծել որ՝ ինչպէս դարեր շարունակ եկեղեցու առաջնային եւ գերագոյն նպատակը հոգեւորութիւն եղած է՝ պարտականութիւն մը, եթէ ոչ «քաղցր լուծ», գորս իւրաքանչիւր հոգեւորական կ'ուխտէ իր ձեռնադրութեան որոշադիր խորհրդակատարութեան ընթացքին: (Ձեռնադրութեան Մաշտոցը բազմիցս այս կէտը կը շեշտէ):

Հաստատութիւններ որոնք իրենց հիմնադրի եւ առաջնային առաքելութեանն կը շեղին՝ ժամանակի ընթացքին կը դառնան ինքնանպատակ, իրականութենէ եւ հասարակ կեանքէն հեռացած թանձարանային կառույցներ: Այսօր եթէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ Հայ Եկեղեցին ունի «ազգային» դեր եւ կարեւորութիւն՝ ապա այդ ի՞նչով կը տարբերի կուսակցութիւններու, մշակութային, բարեգործական եւ հասարակական կազմակերպութիւններու ու կառույցներու դերէն եւ ծառայութիւններէն: Յայ-

սօր՝ եկեղեցին նման հարց ոչ քննարկած է, ոչ ալ յստակ քաղաքականութիւն ճշդած է թէ ինչ է իր «ազգային» դերը, չնայած որ հոգեւորականներուն մեծամասնութիւնը աւելի հանգիստ կը խօսի «ազգայինին» կամ լողունք դարձած «մեր հայրերու սուրբ հաւատքին» մասին, քան հասարակութիւնը մտահոգող բարոյական եւ հոգեւոր նիւթերու մասին:

Կարելի է արժէքներու նկատմամբ յարգանք ներշնչել՝ առանց զանոնք կեանքի կոչելու. սէր արժեւորել, ըսել է՝ պիտի: Արժէքները նաեւ կը ստեղծեն չափանիշեր, որոնցմով նաեւ մենք մեր գործունէութիւնը կը չափենք: Յստակ եւ տարածելի արժէքներ պէտք է ուրուազան եկեղեցու վարչական կազմակերպչական սկզբունքները՝ որպէս ուղեցոյց եկեղեցու հաւաքական գործընթացին եւ անոր դեկավար մտածողութեան:

Վերջապէս, իւրաքանչիւր եկեղեցի կենսաունակութիւնը առաջին հերթին կախուած է հաւատացեալներու ոգեւորութենէն, անոնց պատասխանատուութեան զգացումէն եւ մասնակցութիւնէն, ոչ թէ միայն եկեղեցականներու կամ աշխարհականներու փոքր խումբի մը «անօրինումներէն»: Այսօր շատ յստակ է որ կապրինք բողոքի եւ պահանջատիրական դարաշրջանի մը մէջ

Շար.ը էջ 18

Hosted by:  
  
 LUMP  
 Lark Musical Society

Renowned Pianist  
**Svetlana Navassardian**  
 Performs in the Golden State  
**1 CONCERT ONLY**

September 28, 2013, 7:30 PM  
 First United Methodist Church in Pasadena  
 500 E. Colorado Blvd.  
 Pasadena, CA 91101

**PROGRAM**

SOLO CONCERT PROGRAM

Saturday, September 28, 2013, 7:30 pm  
 First United Methodist Church, Pasadena,  
 500 E. Colorado Blvd. Pasadena, CA 91101

HAYDN  
 Sonata in C Major No. 35

BRAHMS  
 Klavierstücke Op. 76

CHOPIN  
 Polonaise in C-sharp Minor Op. 26, No. 1  
 Nocturnes  
 Op. 9, No. 1 in B Minor  
 Op. 9, No. 2 in E-flat Major  
 Polonaise in A-flat Major Op. 53  
 Mazurkas  
 Op. 17, No. 2 in E Minor  
 Op. 67, No. 3 in G Major  
 Op. 67, No. 4 in A Minor  
 Op. 30, No. 3 in D-flat Major  
 Op. 17, No. 4 in A Minor

KOMITAS  
 Lullaby

MANSURIAN  
 Three Pieces for the Low Keys







# ԲԱՑԱՌԻԿ ԴԵՊԵ

**Ռ. ԿՈՐԻԻՆՍ**

Յաճախ ենք հանդիպում ես ու Երեմբը, նրան ճանաչում եմ թե՛ հրատարակչի, այստեղ Գլենդեյլում ենք մտերմացել միութենական աշխատանքների բերումով: Նա գործով մեր տունն էր եկել, զրոյցի ընթացքում այս պատմությունը արեց:

Վաղ քիմիա մրցութիւն էր, ատուար մարզիկներին խումբ էր մասնակցել: Մրցութիւն տեղի կ'ունենար այստեղ՝ Ամերիկայում, բայց պիտոս չ'իմացայ ո՞ր քաղաքում եւ ո՞ր մարզադաշտում, կարեւորն այն էր, որ ախոյանական մրցութիւն էր եւ կոփուած երիտասարդուհիներ էին մրցում, բուն պայքար էր գնում:

Նրա սկսած պատմութիւնը ինձ չի շնորհեց բազմաթիւ մրցութիւններ, մասնաւոր՝ ֆուտպոլային, որոնց ներկայ եմ գտնուել, կանչերով ու բողոքներով պաշտպանել եմ սիրած իմ բիւս եւ բուն ոգեւորութիւն եմ ապրել:

Արդարեւ գեղեցիկ է ներկայ լինել մրցութեան պայքարի, ուր ազատ ու արդար հողի վրայ ուժերն են չափուում երեւան բերելու ամենաուժեղը եւ դափնիով պսակելու նրա պարանոցը, շքանշանով զարդարելու նրա կուրծքը: Այո՛, գեղեցիկ է այն ամէնը, որ արդար մրցակցութիւն է գնում տարբեր բնագաւառներում՝ արուեստի, ուսման, մարզանքի, տնտեսութեան, քաղաքական եւ այլ մարզերում որպէսզի ի յայտ գան ամենագեղեցիկն ու ամենագործիկը, ամենաընդունակն ու ամենազիտակիցը, ամենաուժեղն ու ամենամարզուածը, ամենաչաւաւէտն ու ամենաընդունելի վասն իրախուսանքի, նորանոր նուաճումների, յաւաքողի մութեան, խաղաղ ու բարօր կեանքի՝ սիրոյ, յարգանքի եւ ծառայութեան նպատակներով:

Միտաբանութեամբ մտքերիցս խօսքս ուղղեցի Երեմբին.

-Բայց Երեմբ, դու չսասցիր, թէ ի՞նչ միջոցով ես տեղեկացել:

-Հեռուստացոյցի միջոցով, երանի մրցավայրում լինէի:

-Ինչո՞ւ եւ ի՞նչ մտադրութեամբ:

-Որպէսզի կենդանի դիտորդը լինէի այդ գարմանահրաշ զէպքին, որի նախադէպը ո՛չ լսել էի, ո՛չ էլ՝ տեսել կեանքումս:

-Հետաքրքիր է իմանալ, զէ՛հ, ինչդեմ, պատմիր:

-Ինչպէս գիտենք՝ Ամերիկան հսկայ աշխարհամաս է՝ ովկիանոսներով, ծովերով, լիճերով, ցամաքով եւ բնական հարատուութիւններով, խայտաբղէտ ժողովուրդներ են ապրում տարբեր մշակութիւններով եւ լեզուներով աշխարհի չորս ծագելից այստեղ գաղթած եւ դեռեւս գալիս են առանց կանգ առնելու:

-Սա նորութիւն չի, դու բուն նիւթին անցիր:

-Ուզում եմ ասել, որ այս Միացեալ Նահանգների բազմամիլի-

ոն ժողովուրդների աւօրեայ կեանքում հազար ու մէկ դէպքեր են պատահում՝ թէ՛ գովաբանութեան արժանի եւ թէ՛ սրտածմբիկ ու սարսափելի, ինչպէս օրինակ՝ գէնքով մտնում են դպրոց եւ անմեղ երեխաներ են սպանում, կամ «մարդ կոչեցեալը» մտորալ եւ դեռահաս աղջիկներ է առեւանգում, տաս տարի նրանց թաքցնում է բռնաբարելով եւ սեռային օգտագործման ենթարկելով, ուրիշ շատ-շատ քառնելի ու դատապարտելի արարքներ:

-Ինձ ասա՛, ուր չի պատահում, բոլոր երկրներում էլ քիչ թէ շատ կատարում են, դու այն ասա, որ քեզ հիացմունք է պատճառել:

-Շատ բարի, իւրաքանչիւր մարզիկ յաղթանակի ձգտումով էր մասնակցութիւն բերել, նրանք վազում էին տարբեր արագութեամբ ու տարածութեամբ լուրջ ու ինքնամփոփ, երբեմն հաւասարում, իմբուում էին, երբեմն էլ վազանց կատարելով, տարտղնում էին, իւրաքանչիւրի ճիգ ու ջանքն էր խոյանք դէպի յաղթանակի արտոյեանի տիրողսին արժանանալու համար: Մարզիկներն մէջ պայքարը թէ՛ ժացաւ՝ վերջին շուրջը կատարելուց յետոյ, դէպի եզրափակիչ դիժը, դէպի աւարտը համելու համար: Երկու նախակարապետների միջեւ էր գնում պայքարը մօտիկ վերջագծին, յանկարծ առաջնավագ մարզիկի ոտքը ոլորուեց եւ փուռեց գետնին, այդ պահին ի՞նչ ապշանք, նրան յաջորդող կանգ առաւ, արագ մարզիկին զրկելով վազեցրեց դէպի գծի մօտ եւ նրա ոտքը որպէս ախոյեան դրեց գծի վրայ, այսպիսով նրան հոչակելով մրցութեան չեմպիոն: Այո՛, սիրելի բարեկամ, արի ու մի՛ գարմանար այդ արարքից, եթէ այնտեղ լինէի, ես էլ պիտի միանայի հանդիսականների պանծալի կանչերին, մօտենայի, նրան գրկէի, ճակատն ու ձեռքերը համբուրէի եւ ասէի՝ դու այդ քո մարդապիտակն եւ արդարադատ արարքով ախոյեանի անունն շահեցիր, կեցցե՛ս դու:

-Իսկապէս այդպէս է եղե՞լ:

-Այն ինչ որ քեզ ասացի, իրականութիւն է, ոչ մի բառ այս կողմ կամ այն կողմ, ուղղակի ապշել էի, լի բերկրանքով պահ ապրեցի, անսահման ուրախութիւն, որ այս ուրբոտների դարում խիղճը, գութը, արդարութիւնը եւ մարդապիտական զգացումներն դեռ ապրում են մարդկանց մէջ:

-Արդարեւ քո պատմածով իմ մագերն եւս փշաքաղուեցին, նա իրաւ մարզիկի հոգեբանութիւն է ցուցաբերել, նուիրաբերութեան վեհարարք, այդպիսի մէկերը բացառիկ մարզիկ են եւ արժանի ամէն տեսակ պարզեւտրանքի:

-Այո՛, այսպիսի վսեմ մարդկանց արարքն է, որ օրինակ է ծառայում ուրիշներին ինքնամոռացութեամբ կեանքը փրկելու եւ պաշտպանելու բարոյական արժէքները:

# ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ՝ ԱՆՁՆԱՏՈՐ ՄԱՅՐ ՀՊՐԻ ԿԱՆՉԻՆ

**ԱՐԱՄ ՍԵՓԵՌՅԱՆ**

Մեզի համար անմատչելի խորհուրդ մը եղաւ Հ.Գ. Միութեան նախագահ Լեւոն Անանեանի վաղաժամ մահուան գոյժը: Անհատաւոր ու շանթահարիչ: Դեռ երէկ, այսինքն Օգոստոսին, մարդկային իր մտածումներով ու ծրագրերներով մեզի հետ էր, մինչ՝ այսօր ու վաղը, կը խօսինք իր «հանդերձեալի» ին մասին, հոգիին ու չիշատակին Յաւերժանութիւն մասին:

Հայրենի իրականութեան ծնունդն էր ան: Գրած, ստեղծագործած եւ աշխատած մի՛շտ հայրենի հողին վրայ: Գրական իր կեանքը սկիզբ էր առած բանաստեղծութեամբ, սակայն իր ողջ կուժեամբ ան արձակագիր էր ու հրատարակագիր: Յանդուգն ու յախուռն էր հայեացքով ու կեցուածքով: Առաւել՝ տասնամեակ մը ամբողջ, երբ, 1990-ական թուականներուն ԳԱՐՈՒՆ ամսագրի կեանքին վտանգ կը սպառնար, ինքն էր որ գերբնական ճիգերով կենդանի պահեց բոլորիս սիրելի «Գարուն»ը, կազմակերպչական իր ոգին սակայն, բարձրակէտ-նուաճումը արձանագրեց. երբ անցնող տասնեակու տարիներու ընթացքին իրագործեց տասնեակ մը աւելի բազմաշերտ Գրական համաժողովներու շարքեր:

Անհանդարտ ու փոթորկայոյց իր հոգին, որուն արգասիքն էին բազմաթիւ գրական-մշակութային իր նախաձեռնութիւնները եւ անոնց իրագործումները կը մնան արձանագրուած երկրային մարդու տոմարի էջերուն: Երբ ամիս մը առաջ տակաւին Գրողներու Միութեան նախագահի ծանր ու պատասխանատու նոր նստաշրջան մը կ'ընդունէր իր ուսերուն... արդեօք կը զգար իր մարմիննէն ներս յառաջացող քաղցկեղի մը նախանշանները: Մեծագո՛յն մարտահրաւէրը իր կեանքին սպառնացող: Կարմիր գիծ մը՝ ասդենականի եւ անդենականի միջեւ:

Այս պահուն՝ երբ գրի կ'առնեմ մտածումներս, հանգուցեալին Հոգեհանգստեան յատուկ ժամերն են: Հրաժեշտի եւ յարգանքի վերջին առիթ մը՝ այցելուներու համար: Ճիշդ է, իր Հոգին՝ այսինքն փոթորկոտ եւ անհանդարտ, խաղաղութիւն կը տենչար... բայց ո՛չ այսպէս հապճեպօրէն պարտադրուած իր անձին, քանի որ յառաջիկայ քառամեայ պաշտօնավարութեանը ստացեր էր երաշխիքը կազմակերպչական նորանոր յղացքներու եւ ամբողջանուէր յանձնառութեան:

Ծառայութեան պատնէշի վրայ իր կեանքը գոհաբերող Մարտիկը եղաւ Լեւոն Անանեան: Այժմ՝ իր հոգիի խաղաղութիւնը կ'ապրի ան: Հողեղէն իր գիտակցական կեանքի տարիներուն, անհաշիւ «մսխած» էր բնութեան իրեն պարգեւած քաջաւորը տարիները: Բազմահարկը յօրուածներու եւ գրական ելոյթներու մարդն էր ան: Գրաւոր թէ բանաւոր: Մեր Գիրն ու Մշակոյթը՝ Հայ



Մարդու իր արժանապատուութիւնը կը համարէր:

Հայ Գրողն ու հրատարակագիր՝ մշտարթուն խիղճը մեր ազգային լինելութեան անկռելի մարտահրաւէրին:

«Տագնապներ» (Երեւան, 2004 թ.) եւ անոր յաջորդող «Դիմապատկերներ» (Երեւան, 2006 թ.) գոյգ հատորները, եղան անուրանալի արժէքները իր քաղաքացիական արիւթեան եւ յախուռն հրատարակախօսի մարդկային առաքիլութեան: Կը յիշեմ իր բանաձեւում մը Սիլվա Կապուտիկեանի մասին, խորագրելով զայն «Ճշմարտութեան եւ Արժանապատուութեանց գանգահարը: Իրն են տողերը ուղղուած Սիլվային, «Կապուտիկեան իր ժողովրդի խղճի ու արժանապատուութեան մշտարթուն զանգահարն էր, նրա ճշմարտութեան անլռելի ձայնը: Մաս-մաս այրուեց նա՝ անմնացորդ ծառայելով այն «հանճարեղ հաւաքականութեանը», որ կոչուում է հայ ժողովուրդ եւ որի վիթխարի մշակոյթի տէրն ու մշակն էր համարում իրեն» (»Դիմապատկերներ«, էջ 162-163), որ այժմ այնքան կը պատշաճի իր անձին, որ անժամանակօրէն անդարձ կը հեռանայ մեզմէ:

Լեւոն Անանեան «Մարդ-Գրող» ին ամբողջական Հոգին բաշխուած է իր գիտակցական կեանքի 50 տարիներու փոթորկայոյց պարուններուն արձագանգող հրատարակագրութեան մէջ: Ապրումներ՝ որոնց մէջ սէրն ու վիշտը, խինդն ու ցասումը կը համարեն գիրար, կ'ամբողջացնեն Մարդը՝ իր գագացումներով: Հայ Մարդը՝ իր հայրենապաշտութեամբ:

Այս պահուն, «կարմիր գիծ» նախկին կը գտնուի ան: Հոգեհանգստի ու թաղման ծիսակատարութեանն էտք, դերերը փոխուած են կարծէք, եւ Լեւոն Անանեան իր երբեմնի գործակիցներուն, գիծընկերներուն եւ ընթերցողներուն կը ներկայանայ իբրեւ ամբողջացած հայ գրագէտ մը: Իր «Ամբողջական Երկեր»ով:

Հայրենասուէր հայ մարդու իր պատգամը պիտի գտնենք այդ մեծ մատենախի էջերուն շարահիւսուած տողատակի ճշմարտութիւններուն մէջ: Այն ատեն, Լեւոն Անանեան հողեղէն մարդու փոխարէն, մենք պիտի ողջունենք անոր բաշխած ոգեղէն պատգամները:

Բարի՛ յաւերժանութիւն քեզի, սիրելի Լեւոն, եւ յաւերժ լոյս ու խաղաղութիւն անհանդարտ հոգիիդ:

333 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծախոստանքներու եւ մտնովներու Քայրապաշտօնը բուժում: Գլխացաւ, վզի, մէջքի, յօդոյին եւ մկանային ցանք: Բերանաչարժի վրարի նեւրոլոյցով պատճառած վնասուածքներու բուժում:

**Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է**

VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE



THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES

# Massis Weekly

Volume 33, No. 33-34

Saturday, September 21, 2013

## Dink Murder Trial Restarts Amid Family's Protest Court Rules for Arrest of Key Suspect

ISTANBUL -- The trial into the murder of Armenian-Turkish journalist Hrant Dink restarted in Istanbul on Wednesday following an overturn of the first verdict as the victim's family protested the trial, the Hurriyet Daily News reports.

"As the Dink family, we will no more be tools to the state mechanisms that have been mocking us and we will not attend the hearings of the retrial," the Dink family said in a letter ahead of today's hearing. "The crime coalition that is called the state recommitted the murder in every hearing, every day while it showed itself as if seeking for justice. That coalition is the crime gang itself that planned the murder and then covered it up," the family's letter read.

In today's hearing, the court issued an arrest warrant for Erhan Tuncel, a former police informant and suspect in the murder case who was released after the first verdict.

Tuncel is seen as a key in linking the murder to the state institutions as members of the Police Department in the Black Sea province of Trabzon, the suspects' hometown, have been accused of failing to relay intelligence provided by Tuncel to the Trabzon

Gendarmerie Command in a report prepared by Turkey's State Supervisory Council (DDK).

"We are currently much further behind of the starting point of the trial," Dink family lawyer Fethiye Çetin told reporters during a press conference on Sept. 13, arguing that in the initial trial the indictment already defined the organization as "terrorist" while in the retrial, this aspect of the case would be reviewed.

Çetin, who published this month a book about the unknown facts of the case ("Utanch Duyuyorum: Hrant Dink Cinayetinin Yargısı?," "I Feel Ashamed: The Judgment of the Hrant Dink Murder") explained that the Supreme Court had defined the motive of the organization as "political" rather than "terrorist" in its verdict that led to the retrial of the case.

Dink, the renowned editor-in-chief of Agos, was shot in front of his office in Istanbul on Jan. 19, 2007.

The triggerman, Ogün Samast, 17-years-old at the time of the murder, and Yasin Hayal, who was charged of being the instigator of the assassination, were convicted of the murder.

Continued on page 4

## Defense Minister Seyran Ohanian: Russia Vital For Armenia's Security



YEREVAN -- The military alliance with Russia is vital for Armenia's national security, Defense Minister Seyran Ohanian said on Tuesday, citing its unresolved disputes with not only Azerbaijan but also Turkey.

Ohanian stressed the importance of a 2010 Russian-Armenian agreement that prolonged and upgraded Russia military presence in Armenia and committed Moscow to supplying advanced weaponry to the Armenian military.

"Our neighbors have been turning their defensive capabilities into offensive ones and in that sense ensuring our security without Russia would be very difficult. If it was only Azerbaijan, we wouldn't have problems," he told students of a Russian-Armenian university in Yerevan.

"For many years, modern and compatible weapons are being supplied to Armenia so that we can maintain the balance in the region," he said, adding that Russian military assistance will continue in the coming years.

The Armenian government reported earlier this month a dramatic increase in its arms acquisitions in the last few years, saying that they have offset Azerbaijan's continuing massive military buildup. "In the last three years we have acquired as much weaponry as we did in the previous 20 years," Prime Minister Tigran Sarkisian said during a visit to Nagorno-Karabakh.

Russia has also raised eyebrows in Yerevan with recent years' arms sales to Azerbaijan reportedly worth billions of dollars.

## U.S. Envoy Visits Karabakh



STEPANAKERT -- James Warlick, the U.S. co-chair of the OSCE Minsk Group, met with Nagorno-Karabakh's leaders in Stepanakert on Friday, ending a regional tour which Washington hopes will help to revive Armenian-Azerbaijani peace talks.

Warlick also joined OSCE field representatives in monitoring the ceasefire regime on the volatile "line of contact" east of the disputed territory. No shooting incidents were reported during the routine procedure.

"I appreciate very much the opportunity to see beautiful Nagorno-Karabakh," Warlick told reporters after talks with Nagorno-Karabakh Republic president Bako Sahakian.

Few details of those talks were made public. Sahakian's office said in a statement that the two men agreed on the need for a peaceful resolution of the Karabakh conflict. Sahakian was

reported to complain about Azerbaijan's "unconstructive position" in the negotiating process and say that it poses a "growing threat to peace and stability in the region."

Warlick, who was appointed as U.S. co-chair last month, stressed that he has toured Azerbaijan, Armenia and Karabakh on an "orientation visit." "I'm here to listen and learn," he said. "With everyone I meet on this visit I want to look ahead and find a realistic path towards a durable settlement."

Warlick arrived in Baku and Yerevan with U.S. President Barack Obama's letters to his Azerbaijani and Armenian counterparts implicitly urging them to hold face-to-face talks. "With the outlines of the compromise already well established, now is the time for a renewed effort to bring peace to the region," Obama wrote.


## Prominent Armenian-American Benefactor Gerard Cafesjian Passes Away

Gerard Cafesjian, a prominent Armenian benefactor, has died, aged 88. This information was confirmed to ArmeniaNow by the Cafesjian Center for the Arts based in Yerevan.

Cafesjian was a businessman and philanthropist who founded the Cafesjian Family Foundation (CFF), the Cafesjian Museum Foundation (CMF) and the Cafesjian Center for the Arts.

Cafesjian was born April 26, 1925 in the Bensonhurst neighborhood of Brooklyn, New York. His parents had come to the United States preceding the Armenian Genocide by the Turks. He began his career as a legal editor with West Publishing, rising through the ranks to the position of executive vice president, overseeing sales, marketing, customer service, public relations, all Westlaw office training and development. At West, he also conceived of and started the West Legal Directory and a well-known program, "Art and the Law", which earned him and West numerous awards.

Mr. Cafesjian retired from West



Publishing when it was sold to Thompson Publishing in 1996.

In subsequent years he established the Cafesjian Family Foundation. Through that Foundation he devoted millions of dollars to Armenia on relief projects including renewable energy, headed a TV station, ran a newspaper, contributed to the clearing of land mines by specially trained dogs, founded a bank, insurance company, and supplied the resources for many other projects. If any of the projects were to prove successful, the profits were to remain in Armenia for further development.

Continued on page 4

## Chief Prosecutor Resigns After Long Tenure

YEREVAN -- Aghvan Hovsepiyan, Armenia's influential prosecutor-general, resigned on Friday after 15 years in office that have been marked by allegations of serious human rights violations made by opposition and civic groups.

Hovsepiyan, 60, was relieved of his duties after President Serzh Sarkisian did not appoint him for another five-year term.

Hovsepiyan's resignation has been anticipated by some observers since Sarkisian publicly and harshly criticized the Special Investigative Service (SIS), a law-enforcement body subordinate to prosecutors, earlier this year. Andranik Mirzoyan, the SIS chief close to Hovsepiyan, was sacked as a result.

Hovsepiyan was first named prosecutor-general shortly after former President Robert Kocharian took office in 1998. He has since been one of the country's most powerful state officials. He has influenced political processes through his Nig-Aparan organization uniting prominent natives of a district in central Armenia.

Hovsepiyan has also played a key role in government crackdowns on the opposition, notably the deadly suppression of 2008 post-election pro-



tests in Yerevan. Dozens of opposition members and supporters were jailed on highly controversial charges at the time.

Hovsepiyan infamously declared that former President Levon Ter-Petrosian, the main opposition candidate in the February 2008 presidential election, resorted to a mass hypnosis Armenia's population to muster popular support for regime change.

Armenian prosecutors have also faced allegations of corruption and gross violations of the due process from local and international human rights groups. Armenian courts rarely make decisions going against prosecutors' wishes.

## Davit Safaryan Wins Gold in Freestyle Wrestling World Championship

BUDAPEST -- Armenian freestyle wrestler Davit Safaryan won gold medal in World Championship of Freestyle Wrestling, after beating Cuban Livan Lopez in the finals 3-1.

Bronze medals went to Russian Magomed Kurbanaliev and Mongolian Mandakhnaranzanzorig.

In earlier rounds the European champion beat George Bucur (Romania), Rafal Statkiewicz (Poland), Magomed Kurbanaliev as well as Levan Gelegsashvili (Georgia) to reach the final stage.

Armenian freestyle wrestlers have not won medals at world championships since 2005.




## Armenian-Russian Business Forum in Yerevan

YEREVAN -- Representatives of Armenian small and medium-sized businesses met in Yerevan with Russian counterparts, who have come here as part of a Business Marathon 2013 Russian project to explore possibilities of establishing contacts with local companies.

Karen Martirosyan, President of the Chamber of Commerce of Yerevan, attached importance to the organization of such meetings, saying it would be difficult for many entrepreneurs to organize visits and find partners on their own.

Dmitry Knyazev, Head of a Moscow Government Department of Industrial Policy and Entrepreneurship, said the Moscow government is interested in finding new markets for Moscow-produced goods and services.

## Harutyun Khachatryan Awarded Posthumously by Raoul Wallenberg Foundation for Helping Jews In Nazi Concentration Camp



Dr. Kachatryan (right), Josef Kogan (middle)

YEREVAN -- Armenian Harutyun Khachatryan, who was honored in the Yad Vashem Holocaust History Museum in Jerusalem as a Righteous Among the Nations, was posthumously awarded by the International Raoul Wallenberg Foundation. The award on his behalf was received by his family.

Khachatryan, a military doctor with the Soviet Red Army, was taken prisoner during World War II. In the concentration camp where he was kept by the Nazis he helped many Jews as a physician.

In a moving ceremony that took place at the Presidential Palace in Yerevan, Armenia, the International Raoul Wallenberg Foundation (IRWF) bestowed the Raoul Wallenberg Centennial Medal to Armenian Holocaust Rescuer, Dr. Harutyun Khachatryan. The medal was presented to Anna Khachatryan, on behalf of her grandfather, by Baruch Tenenbaum, founder of the IRWF and Artiom Chernamoryan, a prominent IRWF volunteer.

"For the last two years, our orga-

nization is led by my good friend, Mr Eduardo Eurnekian, a prominent Argentinean entrepreneur of Armenian descent. We feel blessed to have him on board because he has instilled in us what I would define as "the Armenian spirit". A combination of the highest values of human solidarity and relentless initiative, which are so typical to the Armenian people," said Tenenbaum.

"The Wallenberg Foundation will continue its relentless work with the aim of discovering the awe-inspiring stories of more Armenian rescuers. We are honored and proud to bestow the Raoul Wallenberg Centennial Medal to President Sergh Sargsyan, who as head of state of the Republic of Armenia stands here representing all the Armenian heroes those who were already recognized, and those who are still anonymous," said Danny Rainer, IRWF Vicepresident.

Harutyun Kachatryan was born on April 5, 1915 in Karakhan-Beklu village of Nakhidjevan. He moved to Yerevan in 1934 and pursued his medi-

cal studies at the Yerevan State Medical Institute. He joined the Soviet Army as a physician in 1939. In August 1941 he was captured by the Nazis and taken prisoner near the city of Velikie Luki. In this prisoner camp, serving as a physician he met and treated a wounded Jewish inmate, Josef Kogan, saving his life.

Khachatryan returned to Armenia in 1946 and worked from 1946-49 as a chief physician at Ashtarak Regional Hospital. He was sentenced to death in 1949, having been accused of betraying his homeland. The sentence was later changed to 25 years in prison. From 1949 to 1956, he served his sentence in Norilsk, Siberia. He was released in 1956 and restored to his position in 1960.

He worked as a doctor at the Yerevan N17 polyclinic from 1956 to 1984. In 1983 he had a long-awaited reunion with his military colleagues and friends.

A letter that Josef Moses Kogan sent to the State Security Committee of the Union of Soviet Socialist Republics reveals how this Armenian hero, Dr. Harutyun Khachatryan, saved the life of Mr. Kogan. Kogan tells the whole story in this letter describing how many times the Armenians, and Dr. Khachatryan in particular, saved his life. Kogan was captured by the Germans near the city of Velikie Luki at the end of August, 1941, wounded in the right leg and unconscious, and was moved to the concentration camp of the same name.

Dr. Harutyun Khachatryan treated him and he was able to walk again, but later the Jewish war prisoner became infected with spotted typhus. In spite of quarantine and an order not to communicate with dying patients, Khachatryan continued to visit him, bringing food and medication.

The war prisoners were regularly transported to various concentration camps; from Velikie Luki to Polotsk, from Polotsk to Borisovo, from Borisovo to Benjaminovo (Poland). Benjaminovo was not the only place in Poland where there were Soviet war prisoners; they were transported from Benjaminovo to Demblin, from Demblin to Pulavi.

For the past two years, the IRWF has been actively searching for Armenian rescuers and that is how the famous Armenian singer, Anna Kachatryan, contacted Mr. Artiom Chernamorian, a volunteer of the IRWF and provided him with historical information about the feats of his late grandfather – Dr. Harutyun Kachatryan

For his protection, Dr. Khachatryan had arranged for Josef Kogan to stay with Armenian prisoners and go by the name of Michael Markosyan (Misha Markosyan). However, an unknown person betrayed him to the Commanders of the Borisovo camp.

In his book entitled "Missing people," journalist Michael Hakobyan describes an episode when an Armenian war prisoner (later the Commander of the first Soviet Partisan Detachment of France,) Alexandr Ghazaryan, was called to the headquarters of the Borisovo camp by the Nazis with Markosyan (Kogan) as interpreter. Ghazaryan was interrogated under suspicion that he was a Jew. Then the Armenian was released, followed by Markosyan.

Later Kogan wrote in a letter: "In the concentration camp of the city of Pulavi, an unknown person spread rumors about my background and the Germans formed a medical committee to determine my nationality. It seemed inevitable that I would be sentenced to

Continued on page 3

## Diplomacy Key for Syria's Religious Minorities

By Representative Adam B. Schiff

As Syria's civil war continues to rage in the heart of the Levant, no population is more vulnerable than Syria's religious minorities, including over a hundred thousand Armenians living in the country. Their safety is dependent on a negotiated end to the fighting, and is a central reason that I vigorously support efforts to find a diplomatic solution to the immediate crisis stemming from the horrific gas attack by government forces on August 21. In the United Nations process now underway, lies the hope that the United States and Russia can initiate talks to bring about an end to the wider war.

From the beginning of the Syrian civil war, I have been monitoring closely the impact of the fighting and the disintegration of Syrian society on the country's Christian minority, which is one of the oldest in the world. Armenian Christians, many of whose grandparents and great-grandparents settled in Syria to escape the Armenian Genocide almost a century ago are in particular jeopardy – caught between a regime that has protected Christian communities but used the most appalling violence against its own people, and an opposition that is populated in part by Islamic extremists bent on annihilating religious minorities.

As my staff and I have worked to try to obtain immigration visas for the family members of constituents who are living through the horror of this war, I have come to understand in the most personal terms the anxiety that so many in the Armenian diaspora feel as the events unfold in Syria. I, too, fear what could happen if the Syrian regime collapses precipitously, and have recoiled at reports of rebel attacks on Christian villages. The prospect of American-supplied weapons falling into extremist hands, and then being used against Syrian Christians and later against the west, is at the heart of my steadfast and public opposition to providing lethal arms to the rebels.

I have also expressed grave concerns over America acting unilaterally against the Syrian regime in response to the recent grisly poison gas attack that left more than 1,400 Syrian civilians dead, including over 400 children. I know that the Armenian-American community shares these worries, as I have heard from many hundreds of you in recent days urging the President and Congress to refrain from military strikes designed to punish the Assad regime for its use of chemical weapons. The community has appealed for a diplomatic solution instead, and I support this effort unequivocally.

I am encouraged by the announcement of a framework diplomatic solution after three days of negotiation between Secretary of State John Kerry and Russian Foreign Minister Sergei Lavrov, under which the Syrian regime would give a full accounting of its stockpiles of chemical weapons, and put them under international monitoring, to be followed by the destruction of these weapons in the first half of 2014. The framework, which is to be formalized in a U.N. Security Council



resolution this week, will be difficult to implement in the middle of a war zone, but we must spare no effort in trying to accomplish the task. As I said in a recent meeting with Secretary Kerry, National Security Advisor Susan Rice, Secretary Chuck Hagel and General Martin Dempsey, only this path holds the promise of permanently placing these weapons out of use – something a military strike cannot accomplish.

The United States should use this new diplomatic channel to explore widening the negotiations to try to end the civil war and begin transition to a post-Assad government that would guarantee all of Syria's people a chance at a better future. Both Secretary Kerry and his Russian counterpart have voiced hope that the current effort could act as a catalyst for broader peace talks.

Even as we work to find a diplomatic solution to the crisis, I remain focused on the humanitarian catastrophe that has engulfed Syria – with more than 2 million refugees having fled the country and millions more internally displaced. As a member of the Appropriations committee that funds our international affairs budget, I have been pushing for greater humanitarian support of Syria's civilians. I also spearheaded a bipartisan request to the Secretary of Homeland Security joined by over seventy of my House colleagues on behalf of the families of thousands of Syrian refugees who live here in the United States urging that these refugees be granted humanitarian parole so that they can be reunited with their loved ones in the U.S. These refugees already have approved immigration petitions and should be immediately reunited with their families, many of whom live in our community.

During this crisis, the feedback from my Armenian constituents – many of whom have lived in the region and have family there now – has been invaluable in forming a complete understanding of the horrors of the conflict and the challenges to ending it. As I continue to work with Administration officials to address the security, diplomatic, and humanitarian aspects of this crisis, I will be ever mindful of the perilous state of Syria's Christians and their safety will remain a paramount concern.

*Representative Adam Schiff represents California's 28th District in the U.S. House of Representatives, and serves on the House Intelligence Committee and Appropriations Committees.*

## Book Review: "Keeping the Balance" by Rev. Dr. Vahan H. Tootikian

Reviewed by Philip Tavlian\*

A leading pastor of the Great Lakes State has just published his 35th volume, a highly readable compendium of inspirational essays in the English and Armenian languages.

Reverend Doctor Vahan H. Tootikian – Emeritus Pastor of the Armenian Congregational Church of Greater Detroit – has prepared a bilingual work emphasizing “a balance between one's personal salvation and the social implications of one's religious experience.” As the author states in his preface, “[W]ithout faith a person's good works are futile and without good

The English language portion of the volume comprises 31 articles divided into three sections – “Holidays and Observances,” “Views on Issues,” and “Armenian Issues.” The initial section includes thoughtful pieces relating to the Advent and Lenten Seasons as well as Independence Day in the American Republic.

“Views on Issues” surveys the underpinnings of the Christian faith, from the imperative of outreach to the friendship and nonconformity exemplified in the life of Jesus of Nazareth to the distinctions between Divine Knowledge and human wisdom. Essays dealing with the pilgrimage of life – storms, weaknesses, good and evil, love, rejection, prayer, and religious education – are of special benefit to 21st Century readers.

The section addressing Armenian issues eloquently examines theological diversity among Armenian Evangelicals, the 98th Anniversary of the Armenian Genocide, problems and solutions in the modern Republic of Armenia, the 2009 Armenia/Turkey Protocols, and the interdependence of Armenia and the Diaspora.

The Armenian-language portion of the volume is entitled, “Nertashnagootyun” (meaning “harmony”) and consists of ten articles dealing with religious and patriotic subjects. The author acknowledges that not “all Christians and all Armenians think alike, feel alike,



worship alike or act alike.” He nevertheless urges that “in spite of their differences, they must united and create harmony, much like a choral group, with different voices blended together, creating beautiful music.”

“Balance” is the rich literary harvest of a gifted scholar whose five and one-half decades of Christian ministry have taken him from Beirut, Lebanon and Damascus, Syria to pulpits in Massachusetts and Michigan as well as to the classrooms of Harvard University, Andover Newtown Theological Seminary, and the University of Michigan.

Given recent tragic developments in the Near East and other points around the globe, the informed reader is well-advised to acquire this estimable volume and keep it within arm's reach in the trying times ahead.

Inscribed copies may be ordered from the Armenian Heritage Committee, 3922 Yorba Linda Boulevard, Royal Oak, Michigan 48073-6455.

Keeping the Balance.

By Rev. Dr. Vahan H. Tootikian.

Royal Oak, Michigan: Armenian Heritage Committee, 2013. Pp. 160 ISBN 1-891583-15-8. \$25 plus \$3.25 shipping and handling.

\* *Philip Tavlian is a Member of the State Bar of California and a Past President of the Armenian Theological Students' Aid, Inc., graduate financial aid organization of the Armenian Evangelical Churches in North America.*

## Harutyun Khachatryan Awarded Posthumously

Continued from page 2

death, but, at the last moment, just before I was to present myself to the Nazi doctors, the only non-German doctor of this Committee managed to get out of the room by risking his life and stopped me in the corridor, and informed me that someone had betrayed me”.

Through the efforts of the Armenian war prisoners who had founded Anti-fascist Underground Patriotic Organization in the Beniaminovo camp in 1942, Kogan was able to hide and the same night his escape was arranged.

More than 17 years later, through a letter from Lieutenant Colonel Alexandr Ghazaryan, he found out that again, because of betrayal, the Armenians who had arranged his escape appeared had been held prisoner in the same fascist concentration camp.

One of the founding members of

the anti-fascist Underground Patriotic Organization, Vahan Vardanyan, described in detail his memories the escape of Kogan: “Before the medical committee, we decided to arrange his escape during one of our organization meetings. We gave him a weapon and bullets. He managed to jump over the wall and run away. The Germans found out everything the next day, most likely through the same informer. Stephan Yaghdjyan was exonerated and we, the ten remaining, were judged as German militaries. We were considered to be Vermacht soldiers. We were sentenced to various years of imprisonment; I have forgotten exactly how many. Karapetyan sentenced to be executed for a supposed connection with the partisans.

Doctor Harutyun Khachatryan died on November 23, 1985 at the age of 70. As for Kogan, nothing further is known of him following Khachatryan's death.

## Columbia University to Host Professor Balakian's Talk on Traveling to Turkey

COLUMBIA UNIVERSITY -- Professor Peter Balakian will deliver a talk titled, "Terror and Taboo: Going to Turkey," on Wednesday evening, September 25, 2013 at Columbia University's Faculty House.

Hosted by the University Seminar on Cultural Memory, Professor Balakian, who is the Rebar Professor of the Humanities at Colgate University and the Visiting Ordjanian Professor of Armenian Studies at Columbia University, will discuss the complications and difficulties of returning to the place of his father's birth and his family origin, Istanbul, which was Constantinople when his family left as refugees of the Armenian Genocide in 1922.

"In my family, the Armenian past in Turkey was a fraught and repressed issue," said Balakian, the author of *Black Dog of Fate* and *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response*. "The word Turkey evoked a haunted place. How does one approach this lost place with this weight of history?"

In the decades following the Armenian Genocide, where 1.5 million Armenians perished at the hands of the Young Turk government of the Ottoman Empire, the Turkish government has actively pursued a worldwide campaign to deny the massacres of 1915. As a poet, memoirist and scholar, Balakian's work has immersed him into the history of the genocide and its



aftermath.

"Peter Balakian is one of the foremost writers on the memory and transmission of the Armenian genocide to younger generations," said Marianne Hirsch, co-director of the University Seminar on Cultural Memory, which hosts discussions of return and discovery of memory on sites of past atrocity. "We are eager to hear how his first visit to Turkey and his confrontation with the history of his ancestors has inflected his inherited memories of the Armenian Genocide."

Professor Balakian's talk, "Terror and Taboo: Going to Turkey," will take place on Wednesday, September 25, 2013 from 6 pm -9 pm at the Faculty House, located at 64 Morningside Drive in New York. This event is free and open to the public.

-Taleen Babayan

## "Historic Armenia II-Armenian Cilicia" a Presentation by Barlow Der Mugrdechian

FRESNO -- Armenian Studies Program Director Barlow Der Mugrdechian, will give an illustrated presentation on "Historic Armenia II-Armenian Cilicia" at 7:30 PM on Friday, September 27, 2013, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus.

The lecture is part of the Armenian Studies Program Spring Lecture Series and is co-sponsored by the Armenian Students Organization at Fresno State and is supported by the Leon S. Peters Foundation.

Der Mugrdechian traveled to historic Armenia for the first time in the summer of 2012. This summer he visited Armenian Cilicia, and will present his impressions on the Armenian churches and sites in the area. He also visited the two functioning churches in Vakif (Musa Dagh) and in Iskenderun and will discuss the Armenian communities there.

Der Mugrdechian will also present information about some of the remaining Armenian fortresses of Armenian Cilicia, such as at Sis and at Anavarza, as well as the monastic complex at Hromkla.



Barlow Der Mugrdechian has been teaching for twenty-nine years in the Armenian Studies Program at Fresno State. He has been a frequent traveler to Armenia, leading student study groups. He teaches Armenian language, history, art, and culture courses at Fresno State.

The lecture is free and open to the public.

Free parking is available after 6:30PM in Lots A and J, near the University Business Center. For more information on the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669.

## Dink Murder Trial Restarts Amid Family's Protest

Continued from page 1

However, a high criminal court dismissed charges related to "armed terrorist organization." The Supreme Court of Appeals verdict defined the acts of all suspects in the case under

"an organization formed to commit crime" according to Turkish Penal Code Article 220.

"According to the Supreme Court, this organization was established in 2004 by Yasin Hayal. It comprises Erhan Tuncel, Ersin Yolcu,

## Glendale Central Library to Host the Forgotten Heroes The Armenian Legion and World War I Exhibit on October 4-19, 2013



Courtesy of Bedros Hergelian /Dr. Vahram Shemmassian Collection

GLENDALÉ -- Professor Vahram Shemmassian to lecture on The Armenian Legion and World War I on the opening day of the exhibition on Friday, October 4, 2013, at 7pm at the Glendale Central Library Auditorium, 222 East Harvard Street in Glendale. The traveling exhibit was created by the Armenian Museum of America and has been shown around the country, most recently at the French Cultural Center of Boston. The exhibition will be held on the first floor of Central library and will run until October 19, 2013.

Prof. Vahram Shemmassian is the Director of the Armenian Studies Program in the Department of Modern and Classical Languages and Literatures at the California State University, Northridge. He has received awards of appreciation from the Knights of Vartan and the Mousaler Association of California, as well as a certificate of recognition from the California State Assembly. In the summer of 2010 the Ministry of Diaspora of the Republic of Armenia awarded Dr. Shemmassian the William Saroyan Medal for his contributions to the promotion and preservation of Armenian culture in the Diaspora.

Légion Arménienne The Armenian Legion was formed during the darkest days of World War I, when the Allies (France, England, and Russia) were deadlocked in a military stalemate on both the European and Middle Eastern fronts against the combined forces of Germany, Austria-Hungary and the Ottoman Empire. Leaders of the Armenian Diaspora were determined to raise a volunteer fighting

force to support the Allies. The brave men who volunteered to risk their lives in a struggle for their people's political and human rights ultimately failed in their quest. Betrayed by the Allies, the Armenians were unable to achieve any redress for their tremendous losses of life and property. Yet the brave and dedicated Armenian Legionnaires join the ranks of those who, throughout history, have struggled to advance the cause of justice and freedom.

Armenian Museum of America (a division of the Armenian Library and Museum of America, ALMA), is the largest Armenian museum in the Diaspora and is funded solely through contributions of individuals and foundations. Located in Watertown, MA., it is a major repository for a vast array of artifacts and publications that illustrate the heritage and creative achievements of the Armenian people over the centuries.

The program is organized by the Glendale Library Arts & Culture and the Armenian Studies Program, California State University of Northridge and is cosponsored by the United Armenian Council of Los Angeles and the Armenian Museum of America. The exhibit has been made possible by the generosity of Aurora Adajian Lehmann and the Honorable Jacob Adajian in fond memory of their legionnaire father, Serop Adajian of Kheder Beg, Musa Dagh.

Admission is free; seating is limited. Library visitors receive 3 hours FREE parking across the street at The Market Place parking structure with validation at the Loan Desk.

## Benefactor Gerard Cafesjian Passes Away

Continued from page 1

Cafesjian received accolades and recognition from both the United States and Armenia institutions, including the Ellis Island Award in 2000.

The benefactor completely renovated the Cascade site in downtown

Yerevan. Following a major reconstruction, the Cascade became the site of the Cafesjian Center for the Arts that opened in 2009. The Museum enjoys a world-class sculpture garden, which is now the most prominent meeting place in Armenia. Over one million people have visited the Center since its opening.

Ahmet Iskender and Ogün Samast, whom they use as the triggerman of the murder. [...] However it is defined as only established with a political motive, to punish Hrant Dink," Çetin said. For a murder to be considered a "terrorist act," it would have to be committed with a clear aim against the

state of the public order, according to the Turkish Penal Code.

"The Supreme Court has made a mistake in its definition of the nature and the aim of the organization," Çetin said, adding that it could take the court many years of trial to rule on the "terror organization" aspect.

### ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ 34ՐԴ ՎԵՐԱՄՈՒՏԸ



#### ՍՕՆԱ ՊԱՏԱԼԵԱՆ

Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ վարժարանի 34րդ վերամուտի արարողությունը տեղի ունեցավ Օգոստոս 26ին: Առաջնության արդեն եռուգետը սկսած էր եւ խանդավառութիւնը ակներե էր դպրոցիս շրջափակին մէջ: Ուրախալի էր տեսնել ծնողներ, ուսուցիչներ, աշակերտներ եւ հոգաբարձուներ, որոնք կ'ողջագուրուէին եւ կը գրուէին իրենց ամրան արձակուրդին մասին:

Ամայացած դպրոցը կեանքով լեցուած էր՝ աշակերտներու ներկայութեամբ: Անոնք հոգի եւ ջերմութիւն բերած էին դպրոցին:

Աշակերտները կարօտցած էին իրենց ուսուցիչներուն ու դասընկերներուն եւ պատրաստ էին դիմաւորելու նոր ուսումնական տարեշրջան մը:

Պահն էր համախմբուելու, երբ լսուեցաւ դպրոցին առաջին զանգը:

Աշակերտներ՝ մանկապարտէզէն մինչեւ ծրար կարգի, շարունցան դպրոցի շրջափակը, ուր դպրոցիս սնորհէն Յովսէփ Ինճէճիքեան ողջունեց ծնողները, աշակերտները եւ ուսուցիչները: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին ու յայտնեց իր հրճուանքը, որ դարձեալ Աստուծոյ օգնութեամբ հաւաքուած ենք այս դպրոցի յարկէն ներս:

Տնօրէնը յատուկ գնահատանքի խօսքեր ուղղեց ծնողաուսուցչական մարմինի անդամներուն, որոնք ամրան ընթացքին մեծ աշխուժութեամբ աշխատած էին դպրոցիս վերանորոգման համար: Ապա ան հրաւիրեց ուսուցիչներ Պատարեանն ու Ապաճեանը, որոնց առաջնորդութեամբ կատարուեցաւ բացման արարողութիւնը:

Աշակերտները արտասանեցին ամերիկեան եւ հայկական ուխտերը, ապա երգեցին հայկական քայլերգը, «Օրհնեցէք Տէր»ը եւ ար-

տասանեցին Տէրունական աղօթքը:

Դպրոցիս հոգաբարձութեան ատենապետ ճոճուեան իր հերթին ուրախութեամբ դիմաւորեց ներկաները, յայտնեց իր գոհունակութիւնը եւ յիշեց դպրոցիս մէջ կատարուած փոփոխութիւններուն մասին, որպէսզի աշակերտութիւնը հանգիստ եւ ուրախ զգայ դպրոցին մէջ: Ան նորանոր չափողութիւններ մաղթեց բոլորին:

Վեր. Յովսէփ Մաթոսեան օրհնեց ներկաները եւ բարեմաղթութիւններ կատարեց վերամուտին առթիւ, քաջալերեց եւ խրախուսեց փոքրիկները, որ լաւ աշխատին եւ լաւ արդիւնքներ ձեռք բերեն:

Օրհնութեան աղօթքով վերջ գտաւ բացման արարողութիւնը:

Աշակերտներ իրենց ուսուցիչներուն առաջնորդութեամբ ուղղուեցան իրենց դասարանները, ուր իրենց յանձնուեցաւ իրենց դասացուցակներն ու դասագիրքերը:

Մանկամտուրի աշակերտներու ծնողները նոյնպէս կարճ հանդիպում մը ունեցան դպրոցի մատուռին մէջ, իրենց դաստիարակներուն հետ. անոնք իրարու ծանօթացան եւ որոշ բացատրութիւններ տրուեցան կայանալիք աշխատանքներուն մասին: Ապա միասնաբար այցեւեցին մանկամտուրի դասարանները:

Այս տարի մեծապէս զգալի էր մանկամտուրի փոքրիկներուն թիւի աճը մեր դպրոցէն ներս, ինչ որ ուրախալի եւ ոգեւորիչ երեւոյթ էր:

Ծնողներ նոր տեսլականով եւ գոհունակ սիրտով իրենց սիրասուն գաւակները վստահեցան Սահակ-Մեսրոպ վարժարանին, ուր իրենց գաւակները պիտի ստանան հայեցի դաստիարակութիւն, մտովին եւ հոգեպէս պիտի զարգանան տարբեր գիտութիւններու մէջ եւ Աստուծոյ շնորհքով պիտի դառնան լաւ նկարագիրով տիպար հայեր:

### Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՈՒԵՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ



#### ԳԵՂՈՂ-ՔԷՕՇԿԵՐԵԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Արեւմտեան Ամերիկայի Երջանակային Յանձնաժողովը գեղեցիկ գաղափարը յղացած էր հրաւիրելու իր յարկին տակ Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի նորընտիր Ատենապետ Տիար Անդրանիկ Պաղտասարեանը՝ որ ծանօթանայ եւ ծանօթացուի Միութեան զանազան վարչութեանց գործունեւորներուն հետ:

Վերջիջեալ ընդունելութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 22 Օգոստոս 2013ի երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ՝ ՀԲԸ Միութեան Փաստիւնայի Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնի սրահին մէջ: Օրուան հանդիսավարն էր Պրն. Լեւոն Քէշիշեանը, որու բարի գալուստի խօսքէն ետք՝ տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւնը:

Ճաշէն ետք՝ Պրն. Քէշիշեան նշեց ներկայ գտնուող Հ.Բ.Ը. Միութեան զանազան մասնաճիւղերու եւ յանձնախումբերու անունները որոնց թիւը կը հասնէր 150ի ու չետոյ հակիրճ կերպով ներկայացուց Պրն. Պաղտասարեանի կենսագրականը: Ան իր ուսումը ստացած է Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանին մէջ, որմէ ետք յաճախած է Լիբանանի Պետական Համալսարանի Հոգաբարձութեան Բաժինը: Ապա իր ուսումը շարունակած է Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Մինդեղէնի եւ Հողագործութեան բաժանմունքին մէջ, որմէ ետք մեկնած է Դանիա՝ մասնագիտանալու կաթնեղէնի գիտութեան մէջ:

1969ին Պրն. Պաղտասարեան վերադառնալով Պէյրութ, կ'աշխատի իր հօր գործին մէջ: Իսկ 1990ին իր ընտանիքին հետ միասին կը գաղթէ Միացեալ Նահանգներ, ուր կը ձեռնարկէ կաթնեղէնի արտադրութեան իր անձնական գործը: Ան տէր եւ սնօրէն է «Փարուն» կաթնեղէնի Արտադրութեան Ընկերութեան: Պրն. Պաղտասարեան ամուսնացած է եւ ունի երեք զաւակներ:

Պրն. Քէշիշեան ապա հրաւիրեց Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի Կլենտէյլի գրասենեակի Գործադիր Տնօրէն Պրն. Սարգիս Քոթանճեանը՝ որ ներկայացնէ Հիմնադրամի գործունէութեան տեղեկագիրն ու ապագայի ծրագրերը: Ան սահիկներու միջոցաւ դիտել տուաւ որ իր հիմնադրութեան աւելի քան քսան տարիներու ընթացքին՝ Հիմնադրամը իրականացուցած է շինութիւնը 334 դպրոցներու, 424 բնակարաններու, 70 առողջապահական

կեդրոններու եւ 476 քլմ. ճամբաներու՝ Հայաստանի թէ Արցախի մէջ:

Պրն. Քոթանճեան ապա նշեց թէ ապագայի համար Հիմնադրամը նախատեսած է շինութիւնը վարդենիս-Մարտակերտ ճամբուն՝ որ Հայաստանէն Արցախ ճամբորդութիւնը պիտի կարճեցնէ 2.5 ժամով: Այս նախաձեռնութիւնը կ'ընդգրկէ 114 քլմ. ճամբայ՝ որ պիտի արժէ 30 միլիոն տոլար: Ան յիշեց նաեւ որ Հիմնադրամը ցարդ ծախսած է 235.8 միլիոն տոլար եւ ան ունի 25 գրասենեակներ 22 երկիրներու մէջ՝ ուր կ'աշխատին 45 պաշտօնեաներ, որոնցմէ 37ը Հայաստանի մէջ եւ չորսը Կլենտէյլի մէջ:

Պրն. Քէշիշեանի հրաւերով բեմ բարձրացաւ Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի նորընտիր ատենապետ Տիար Անդրանիկ Պաղտասարեանը: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց ՀԲԸ Միութեան Երջանակային Յանձնաժողովին իրեն ընծայուած այս պատիւին համար: Ան ապա նշեց թէ ինք շատ կապածամիտ եւ բծախնդիր անձ մըն է որովհետեւ իր անձնական գործը այդպէս կը պահանջէ: Ուրեմն՝ շարունակեց Պրն. Պաղտասարեան, նոյն այդ նախանձախնդրութիւնը կ'ուզէ որդեգրել իր նոր պաշտօնին նկատմամբ՝ յատկապէս երբ խնդրոյ առարկայ է հաւաքուած դրամներու մատակարարումը:

Պրն. Պաղտասարեան ապա դիտել տուաւ որ հաւաքուած գումարները չեն յանձնուիր Հայաստանի կամ Արցախի կառավարութեան, այլ պահ կը դրուին յատուկ դրամատուներու մէջ՝ որու հսկողութիւնը յանձնուած է շատ վստասելի անձի մը, յանձնա Հիմնադրամի վերստուգիչ Յանձնախումբի նախագահ Վահէ Ճազմատարեանին՝ որուն վրայ մեծ համոզում ունի ան: Ան նաեւ յայտնաբերեց որ հաւաքուած գումարներու միայն ութը տոկոսն է որ կը ծախսուի՝ վարչական գործերու համար:

Սա հրապարակային իր առաջին ելոյթն էր եւ պէտք է անվերապահ ըսել որ ան շատ լաւ կերպով ներկայացուց Հայաստանի եւ Արցախի կատարած իր այցելութիւններու տպաւորութիւնները, ինչպէս նաեւ Հիմնադրամի ապագայի ծրագրերը իրագործման նկատմամբ՝ իր վճռակամութիւնը: Ան բարձր գնահատեց սահմանապահ մեր հայ գիւնուորներուն գոհողութիւնը՝ որոնք տիւ եւ գիշեր ու իրենց արեան գնով կը հսկեն թշնամիին ամէն մէկ քայլին եւ

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

### ՐԱՅԵՐ ՍՈՒՐԻՈՅ ԴԻՆ ՈՒ ՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՍԷՉ

#### ԿԱՐՈ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Անկասկած Սուրբիոյ մէջ հայ

գաղութին կորիզը եղած է Հալէպը։ Արեւի ու կաթի հնագոյն այդ քաղաքին մէջ հայերու ներկայութիւնը, գաղութ կազմելը, ունի դարաւոր պատմութիւն սկսեալ մեր թուականութենէն առաջ՝ Մեծն Տիգրանի յաղթական տարիներէն, մինչեւ անմարդկային առաջին ցեղասպանութեան տարեթիւրը՝ 1915 եւ մինչեւ մեր օրերը։

Հայրենի մեր ժողովուրդին ճակատագրուած պատմութեան պայմաններուն բերումով, դաժան դարերուն՝ պարսկական, հռոմէական, մոնկոլ-թաթարական, թուրք ցեղախումբերու ալիք առ ալիք արշաւանքներուն եւ անոնց դժիւեմ տիրապետութեանը իբրեւ հետեւանք գաղթական ելած կամ տեղահանուած հայեր հաստատուած են ոչ միայն Հայէպ, այլ նաեւ անոր մերձակայ որոշ քաղաքներուն մէջ, ուր շինած են իրենց մատուցեցիկները, ապրած օրինապահ եւ բարեհամբաւ կեանք արհեստաւորի, հողամշակի, առետրականի եւ բարձր մասնագիտութիւններու յատկանիշներով։

Պատմութենէն յայտնի է, որ հայերու թիւը ընդհանրապէս Սուրիոյ մէջ զգալի աճ արձանագրած է Բագրատունեաց թագաւորութեան անկման շրջանին, իսկ աւելի ուշ Կիլիկիան թագաւորութեան անկումին հետեւանքով։

10-րդ դարուն արդէն հոն հիմնուած է Շղուրի վանքը որ կը դառնայ մշակոյթի կեդրոն։ Անտիոքի շրջանին մէջ բազմաթիւ հայ կուսակալներ կը յիշուին. Աբնա իշխան, Նասրատուր Անեցի, Վասակ Պաշլաւուհի... Հայեր գլխաւոր քաղաքներուն մէջ կը դառնան կապ՝ Եւրոպայի հետ առետրական գետնի վրայ, կը զարգացնեն ռուսերէնութիւնը, մետաքսի գործը, մուշտակի արտադրութիւնը եւ այլն։

Այսուհանդերձ հայաշատ կեդրոններուն մէջ միշտ կենդանի կը պահուի ազգ. մշակոյթը, կը կատարուին գրքերու ընդօրինակութիւններ, աւետարաններու նկարագրողութիւններ, ստեղծագործութիւններ՝ տաղարաններու, բժշկական գիտելիքներու եւ այլն։

Ընկերային դժուարին պայմաններ կը ստեղծուին երկրին մէջ թրքական տիրապետութեան հետ, սկսեալ՝ 16-րդ դարէն։ Հաւասարապէս, թէ՛ բնիկները՝ սուրիացի արաբներ, թէ՛ փոքրամասնութիւնները՝ հայ, յոյն, հրեայ, կը կրեն ծանր եւ անտանելի լուծը Օսմանեան տիրապետութեան։

Հայեր՝ բռնակալութեան դէմ, միշտ կ'ըլլան ազատագրական պայքար մղող արաբ ժողովուրդի կողմէն։ Իսկ եղեռնէն ետք, քանի մը տասնեակ տարիներ վերջ, իբրեւ երախտապարտ քաղաքացիներ, գործնապէս կը յայտնուին գաղթատիրութեան դէմ։

Այնուհետեւ, ժամանակակից պատմութեան բոլոր տասնամեակներուն, սկսեալ 1943-ի անկախութենէն, հայեր իբրեւ հարազատ քաղաքացիներ, իրենց մասնակցութիւնը կը բերեն երկրի ընկերային բոլոր տեսակի բնագաւառներուն մէջ։ Յիշատակութեան արժանի է մանաւանդ գինուորական մարզը, որուն մէջ յաջողական պատերազմներու ընթացքին քանի մը զօրավարներ կ'արժանանան ազգային հերոսի տիտղոսներուն, ինչ-

պէս՝ Զօրավար Գարամանուկեան, Զօրավար Սարաֆեան եւ այլք։

Օսմանեան թուրքիան հայ ժողովուրդը բնաջնջելու իր ծրագրին գործադրութեան հետեւանքով, հայկական հնագոյն համայնքները Սուրիոյ տարածքին կ'ունենան թուական նոր աճ։ Յեղասպանութենէն ճողողարած աստանդական հազարաւոր բեկորներ, կեանքի եւ հացի համար կը տարածուին ընդարձակ երկրին ոչ միայն գլխաւոր քաղաքներուն մէջ, այլ նոյնիսկ անապատային շրջաններ, ուր կը կազմեն նոր գաղութներ, նոր քաղաքներու եւ աւաններու մէջ։

Արդարեւ, նկատի ունենալով ներկայի արիւն եւ աւեր պատկերացնող ամբողջ երկրի ցաւալի իրավիճակը, դժբախտութեան մատնուած անոր միլիոնաւոր ժողովուրդը, որուն մէջ նաեւ պատուհասուած հարիւր հազարաւոր հայաթիւնը, կասկած չկայ որ ամէն հայու համար հետաքրքրական է, մեր արիւնակիցները ո՞ւր կ'ապրէին, կամ կը շարունակեն ապրիլ, եւ ո՞ր քաղաքներուն կամ աւաններուն մէջ։

Պիտի նշենք քաղաքներուն եւ գաղութներուն մէջ յատկապէս գոյառած եկեղեցիները, պատկերացում մը տալու համար անոնց մէջ գաղութներու կազմաւորման ժամանակաշրջանի մասին։

Պէտք է ի մտի ունենալ, որ ամենուրեք՝ մանաւանդ վերջին դարուն, գործած են նաեւ կուսակցութիւններ եւ համապատասխանաբար վարչական մարմիններ։

Հայաշատ շրջաններու մէջ կարեւոր ներկայութիւն եղած են նաեւ Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները իրենց գոլգոհեւ դպրոցներով եւ կիրակնօրեայ վարժարաններով։

**ՀԱԼԷՊ.** - 16-րդ դարու սկիզբը՝ 1499-1500, արդէն գոյութիւն ունեցած է եկեղեցական առաջնորդութեան շէնք, որ պարբերաբար դարձած է նաեւ կաթողիկոսական աթոռանիստ։

**Գլխաւոր եկեղեցիներն են.**  
- Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցին, սկսեալ 14-րդ դարէն։

- Ս. Աստուածածին եկեղեցին 1535, վերանորոգուած 1983-ին։

- Ս. Գէլորդ եկեղեցին 1923, որ սկզբնական շրջանին կոչուած է Ս. Նայ։

- Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ 1930։

- Ս. Յակոբ եկեղեցին՝ 1934։ Կարեւոր, ուշագրաւ ներկայութիւն եւ կրօնամշակութային գործունէութիւն ունեցած է հայ կաթողիկէ համայնքը, որ իր նուիրապետութիւնը ստեղծած է Հալէպի մէջ 1740-ական թուականներուն, Հռոմի Սրբազան Պապի օրհնութեամբ։ Աթոռը հետագային փոխադրուած է Լիբանան։

Իսկ Աւետարանական եկեղեցին, սկսած է գործել 1924ին, բազմաճիւղ եկեղեցիներով եւ դպրոցներով։

Հալէպի համասփիւռքեան զանձերը՝

Հայահոծ մեծ գաղութը ստեղծուած ճգնաժամի պատճառով, անշուշտ որ մեծ մտահոգութիւն պիտի դառնար հանուր հայութեան։ Յեղասպանութեան դժուար տասնամեակներու վաղորդային, վերականգնած բազմատասնեակ նախակրթարաններով, ան իրականա-

ցուց նաեւ բազմաթիւ երկրորդական որակաւոր վարժարաններ, որոնք դարձան համասփիւռքեան հոգեւոր գանձեր։ Անոնցմէ շրջանաւարտ ազգանուէր հունձքերը բարիք դարձան սփիւռքի բոլոր ծագերուն։ Ամենուրեք, շրջանաւարտ շրջանաւարտ հիւները առաքելատիպ օգտակարութիւն ունեցան իբր հայ լեզուի, մշակոյթի ուսուցիչ, տնօրէն, մամլոյ աշխատակից, քարտուղար, գրող եւ գործիչ։

Բարիքներու աղբիւր այդ հաստատութիւններէն արձանագրենք կարգ մը անուններ.

- Ազգային Քարէն Եփփէ ձեմարան, հիմնուած՝ 1947ին։

- Կիլիկեան Կրթական Հաստատութիւն՝ 1960ին (իբրեւ նախակրթարան հիմնուած՝ 1921ին)։

- Հ.Բ.Լ.Մ.-ի Լազարեան-Գալուստ Կիւլպինկեան Կենդրոնական Վարժարան՝ 1959ին (իբր նախակրթարան՝ հիմնուած՝ 1954ին)։

**ԼԱԹԱՔԻԱ.** - Հայեր Լաթաքիոյ մէջ բնակութիւն հաստատած են հին դարերէն սկսեալ։ Արդէն 10րդ դարուն, համայնքը ունեցած է եպիսկոպոս։ Երուսաղէմ ուխտագնացներուն համար, եղած է կարեւոր հանգրուան Հալէպ-Դամասկոս ճամբուն վրայ եւ համապատասխան ծառայութեան համար, քաղաքը ունեցած է հոգեւորական հիմնուած Երուսաղէմի պատրիարքութիւնը հոն հիմնած է նաեւ եկեղեցի, Ս. Աստուածածինը՝ 1755 թուականին։

Յիշատակութիւն կայ, որ 1254ին, հոն կառուցուած է հայկական եկեղեցի մը։ Դարձեալ յիշատակութիւն կայ, որ 1895ին հայութեան թիւը հոն՝ եղած է շուրջ 1600։

Ներկայիս գործած է Ս. Աստուածածին եկեղեցին եւ Սրբոց Նահատակաց Ազգային Վարժարանը, հիմնուած՝ 1922ին։

**ԵԱԳՈՒՊԻԷ.** - Հայեր հաստատուած են Եագուպիէի մէջ սկսեալ 8-րդ դարէն։ Հոն կը բնակին շուրջ 150 հայ ընտանիք՝ ընդհանրապէս արաբախօս։

Գաղութը ունի Ս. Հովսիսի մէկ եկեղեցին եւ Ս. Աննա մատուռը։ Գործած է Ազգային Վերածնունդ վարժարանը։

**ՂԸՆԷՄԻԷ.** - Կ'ենթադրուի, որ հոս եւս հայեր հաստատուած են սկսեալ 8-րդ դարէն։ Շրջան մը եղած է զուտ հայաբնակ։

Գաղութը ունի Ս. Գէորդ եկեղեցին, շուրջ 300 տարուան հնութեամբ։ Վերակառուցուած է 1876ին, նորոգուած՝ 1959-60 եւ 1997 թուականներուն։ Հայերը ընդհանրապէս արաբախօս են։

Հալէպէն եւ այլ շրջաններէ, ամէն տարի Ս. Աստուածածնայ սօնի հանդիպակած Կիրակիին հայեր ուխտագնացութեան կ'երթան Ղընէմիէ։

1911ին, հոն եղած են 392 հայ բնակիչներ։ 2003ին՝ 60 ընտանիք։

**ԱՐԱՄՕ.** - Հայեր Արամոյի մէջ եղած են սկսեալ 12րդ դարէն։ Հոն է Ս. Թովմատ վանքը, որ կը կրէ 1348 տարեթիւի արձանագրութիւն։ Քաղաքի բարձունքին վրայ կանգնած են Ս. Աստուածածին վիմափոր, եւ Ս. Գէորդ եկեղեցիները, որոնք գործած չեն։

Ս. Գէորդ եկեղեցին կը նկատ-

ուի ուխտավայր թէ՛ հայերուն եւ թէ՛ տեղացիներուն կողմէ։

Գաղութի հայոց թիւը վերջին տասնամեակներուն նոսրացած է։ Գործօն է Ս. Ստեփանոս եկեղեցին 1964ին, որ նորոգուած է 1958ին։

Արձանագրենք, որ Հալէպէն ոչ շատ հեռաւորութիւններու վրայ փոքրաթիւ հայեր բնակութիւն հաստատած են նաեւ հետեւեալ քաղաքներուն մէջ՝

- ԹԱՐԹՈՒՍ, ՊԱՆԻԱՍ, ՄՈՒՄՊՈՒՃ, ՃԼՍԸՐ, ՄԷՅՏԱՆ ԷՔՊԵՉ, ՍԵԼԵՄԻԷ, ՃԱՐԱՊԼՈՒՍ

**ՔԵՍԱՊ ԵՒ ՇՐՁԱԿԱՅԲ.** - Պատմութեան հնագոյն ժամանակներէն, հայկական Քեսապը գոյատեւած է իր ուրոյն բարբառով եւ աւանդութիւններով։ Շրջան մը, եղած է զուտ հայաբնակ։ Բնակչութեան զգալի աճ արձանագրուած է 16րդ դարուն։ 20րդ դարու սկիզբը՝ 6000, իսկ 1915ին բնակչութեան թիւը եղած է շուրջ 8000։

Աղէտի տարիներուն տեղահանութեանց եւ ինքնապաշտպանութեան պարագաներու ընթացքին, գոհուած է շուրջ 5000 անձ։

1950ական թուականներուն, 2000էն 2400 անձ ներգաղթած է Հայաստան։ Այնուհետեւ, տնտեսական եւ ընկերային ստեղծուած պայմաններուն բերումով, զգալի թիւ մը արտագաղթած է դէպի մեծ քաղաքներ՝ Միացեալ Նահանգներ, Գանատա, Եւրոպա եւ այլուր։

Ներկայիս տեղաբնակներու թիւը կը տարուբերուի 1500էն 1800ի միջեւ։ Գաղութին մէջ առկայ են միջնակարգ եւ նախակրթական վարժարաններ, հայկական կրօնական համայնքներու հովանաւորութեամբ։ Գործօն են եւ՝ Աւետարանական, եւ՝ Կաթողիկէ համայնքները եւս։

Գլխաւոր կրթական հաստատութիւնը՝ Ազգային Ուսումնասիրաց վարժարանը՝ հիմնուած է 1848ին, ներկայիս միջնակարգ եւ երկրորդականի բաժիններով։

1880ական թուականներուն կառուցուած է Ս. Աստուածածին եկեղեցին, փոխարինելով 17րդ դարէն աւանդ փոքր մատուռի մը, որ նոյն անունը կը կրէր։

Եկեղեցին բարեգործուած է 1973 եւ 1992 թուականներուն։

Քեսապ քաղաքը իր մերձաւորութեան մէջ ունի փոքր ու մեծ բազմաթիւ աւաններ՝ 30, 40 մինչեւ 400 հայ բնակիչներով։ Անոնցմէ ոմանք ունին իրենց յատուկ մատուռ կամ եկեղեցին։

Յիշատակելի են.  
- ԳԱՐԱՏՈՒՐԱՆ կամ Գալատուրան

Գիւղը 1913ին ունեցած է 1381 հայ բնակիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցին։ 2003ին՝ հայ բնակիչներու թիւը եղած է 450։

- ՄՈՎՈՒ ԹԱՂ

Ունի Ս. Սարգիս սրբավայրը եւ Ս. Գէորդ բնական աղէտով փլուզուած մատուռ, որ աւանդ է 16րդ - 17րդ դարերէն։

- ԷՍԿՒՒՐԻՆ, Ներքին Գիւղ Ունի Ս. Աստուածածին մատուռ եւ «Կղզիկ» ուխտատեղին։ 2009ին՝ 20 ընտանիք։

- ՊԱՇՈՐՏ, ԷՔԻՉ ՕԼՈՒՔ, ԽԱՅԻԹ, ՔԷՐԻՔԻՏԷՆ, ՍԵԻ ԱՂԲԻԻՐ, ՉԱԳԱՆՃԸՔ, ՉԻՆԱՐՃԸՔ, ՎԵՐԻ ՊԱՂՃԱՂԱՂ, ՎԱՐԻ ՊԱՂՃԱՂԱՂ

ԴԱՄԱՍՍԿՈՍ. - Հայեր Դամասուսում Շար.ք էջ 15

# ՀԱՅԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՄԷՋ

## Շարունակուած էջ 14-էն

կոսի մէջ հաստատուած են Բ.Ա., սկսեալ Մեծն Տիրգրանի տիրակալութեան ժամանակաշրջաններէն: Համապատասխան պատմական լի-շատակութիւններ կան սկսեալ 7-րդ դարէն:

Հայեր քաղաքին մէջ ստուարացած են արեւմտեան Հայաստանէն՝ Բաղէշի, Տիրգրանակերտի, Վանի, Խարբերդի եւ այլ շրջաններէն արտագաղթողներով: 11րդ դարուն, Դամասկոս նոյնիսկ հայ կառավարիչ ունեցած է, յանձին՝ հայազգի Պատր էլ ճամալիին:

Քաղաքը առաջին համաշխարհային պատերազմին դարձած է հայ աքսորականներու կարեւոր կայան: Հոն մէկտեղուած են շուրջ 30.000 հայ գաղթականներ: Պատերազմի աւարտին, անոնց մօտաւորապէս կէսը տեղափոխուած է Պէյրութ:

Յեղափոխութիւններու եւ քաղաքական աննպաստ պայմաններու հետեւանքով, հայութիւնը նուազած է իջնելով 5-6 հազարի:

Գլխաւոր եկեղեցին է՝ Ս. Սարգիսը 15-րդ դարէն, Անարատ Յղութիւնը՝ 1963-էն, եւ Թագուհի Տիեզերաց Կաթողիկէ եկեղեցիները:

Մայրաքաղաքին մէջ գործուն են գլխաւորաբար թարգմանչաց ձեմարանը, 1898, հայ Աւետարանական վարժարանը՝ 1925, Ազգային Միացեալ վարժարանը՝ 1929 եւ միութեանական ու համայնքային այլ վարժարաններ:

**ՀՈՄՍ.** - Հայկական Դամասկոս ճամբու կիսուն՝ Հոմոս, արեւմտեան Սուրիոյ մէջ կարեւոր քաղաք է: Հայեր հոն ունին Ս. Մեսրոպ եկեղեցին եւ Ազգային Սահակեան Նախակրթարանը: Վերջին երկամեակի քաղաքացիական կռիւններու ընթացքին, եկեղեցին եւ դպրոցը եղան տուժող առաջին հաստատութիւնները:

**ՀԱՄԱ.** - Հոմսին մերձակայ մեծ այս քաղաքին մէջ, կայ փոքրաթիւ Հայ գաղութ մը:

Հայեր՝ Յետ եղեւնի Սուրիոյ Հիւսիսային եւ Հիւսիս Կեդրոնական Տարածքներուն Մէջ:

**ԳԱՄԻՇԼԻ.** - ձեզիրէ նահանգին մէջ գլխաւոր քաղաք, ուր կազմուած է տարածաշրջանի հայկական գլխաւոր գաղութը:

Քաղաքը 6-7 քիլոմէթր հեռաւորութեամբ, սահմանակից է պատմական Մծբին քաղաքին, որ Նուսէյպին անունով ներկայիս կ'իջնաց թուրքիոյ մէջ, Սուրիոյ հարաւ արեւմտեան սահմանագծին վրայ:

Յեղասպանութեան ջարդերէն բեկորներ, մասնաւորաբար Տարօնի աշխարհէն, Տիրգրանակերտէն, Ուրֆայէն..., կ'ապաստանին այս քաղաքին մէջ:

1932ին, հոն կը հիմնուի եկեղեցի եւ ի յիշատակ Մծբնայ հայրապետին՝ կ'անուանուի Ս. Յակոբ:

Նոյն տարին, հիմը կը դրուի նաեւ ազգային վարժարանին, որ ուսուցանելով շրջան մը կը դառնայ Սուրիոյ ամենահոծ թիւով դպրոցը, շուրջ 1350 երկսեռ աշակերտութեամբ:

Հայկական գաղութը լաւագոյն պարագային հաշուած է 18էն 20 հազար անձ: Ներկայիս այդ թիւը, 5-6 հազարով նուազած է, իջնելով 12-13 հազարի:

Շրջանի կարեւորութիւնը նկատի առնելով, Բերիոյ Թեմի

ազգային իշխանութեանց որոշումով, 1942ին Գամիշլիի մէջ հաստատուած է Բերիոյ Թեմի Առաջնորդութեան Փոխանորդութիւնը:

Երկար տարիներ հոն պաշտօնավարած են հոգեշնորհ Տ. Խորէն վրդ. Բարոյեան, հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս եւ հոգեշնորհ Տ. Տաճատ Վրդ. Ուրֆայեան, հետագային արքեպիսկոպոս եւ թեմակալ առաջնորդ Լիբանանի:

1945-46 եւ 1962-63 թուականներուն, զգալի թիւ մը հայերէն, կը ներգաղթէ Հայաստան:

Քաղաքին մէջ գործուն էր Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքները իրենց եկեղեցիներով եւ կրթական հաստատութիւններով:

Աշխոյժ գործունէութիւններ կը ծաւալէին հայկական մշակութային, բարեսիրական, մարզական եւ հայրենակցական միութիւններ:

Ազգային եփրատ Միջնակարգ վարժարանը 2000 թուին արձանագրած է շուրջ 900 աշակերտ: Իսկ վերջին տարիներուն մօտաւորապէս՝ 800:

**ՀԱՍԱՔԻ Կամ Հասիչէ.** - ձեզիրէի նահանգապետին նստավայր քաղաքը: Կը գտնուի Գամիշլիէն դէպի Տէր Զօր՝ շուրջ 80 քլմ. հեռաւորութեան վրայ:

Հայ գաղութը հոն կը հաշուէ շուրջ 80 ընտանիք: Եկեղեցին՝ Ս. Յովհաննու Կարապետը, հիմնուած է 1938ին եւ կառուցուած՝ 1942ին: Գործուն է Ազգային Մեսրոպեան վարժարանը, սկսեալ՝ 1939էն:

**ՏԵՐԻՔ - ՄԵԼԻՔԻՆ.** - Սուրիական եւ Թրքական երկար սահմանագծի հիւսիսի ծայրագոյն շրջանին մէջ քաղաք՝ Իրաքի մերձաւորութեամբ:

Հայկական գաղութը կը հաշուէ շուրջ 100 ընտանիք: Ունի եկեղեցի, Ս. Աստուածածին եւ Ազատութիւն անունով ազգային վարժարան, սկսեալ՝ 1945-էն:

2000 թուին աշակերտութեան թիւը եղած է 120:

**ԱՄՈՒՏԱ.** - Սուրիական-Թրքական երկար սահմանագծին վրայ, Գամիշլիէն շուրջ 30 քլմ. Դէպի արեւմուտք քաղաք, որ ունի պատմական հնագոյն անցեալ: Ականաւոր գրող Ստեփան Ալաճաճեան այդ մասին ունի ակնարկ իր «Պատմութեան վրէժներ» գրքին մէջ: Շրջան մը գաղութը հաշուած է անելի քան 200 անձ: Հոն գործած է Ազգային վարժարան մը: Եւ շուրջ 10, գաղութը նոսրացած է. ընտանիքներ ուղղուած են Գամիշլի կամ Հայկա:

**ՏԵՐՊԵՍԻՆ.** - Դարձեալ Սուրիական-Թրքական սահմանագծին վրայ քաղաք Գամիշլիէն շուրջ 60 քլմ. դէպի արեւմուտք: Հոն հաստատուած է փոքրաթիւ հայկական գաղութ: Շրջան մը եռուն կեանք ապրելէ ետք, գաղութը նոսրացած է դէպի Հայկա եւ Գամիշլի տեղափոխութիւններով:

**ՌԱՍ ԷԼ ԱՅՆ.** - Սուրիական-Թրքական սահմանագծին վրայ, Գամիշլիէն դէպի արեւմուտք շուրջ 120 քլմ. Հեռաւորութեամբ քաղաք, որ ցեղասպանութեան շրջանին եղած է հաւաքական սպանդներու վայր: Մնացորդացէն, հոն հաստատուած հայեր, ակնատես եղած են հաւաքական փոսերու մէջ հայկա-

կան մեծաքանակ աճիւններու փաստին:

Փոքրաթիւ հայ գաղութը 1930ին հիմնած է եկեղեցի՝ Ս. Յակոբ, որ նորոգուած եւ վերանորոգուած է 1941 եւ 1957 թուականներուն: Եկեղեցույ կողքին կը գործէ Ս. Սահակ կիրակնօրեայ վարժարանը:

Դպրոցը հիմնուած է 1932ին Ազգային Նահատակաց վարժարան անունով:

2000 թուին, աշակերտութեան թիւը եղած է 270:

**ԹԷԼ ԱՊՒԱՏ.** - Միշտ Սուրիական-Թրքական երկար սահմանագծին վրայ, կարեւոր քաղաք մը:

Յեղասպանութեան բեկորներ հոն կազմած են փոքրաթիւ գաղութ մը: Ներկայիս շուրջ 40 ընտանիք: Եկեղեցին՝ Ս. Խաչ, հիմնուած է 1930-1932ին: Նոյն թուին հաստատուած է նաեւ Ազգային Խորէնեան վարժարանը:

**ՐԱՔՔԱ.** - Սուրիոյ կեդրոնական շրջանին մէջ, համանուն նահանգի կեդրոնական քաղաք:

Յեղասպանութենէն մնացորդներ հոն կը հիմնեն Ս. Աստուածածին եկեղեցին 1922ին: Կիրակնօրեայ դպրոցը կը կոչուի Սրբոց Թարգմանչաց: Ազգային նախակրթարանը կը գործէ 1924էն սկսեալ:

1980ին, գաղութը իրականացուցած է հայ կեդրոն-սրահ Ս. Մեսրոպ Մաշտոց անունով: Համայնքը ներկայիս կը հաշուէ շուրջ 250 ընտանիք:

**Տէր Զօր.** - Յեղասպանութեան հայ նահատակներու անթիւ եւ անհաշուելի խորհրդանիշ քաղաք եւ շրջան:

Տէր Զօրը համանուն նահանգին եւ նահանգապետութեան նստավայր է: Փոքրաթիւ հայ գաղութը 1928ի սկզբնական շրջանին կը վարձէ բակով տուն մը գործածելու համար իբրեւ աղօթատեղի եւ դպրոց: 1931ին կը հիմնուի Ս. Հռիփսիմէ եկեղեցին, որուն օծումը կը կատարէ Հայկալի առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմէյեան: Եկեղեցույ մէջ կ'ամփոփուի նահատակներու աճիւններ:

1984ին, Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգիսեան կը կատարէ եկեղեցույ հիմնարկէքը:

Եկեղեցույ հանդիսաւոր օծումը Սրբոց Նահատակաց անունով, տեղի կ'ունենայ 1991ի Մայիսի սկիզբը 3-4 Մայիսին:

2002ի Ապրիլի 24ին, Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսի սրբազան կոնդակով, Տէր Զօրի Արբոց Նահատակաց Յուշահամալիրը կը հուշակուի Համազգային Ուխտատեղի:

Ներկայիս Տէր Զօրի գաղութը կը հաշուէ շուրջ 20 ընտանիք:

**ՄԱՐԿԱՏԷ.** - Կը գտնուի Տէր Զօր նահանգին հիւսիս-արեւելքը,

շուրջ 90 քլմ. հեռաւորութեամբ: Անպատասխան շրջան:

Հոն՝ Բերիոյ Թեմի Ազգային իշխանութեանց կողմէ կառուցուած է Յուշակոթող Մատուռ՝ Ս. Յարութիւն անունով: Մեծաթիւ նահատակներու աճիւններուն բացառապէս տուած է Սուրիական պետութեան կողմէ ճանապարհային շինութեանց ընթացքին:

Մարկատէի մէջ հայ գաղութ չկայ:

**Տէր Զօր մեկնող հայ ուխտաւորներ կ'աչցելեն Մարկատէի Ս. Յարութիւն մատուռը, իբրեւ երկրորդ ուխտատեղի:**

\*\*\*\*  
**ԿԱՐԵԻՈՐ.** - Նկատելի է անշուշտ, որ Սուրիոյ հիւսիսային եւ կեդրոնական շրջաններու յիշեալ քաղաքներէն մէջ հայ գաղութներու գոյառումը իրենց եկեղեցիներով եւ դպրոցներով սկսած է յետցեղասպանութեան տարիներու առաջին տասնամեակներու ընթացքին:

Անկասկած մեծ թիւ մը գաղթականներու հաստատուեցաւ նաեւ հնագոյն գաղութներուն մէջ, Հալէպէն մինչեւ Դամասկոս, մինչեւ Լաթաքիա եւ այլուր:

Պէտք է ակնյցնել սակայն, որ հիւսիսային շրջաններուն մէջ, որոշ չափով Գամիշլիի մերձաւորութեամբ, բազմաթիւ հայ ընտանիքներ դաշտային եւ բանուորական աշխատանքներով կայք հաստատեցին նաեւ փոքր ու մեծ այլ գիւղերու եւ աւաններու մէջ, ուր որ կարելիութիւն կը տեսնուէր կեանքը վերապրելու:

Կը յիշատակենք նման փոքրաթիւ աւաններու, գիւղերու կամ գիւղաքաղաքներու անուններ եւս.

- **ԹԷԼ ՔԷՕՉԷՔ. ԱՅՆ ՏԻՈՒԱՐ. ԱՅՆ ԱՐՈՒՍ, ԹԷԼ ՊՐԱՔ, ԱՐԱՔ ԲՈՒՆԱՐ**  
\*\*\*\*\*

Յ.Գ. եւ Ծանօթ. Թէ' մեծ, քէ' փոքր բաղաձնբուն մէջ, կարելի չէ գտնել արժանահատ աղբիւր արձանագրելու համար գաղութներու մէջ գոյութիւն ունեցող հայերու գոնէ մօտաւոր քուսակաւորը:

Այդ մէկը՝ քէն կը պակսի նոյնիսկ Միացեալ Նահանգներու եւ Գերմանիայի մէջ, հակառակ երկիրներուն բաղաձնական կայուն վիճակին:

Կազմակերպութիւններ եւ եկեղեցական իշխանութիւններ կրնա՞ն յաջողիկ այդ նպատակին մէջ: Անշուշտ լաւ է յուսալ եւ ակնկալել:

Աղբիւրներ  
Բերիոյ Թեմի Կայքէջ  
Ս.Ա.Հ.Հ. Հանրագիտարան թիւ 10

Հայերն Աշխարհում Եր. 1995  
«Հայ Սփիւռք» Եր. 2003

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ՇԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ**

---

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ՇՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ԽԱՉԿԵՐԱՑ...

#### ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Սեպտեմբեր ամսուայ երրորդ կիրակի, Քրիստոնեական վարդապետների կողմից սահմանուած խաչվերաց տօն է: Արմէն-Հայերը, ինչքա՛ն շատ Քրիստոսի հաւատամքի փառաբանման եւ իրենց նախնիների ազգային ու ծպտեալ տօներ տօնախմբում: Ինչքա՛ն շատ են նրանց յիշատակութեան արժանի պատուներն ու աւանդութիւնները: Արմէն-Հայերը, այս աշխարհի արեւմտեան կողմն էլ բերել են իրենց պատմութիւնը, մեծերի մատեաններ, որ իրենց հոգիների տաճարներում պատարագեն Հայկ Նահապետի իմաստութեան ոգին, նրա լոյսից վառեն իրենց սրտերի կարմիր ջահերը: Արմէն-Հայերը, այս երկրի առանձին նահանգներում հիմնադրել են՝ Հայ Տուն-տուններ, տարեցների առողջապահական կեդրոններ, ժողովրդային հաւաքատեղիներ, ինչպէս նաեւ իմաստուն հակաՍարոյեանի աւետումով՝ Հայաստան՝ Փոքր Հայաստան: Այնտեղ են տօնախմբում Քրիստոնեական ու ազգային եւ նաեւ իրենց բանաստեղծների, իմաստունների յոբելեանների տարեդարձներ: Ի՛նչ աւելնով են կատարում այդ տօնախմբութիւնները, դահլիճների պատերն են դողում ծպիերի որոտներից, ուրախ բացականչութիւններից: Ծիծաղում են տարագիր Արմէն-Հայերը, դէմքերն են վարդանում տօնախմբութիւնների արթնած ոգու կրակից: Չէ՛... նրանց "Հայ" են ասում, "Արի" մարդկանց զարմից արեւորդիներ են նրանք, մանչերը ու նրանց մանչերն էլ դեռ Աստուծոյ հետ հաղորդակցելու Հայերէնով են բարբառում: Գիտէ՞ք, որ տարեցների առողջապահական մի կեդրոնում տարեց մի Արմին Հայ կայ, որ պատարագում է իրենց նախնիների տիեզերական հաւատքի աստուածներին: Ինչո՞ւ սպանեցին նրանց, մարեցին նրանց իմաստութիւնը, նրանք Արմէն-Հայերի հազար-հազար տարիների պատմութեան շղթայի ամուր օղակներից էին: Ուրիշ ազգեր, իրենց նախնիների աստուածներին, նրանց տները տանում իրենց հետ, պատարագում նրանց իմաստութիւնը:

«Հայ տներ»ը, տարեցների առողջապահական կեդրոնները տօնական օրերին պճնւում են հազար գոյնի ծաղկունքով, արեւի ծիածալից քաղած գոյնների դրօշներով: Տարեցներն են այնտեղ ժամանում տօնական հագուստներով: Արեւ աստուած Միհրի լոյսն է հոսում պատուհաններից: Եթէ մի պահ գոցէիր ակներդ, ընկողմանէիր երկնի կապույտի մէջ, պիտի տեսնէիր լուսնեակի շողոտ լոյսով հրեշտակների էջքը սրահ, իրենց ակնապարար լոյսով վարարում տարեցների հոգիները, այնտեղ հոսում խաղաղութեան անդորրի հրայրք: Նախնիների պատուների տօնախմբութիւններին, ով կարող էր բացել հոգու երեւակայութեան պատուները, պիտի տեսնէր կրակարեւ աստուած Արա՛ն, Արմինների աստուածների հետ հրճւում, ծիածանի հազար գոյնի լոյս հոսում տարեցների վրայ:

Տարեցներն էին առողջապահական կեդրոնի սրահում, նրանց ակներից յորդած լոյսի շողերից, դէմքերից հոսած կարմիր խնդուքից սրահում ծիածան էր վառւում: Խաչվերաց տօնի հանդիսու-

թիւն էր: Խաչ էին գետեղել սեղանիկին, կարմիր մոմեր շուրջ բոլորը, մոմերի լոյսի կրակից կարմիր էր հոսում, կարծես իրենց Յիսուսի արիւնն էր գեղում: Առողջապահական կեդրոնի սրահի դեկավարն էր խնդրում միաձայն երգել՝ "Առաւօտ լուսոյ" արեւածագի մաղթանքը, վկայ, որ իրենց ծինեցում դեռ էջր մարել կրակարեւ աստուած Արա՛-Միհրի փառաբանումը, Արմէն-Հայերի յիշողութիւնը զօրաւոր է: Եւ անուշ երգում էին, նրանց ձայները հասնում ո՞ւր, Արա՛-Միհրի արեւի-կրակի տաճար, թէ՛ իրենց նոր հաւատքի երկնային Աստուծոյ պաշտամունքի տուն:

Առաւօտ լուսոյ,  
Արեգակն արդար,  
Առ ի լոյս ծագեալ:  
Բիխումն ի ձօրէ,  
Բիխեա՛ ի հոգւոյս,  
Բան ինչ ի հաճոյս:

Կեդրոնի մասնակիցներից տարեց մի Հայ շարականներ է երգում: Սրահն էր լցուել Արմէն-Հայերի երգի առաքեալ՝ Կոմիտաս վարդապետի հոգուց, սրտի ծովակներից հրաբխացած Յիսուսի գոհաբերութեան պատարագի շարականներ

հնչիւններով, նրանց հոգեհրաշ լոյսը անձրեւում տարեցների սրտերին: Արի Արմէն-Հայերը այդ ինչպէ՛ս ընկալեցին սիրոյ, խաղաղութեան, յարութեան լոյսի, բարութեան տիեզերական խորհուրդը: Շարականներ հայոց վարդապետների՝ Մեսրոպի, Սահակի, Խորենացիի, Նարեկի, Շնորհալիի, Տաթևացիի, որոնք այնտեղ յորդել են արեւից քաղած լոյսը, երկնային կապույտի ժպիտի խորհուրդը, տիեզերքի մրմունջը, որոնց հնչիւնները աստղեր գրկած թափուում մարդկանց սրտերին: Վարդապետները, փլատակուած մեհեանների վրայ բազմած իրենց տաճարներում, արդեօք չերկնեցի՞ն նաեւ շարականներ՝ իրենց նախնիների աստուածների բնութեան պաշտամունքի տիեզերական հաւատքի խորհուրդից: Լուռ երկիւղածութեամբ, վերացած, անէացած պիտի ունկնդրել շարականները, որ հոգիդ դողայ նրանց արեւային շողի ժպիտով, որ երկնային խաղաղութեան կապույտ ցողը իջնի սրտիդ, որ վահագն Յարդաղողի ճանապարհի հին աստուածների տաճարներից բխած լոյսը իջնի խորանի պատուին Յիսուս մանչը գրկած աստուածամայր Մարիամի ակներին:

Խաչվերաց տօնը խորհրդանշա-

շում է խաչին վերեւ բարձրացնելը ի տես հաւատացեալ մարդկանց, որ նրա թեւերին վառւող լոյսը հոսի նրանց սրտերին, որ այնտեղ խաղաղութիւն լինէր: Խաչվերացը համաքրիստոնեական տօն է: Բարեբախտաբար այն չի առնչւում Արմէն-Հայերի նախնիների հին հաւատքի աստուածների փառաբանման որեւէ պաշտամունքային տօնակատարութեան խորհուրդին:


Բիւզանդիայի կայսր՝ Կոնստանդինը, երեք հարիւր տասներեք թուականին, Միլանի հրովարտակով, Քրիստոնեական հաւատքը հանդուրժելու ու այն ազատօրէն դաւանելու իրաւունք է շնորհել: Իսկ երեք հարիւր քսան չորս թուականին հրամայել է շարունակել հանդուրժել նախնիների հեթանոսական անուանուած հաւատքը, թողնել կանգուն նրա պաշտամունքի տաճարները, կառուցել նոր հաւատքի տաճարներ-եկեղեցիներ: Կոնստանդին կայսրը հայոց Տրդատ Գ. թագաւորից միայն տասներկու տարի յետոյ արտօնել էր Քրիստոսի ուսմունքի ու նրա խորհրդանշալի խաչի հաւատքի պաշտամունքը: Խելամիտ, կշռադատ կայսրը չէր արտօնել քանդել նախնիների հան-

Շար.ը էջ 19

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**  
 ԵՒ "Քաջ Նապար" հանդէսն ու հեռուստաժամը  
 Ներկայացնում է  
**14-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ**  
 Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳԻ ԲԻՄՆԱԳՐԱՄԻ, ԲՍՅԱՍՏԱՆԻ  
 ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲՍՇՄԱՆԳԱՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

**Կիրակի, Սեպտեմբեր 29, 2013, ժամը 2-12:00**

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**  
Since 1999  
 and "KACH NAZAR" Magazine & TV Show  
**Presents 14<sup>th</sup> ANNIVERSARY NATIONWIDE TELETHON ON SUNDAY, SEPTEMBER 29, 2013**  
**From 2:00pm-12:00am**  
**FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES**  
 P.O. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880  
 E-mail: Forourkids99@gmail.com • Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity



**AMGA CHANNEL 380  
AABC CHANNEL 384  
VISION TV CHANNEL 382**

**GENERAL SPONSORS**

<b>WELLS FARGO</b>	<b>ՀԱՅ ՊԵՂՍՈՒՆ</b>	Guest of Honor <b>Leroy D. Baca, Sheriff</b> County of Los Angeles Sheriff's Department	Guest of Honor <b>Frank Quintero</b> Glendale City Council Member	<b>AYVAZIAN</b> Realty Management
<b>KOHAR</b> Symphony Orchestra and Choir	<b>KRADJIAN</b> Importing Co., Inc.	Alice Navasargian THE IMMORTALS	<b>Sadaf</b> FOODS	<b>HELEN Bakery</b> Gevorgyan Family
<b>HAIG PHARMACY</b>	MR. AND MRS. <b>HAROUT AND OZHEN BROUTIAN</b>	MR. GRIGOR AIVAZIAN HONORARY PRESIDENT OF ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND	<b>ABALI</b>	<b>ABALI</b>
<b>SUPER KING MARKETS</b>	<b>Raffi's Place</b> GOURMET CUISINE	MR. AND MRS. <b>GEORGE AND SALPI DADAMIAN</b>	<b>GOLDEN FARMS</b>	<b>ԱԲԱԼԻ ԲԱԿԵՐԱՆԻԱՆ</b> DR. ALBERT BAKTERIAN, M.D. Eye Physician and Surgeon
<b>United Shipping Group</b> Tel: (818) 291-9303	<b>GLENDALE WEST PHARMACY</b>	DR. AND MRS. <b>ARAM AND SILVA KARAKASHIAN</b>	MR. AND MRS. <b>ARKADY AND IRA OVANESSIAN</b>	<b>Yerevan PRINTING</b>
<b>United Shipping Group</b>	<b>GLENDALE WEST PHARMACY</b>	<b>Sarkis Topalian</b> Tel: 818 246 2070	<b>Universal Travel &amp; Tours</b>	

### ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎՈՒՆ ՈՒՏԵԼԻՔՆԵՐԸ ՕԳՏԱԿԱՐ ԵՆ ՄՐՏԻ

Ըստ ուսումնասիրութեանց՝ Միջերկրական ծովը եզերող երկիրներու սննդականոնին վրայ հիմնուած ճաշատեսակներ ուտելը, երեք ամիսներու տեւողութեամբ, կրնայ սրտի հիւանդութիւններէ տառապելու վտանգները նուազեցնել 15 առ հարիւր տոկոսով:

Փրանսայի Մարսիլիա քաղաքի բժշկական բաժանմունքէն խումբ մը բժիշկներ նկատեցին, որ առողջ սիրտը, որ ազդեցութիւն կը կրէ միջերկրականեանի շրջանի հետեւած սննդականոնէն, որ հարուստ է հատեղէնով, պտուղներով, բանջարեղէնով, ընդեղէնով, ձուկերով, ձիթալիւղով, կարմիր միսերով, կ'արձանագրէ վիճակագրական լաւ տուեալներ:

Քննարկողներ ուսումնասիրութեան ենթարկած են 212 այր եւ կին մարդիկ, որոնք որոշ չափով ենթակալ են սրտի հիւանդութիւններէ տառապելու վտանգին, որպէսզի հետեւին Միջերկրական ծովու երկիրներուն յատուկ սննդականոնին կամ միաշափ սննդականոնին, որ երեք ամսուան տեւողութեան վրայ կը նուազեցնէ ճարպերու տոկոսը: Մասնակցողներուն ցուցում տրուած է հետեւիլ միջերկրականեան երկիրներու սննդականոնին՝ շաբաթական չորս անգամ ձուկ եւ մէկ անգամ կարմիր միս ուտելով:

Տղամարդոց արտօնուած էր

օրական երկու գաւաթ կարմիր գինի խմել, մինչ կիրներուն՝ մէկ գաւաթ:

Քիչ ճարպով սննդականոնի հետեւող անձերուն տրուած էր հետեւեալ ցուցումը. հաւ ուտել՝ միսի եւ խոզի միսի փոխարէն, ինչպէս նաեւ ձուկ ուտել շաբաթը երկու կամ երեք անգամ, պտուղը եւ կանաչեղէնը եւ քիչ ճարպով կաթի արտադրութիւնները նոյնպէս կարելի է սպառել:

Միջերկրականեան երկիրներու սննդականոնին հետեւողներուն մօտ քոլեսթրոլի քանակը նուազած էր 7.5 առ հարիւր տոկոսով, մինչ միայն 4.5 առ հարիւր տոկոսով նուազած էր անոնց մօտ, որոնք քիչ ճարպով ուտելիքներ կը սպառէին: Հիմնուելով այդ նուազումներուն վրայ՝ ուսումնասիրողները գտած են, թէ սրտի երակներու խոցումի հիւանդութենէ տառապելու վտանգը 15 առ հարիւր տոկոսով պակաս է միջերկրականեան երկիրներու յատուկ սննդականոնի հետեւելով, մինչ նոյն վտանգը 9 առ հարիւր տոկոսով պակաս է այդ խմբակին մօտ, որ քիչ ճարպով սննդականոնի կը հետեւի:

Ուսումնասիրողները եզրակացուցած են, թէ երկու սննդականոններն ալ կը նուազեցնեն սրտային երակներու խոցումի հիւանդութենէ տառապելու վտանգը՝ ընդհանուր առմամբ նման տոկոսով:

### ԿԱՆԿԱՌԻՆ ԵՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

#### ԿԱՆԿԱՌ

Իւրօրինակ տեսքով այս բոյսին հայրենիքը Հիւսիսային Ափրիկէն է: Ան հարուստ է փոթասիւնով, քալիումով, երկաթով եւ ծծումբով: Տերեւները կը պարունակեն cynarin կոչուող նիւթը, որ կը նպաստէ մազէի արտադրումին եւ ունի լեղամուղ յատկութիւն:

Կանխառը թելադրելի է լեարդի հիւանդութիւն ունեցողներուն, յատկապէս ալքոհոլը չարաչարողներուն: Ան կը բարձրացնէ սեռային աշխուժութիւնը, սերմնահեղուկի արտադրութիւնը, ունի միզամուղ յատկութիւն, կը նպաստէ արեան մէջ քոլեսթրոլի քանակի նուազումին՝ կանխելով երակներու կարծրացումը:

#### ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ

Անոր մշակումը սկսած է Մեքսիքայի մէջ: Ան բրինձի եւ ցորենի կողքին կը նկատուի գլխաւոր սննդարար ընդեղէն մը: Անոր 100 կրամը կը պարունակէ 88 քալորի: Եփած եգիպտացորենը

աւելի սննդարար է, քան հումը: Եփելէ ետք կ'աւելնայ անոր հականերիչ ազդեցութիւնը. իր ֆերուլիք կոչուող նիւթին շնորհիւ է, որ 100%-ով կ'աւելնայ 50 վայրկեան զայն եփելէ ետք:

Եգիպտացորենը հարուստ է բնաթելով, որ կը նպաստէ «գէշ» քոլեսթրոլի քանակի նուազումին: Անոր մագմզուկներու եփուկը կ'օգտագործուի տարբեր պատճառներէ յառաջացած այտուցներու, միզամանի բորբոքումին, արեան մակարդէլիութիւնը եւ պիլիոուպինի քանակը պակսեցնելու համար, շաքարախտի ու ախորժակի կորուստի պարագային:

Անոր մագմզուկները կէս ժամ ձգել ետք ջրովի մէջ եւ խմել որպէս միզեցուցիչ ու մաքրող թէյ, որ աւելի հաճելի դարձնելու նպատակով կարելի է անոր աւելցնել մեղր կամ կիտրոնի հիւթ:

Եգիպտացորենը՝ որպէս թեթեւ եւ սննդարար ուտելիք, նախընտրելի է երեխաներուն:

### Հ.Բ.Շ. Մ.-Ը ՊԱՏՈՒԵՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

շարժումին, որպէսզի մեր հայրենակիցները խաղաղ եւ ապահով ապրին իրենց տուններուն մէջ:

Պրն. Պաղտասարեան խորութիւն չի դնէր եկեղեցական կողմի եւ կամ կուսակցական թեքումի պատկանող որեւէ կազմակերպութեան միջեւ իր ըրած բարեգործ աշխատանքներուն համար, այնքան ատեն որ անոնք կը հետապնդեն ազգօգուտ նպատակներ: Նոյնպէս եզրակացուց նորընտիր ատենապետը, կ'ուզէ որ բոլոր հայերը անխտիր մասնակցին Հիմնադրա-

մի կազմակերպած դրամահաւաքի շատ կարեւոր արշաւին՝ առանց վերապահումի, որովհետեւ այդ բոլոր պիտի նպաստեն մեր Հայրենիքի եւ Արցախի բարգաւաճման ու յարատեւ զարգացման:

Պրն. Պաղտասարեանի տպաւորիչ էլոյթէն ետք խօսք առաւ Armenian Observer շաբաթաթերթի տէր եւ տնօրէն փրոֆ. Օշին Քէշիշեան: Ան վերահաստատեց Պրն. Պաղտասարեանի կոչը՝ օգնելու Համահայկան Հիմնադրամին, որուն նպատակն է օժանդակել մեր հայրենիքի բարօրութեան եւ ժողովուրդի անմիջական կարիքներուն:

### ՅԱՆԴՈՒԳՆ ԵՍ

Կեանքիդ ընթացքին ի՞նչպէս կը յառաջանաս. անվա՞խ, առանց վտանգները նկատի՞ առնելու, թէ հաշիւով եւ բոլոր հաւանականութիւնները աչքի առաջ ունենալով:

Իմանալու համար պատասխանէ՛ այս փորձ հարցարանին հարցումներուն, ապա կարդա՛ արդիւնքները:

- Նախակրթարանի տարիներուն  
Ա) Դասարանին խեղդատակն էիր: (0 կէտ)  
Բ) Մնացուն կերպով պատժուողն էիր: (3 կէտ)  
Գ) Լքուածն էիր: (5 կէտ)
- Երբ քեզի «ոչ» ըսէն  
Ա) Բացատրութիւն կը պահանջես: (3 կէտ)  
Բ) Կը ջղայնանաս: (5 կէտ)  
Գ) Չես պնդեր: (0 կէտ)
- Վերջին անգամ որ ստեցիր  
Ա) Իրականութիւնը գեղեցկացնելու համար էր: (3 կէտ)  
Բ) Անել կացութենէ մը դուրս գալու համար էր: (5 կէտ)  
Գ) Ընկեր մը փրկելու համար էր: (0 կէտ)
- Սեպէ, որ «ժամանակին մէջ ճամբորդութիւն» մը շահեցար:  
Ա) Կ'որոշես շրջապտոյտ մը կազմակերպել անցեալին մէջ: (3 կէտ)  
Բ) Կ'որոշես հետագօտել ապագան: (5 կէտ)  
Գ) Ժամբորդութիւնը կը գիշիս ընկերոջ մը: (0 կէտ)
- Կը կասկածիս, որ սիրած անձդ կը դաւաճանէ քեզի  
Ա) Կը խաբես՝ «աչքերովս տեսայ» ըսելով: (3 կէտ)  
Բ) Կը հետապնդես: (5 կէտ)  
Գ) Կ'ուզես չմտածել այդ մասին: (0 կէտ)
- Հարագատներէդ մին գործէն կը հրաժարի՝ իր բախտը փորձելու ալ երկրի մէջ  
Ա) Կը քաջալերես: (5 կէտ)  
Բ) Կը զգուշացնես, որ պիտի զղջայ: (3 կէտ)  
Գ) Ինչն՞ է. եթէ իսկապէս իր գործէն հաճոյք եւ գոհացում չի ստանար: (0 կէտ)
- Կարելոյ ժամադրութիւն մը ունիս, պատրաստ ես մեկնելու, բայց տան բանալիները կորսնցուցած ես:  
Ա) Կը մեկնիս՝ դուռը բաց ձգելով: (5 կէտ)  
Բ) Դրացիէ մը կը խնդրես, որ գալ եւ սպասէ մինչեւ վերադարձդ: (3 կէտ)
- Կ'որոշես յետաձգել ժամադրութիւնդ: (0 կէտ)
- Նշանաբանդ է՝  
Ա) «Դրամին պատճառած վէրքը մահացու չէ»: (10 կէտ)  
Բ) «Բոլոր հակիթները նոյն կողովին մէջ դնելու չէ»: (5 կէտ)  
Գ) «Արջին մորթը ծախու չեն հաներ զայն սպաննելէ առաջ»: (0 կէտ)
- Բախտագուշակ մը կ'ըսէ, թէ կեանքիդ մէջ փոփոխութիւն մը պիտի մտնէ  
Ա) Հետաքրքրուած՝ յաւելեալ տեղեկութիւն կ'ուզես: (10 կէտ)  
Բ) Մտահոգ՝ յաւելեալ տեղեկութիւն կ'ուզես: (0 կէտ)  
Գ) Չարմացած՝ յաւելեալ տեղեկութիւն կ'ուզես: (5 կէտ)
- Փաստելու համար որ անվախ ես, պատրաստ ես՝  
Ա) Հրէջը դառնալու: (0 կէտ)  
Բ) Բարձր ժայռէն ցատկելու: (5 կէտ)  
Գ) Ամազոնը հետազօտելու: (10 կէտ)
- Եթէ քեզի երկրորդ աւիթ մը տրուէր, կ'ըլլայիր  
Ա) Մեծ լրագրող մը: (10 կէտ)  
Բ) Քաղաքական դէմք մը: (5 կէտ)  
Գ) Թանգարանի մը տնօրէնը: (0 կէտ)

#### ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

- Եթէ հաւաքած ես 0-էն 27-ի միջեւ կէտեր.- վտանգէն կը սարսափիս եւ ամէն կողմ վտանգ կը տեսնես: Նուաճումները ուրիշներուն ձգած ես, քանի որ ուսք առնել չես ուզեր եւ առաջին իսկ արգելքին ետդարձ կ'ընես: Եթէ այսպէս հանդիստ կ'ընես, ըսելիք չկայ, վայց եթէ դուն քեզ ընկճուած ու պրկուած կը զգաս, փորձէ քիչ-քիչ փոխել ընթացքդ:

- Եթէ հաւաքած ես 28-էն 50-ի միջեւ կէտեր.- Ռիսք առնող չես, բայց եթէ իսկապէս կ'արժէ դիմել ատոր: Գիտակից ես կարողութիւններուդ ու սահմաններուդ եւ կը մերժես աչքերդ փակ պարապութեան մէջ նետուիլ: Հաշիւներդ լաւ կ'ընես՝ որեւէ գործի չձեռնարկած, ուրիշներուն կարծիքին կը դիմես, ժամանակը կ'առնես մտածելու եւ ըստ այնմ որոշում տալու: Ժիշը ընթացքի մէջ ես, բայց քիչ մը յոգնեցուցիչ՝ շրջապատիդ համար, որ արագ եւ վճռական պատասխան կը սպասէ քեզմէ:

- Եթէ հաւաքած ես 51-էն 75-ի միջեւ կէտեր.- Ամէն բանի պատրաստ ես, բան մը չի կեցներ քեզ: Քեզ կը նեղացնէ միօրինակ եւ խաղաղ կեանքը: Կը սիրես «ստիպողական վիճակ»ներ՝ ապրիլ:, վտանգը չի վախցնէր քեզ, ընդհակառակն՝ կը խթանէ:

ՀԲԸ Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Պրն. Գրիգոր Գարակէօզեանի շնորհակալական խօսքերով վերջ գտաւ մեծաշանքի այս խիստ գնահատելի հանդիսութիւնը: Սրահի զարդարելու գործը վատահուած էր արուեստագետ Մանուկ Սաթմեանին: Վարձքը կատար կազմակերպիչ յանձնախումբի բոլոր անդամներուն:



ԲԱԶՄԱԲԵԻԹԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակում էջ 6-էն

կազմավորումների դեբոս: Այդ կառույցները միշտ ոչ միանշանակ եւ խճճուած յարաբերութիւններ են ունեցել տարբեր երկրների հասուկ ծառայութիւնների հետ եւ դրանց գործիքն են համարուել ստուերաչին քաղաքականութիւնում: Բայց իրավիճակի փոփոխութեան հետ՝ դրանց մի մասը, ինչպէս ցոյց են տալիս զարգացումները նոյն Սիւրիայում, դուրս է եկել վերահսկողութիւնից եւ իր ինքնուրոյն խաղն է վարում, ինչն, ի դէպ, նախկինում էլ էր պատահում:

Ձեւաւորուող աշխարհակարգը, մեծ թուով դերակատարների՝ «փոփոխականների» պատճառով, շատ աւելի բարդ համակարգ է, քան երկբեւեռ կամ բազմաբեւեռ աշխարհակարգի դարաշրջանում: Որոշ իմաստով, աշխարհը յետ է գլորուել, ինչպէս գրում են որոշ մեկնաբաններ, միջուկատալիան դարաշրջան, որը, սակայն, ունի ինտերնետ ու գանգուածային ոչնշանցման գէնք (2ՈՉ): Նման իրավիճակն օբեկտիւօրէն դժուարացում է շրջապատող աշխարհի արագ փոփոխուող բնութագրերի ընկալումն ու իմաստաւորումը: Բնական է, որ բարդանում է նաեւ այդ փոփոխութիւններին համապատասխան արձագանքումը: Ներկայ պայմաններում աճում է անգամ ԱՄՆ-ի՝ առաւել «ինտելեկտուալացում» տեղութեան կողմից սխալներ թույլ տալու հաւանականութիւնը, որի քաղաքականութիւնը ձեւաւորում է բարձրակարգ բազմաթիւ think-tank-երի, համալսարանների եւ գիտական կենտրոնների հիմքի վրայ: Այս համատեքստում զարմացալի է, որ ԱՄՆ ռազմական փորձագէտներն իրենց հետազոտութիւններում ընդգծում են պետական ինստիտուտների ամբողջական կարեւորութիւնը: Սակայն կոնկրետ պարագայում՝ ԱՄՆ-ում, ներքին շահերի բախումներ են առաջանում, ազգային ռազմարդիւնաբերական համալիրի ուժեղացումն, օրինակ, կարող է յանգեցնել այսպէս կոչուած «ներքին պետութիւնների» ստեղծմանը հենց պետութեան ներսում:

Այս բոլոր գործոցների ամբողջութիւնը հանգեցրել է նրան, որ ճգնաժամային երեւոյթները սկսել են զգացուել ոչ միայն գլոբալ տնտեսութիւնում, այլեւ հանրային եւ միջազգային կեանքի բոլոր ոլորտներում: Պատահական է, որ այսօր կարելի է հանդիպել աշխարհում տեղի ունեցող գործընթացների յաճախ հստակտրոպիական (վախճանաբանական) մեկնութիւնների: Այս ամէնն ընդհանուր առմամբ աւելի ցայտուն եւ, միեւ նուրն ժամանակ, դրամատիկ դրսեւորում է ունենում Մերձաւոր Արեւելքում ընթացող զարգացումներում:

«Ողջ Մերձաւոր Արեւելքում երկինքն անամպ է»

Մերձաւոր արեւելեան գործընթացների յատկանշական գիծը,

մեր կարծիքով, տեղի ունեցող իրադարձութիւնների դրդապատճառների եւ վերջնականների բազմաթուութիւնն է: Եթէ փորձենք հիմնական յատկանշներով ընդհանրացնել մեզ յայտնի հրապարակումներն այս հարցի վերաբերեալ, ապա արդիւնքում կը ստանանք միմեանց չհակասող, ընդհակառակը՝ փոխըմբռնող հետեւեալ վարկածները:

«Արաբական գարուն» վարկած. Այս վարկածի հիմնական թեզիսն այն է, որ տարածաշրջանի երկրներում կուտակուել է սոցիալտնտեսական, ժողովրդագրական, էթնիկական եւ կրօնադաւանաբանական հիմնախնդիրները կրիտիկական գանգուած: Դա հանգեցրել է գանգուածային բողոքների՝ արդի պատկերացումներին համապատասխան բարեփոխումների, արդիականացման եւ ժողովրդավարացման պահանջներով:

Այն, որ հիմնախնդիրները Մերձաւոր Արեւելքում աւելի քան շատ էին, որեւէ կասկած չի յարուցում: Այս հարցը քննարկուել է հիմնարար շատ աշխատութիւններում, այս մասին են վկայում նաեւ «յեղափոխական ներուժի» ինդեքսները (revolting-index), որտեղ 16 երկրների շարքում աղիւսակի վերին 5 տեղերը զբաղեցնում են արաբական երկրները: Բայց վարկանիշային թերթիկից երեւում է նաեւ, որ յեղափոխական իմաստով շատ աւելի «առաջադէմ» այլ երկրներում մինչեւ այժմ ոչ մի առանձնայատուկ բան տեղի չի ունեցել: Հնարաւոր է, որ արաբական հանրութիւններն ընտրելին էլ լոյրուցիոն գարգացման այլ ճանապարհ, թէ՛ այդ օբեկտիւններին հանգամանքներին չգումարուելին արտաքին գործօճները՝ գոնաւոր յեղափոխութիւններ կատարելու յայտնի տեխնոլոգիաների գործարկումը, այս անգամ՝ «ուրբաթօրեայ աղօթքների» շեշտադրմամբ: Ընդ որում, կարելի էր խաղացին «Ապրիլի 6-ի շարժման» տիպի կազմակերպութիւններն իրենց «Քեֆայա»՝ «Բաւական է» կարգախօսով (յիշենք «Կմարան») Վրաստանում): Դրա հետ մէկտեղ, ապստամբական շարժման մէջ ի յայտ եկաւ տեղեկատուական գործառնութիւնների այնպիսի արդիւնաւէտ գործիք, ինչպիսին են սոցիալական ցանցերն ու բլոգոսֆերան: Օրինակ, դեռ 2010թ. Յունիսին Google-ի մերձաւոր արեւելեան բաժանմունքի մենեջեր վաւել Գոնիմը հակամութարաքեան էջ բացեց Facebook-ում, որն օրական այցելում էր մինչեւ կէս միլիոն մարդ: Չի կարելի լիովին բացատրել հնարաւորութիւնը, որ սոյն պարագայում գործում էր ոչ այնքան ԱՄՆ-ը կամ նրա դաշնակիցները, որքան ինքնուրոյն գործող «ժողովրդավարացող» ՀԿ-ները՝ խոշոր ՀԱՄ-ի հետ մէկտեղ, որոնք մեծ խանդավառութեամբ մեկնաբանում էին իրադարձութիւններն ու ամէն կերպ քաջալերում թահրիր հրապարակի ցուցարարներին:

ԻՆՉ Է ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԸ

Շարունակում էջ 7-էն

ուր հասարակութիւնը այլեւս բացարձակ իշխանութեան ու բռնատիրութեան հանդէպ ոչ թէ միայն իր վախը թօթափած է այլ նաեւ որդեգրած է վճռակամ եւ հետեւողական պայքար՝ հաւաքական շահերու ի նպաստ: Մեր պարագային սա չի նշանակեր որ մարդիկ Հայաստանի կամ Սփիւռքի մէջ եկեղեցուց դէմ պիտի «ապստամբին», բայց կ'ընդգծէ այն իրականութիւնը որ հասարակութեան սպասումներուն անտեսումը եկեղեցուց նուիրապետականութեան կղզիացումին կը տանի:

Այս առումով, եկեղեցին պէտք է պատրաստ ըլլայ ԱՊՐԵՑՆԵԼՈՒ եւ ոչ թէ միայն քարոզելու Հայ Քրիստոնեայ հաւատքը: Հայց եկեղեցուց առաքելութեան առանցքը սահմանելու համար Եպիսկոպոսական ժողովը կրնայ սկսիլ ամենապարզ հարցադրումներով, գորս այսօր որեւէ նման մեծ հաստատութիւն մը պիտի հարցնէր իր ներքին կեանքը դրսեւորելու եւ իր արտաքին յարաբերութիւնները ճշդելու համար:

Ի՞նչ է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուց նպատակը այսօր 21րդ դարուն մէջ, այսինքն՝ ինչ է եկեղեցուց առաքելութիւնը այսօր եւ գալիք տասնամեակներուն: Ի՞նչն է կարեւորը Եկեղեցուց համար, այսինքն՝ արժէքներու ճշդում եւ առաջնահերթութիւն: Ի՞նչ կ'ուզենք ըլլալ, ի՞նչ է Եկեղեցուց դեկավարութեան տեսիլքը: Ի՞նչ է Եկեղեցուց ծրագիրը, մարտավարութիւնը: Եւ վերջապէս ի՞նչ պէտք է ընել եւ ի՞նչպէս: Նման հարցադրումներ, լուրջ մտայնումներ եւ հետեւողական աշխատանքներ, մանաւանդ աշխարհականերու գործօն մասնակցութեամբ, արդէն կարք մը համայնքներու մէջ արդիւնքներ ստեղծ են եւ որոշ ծուխերու կենսունակութիւն եւ աշխուժութիւն բերած են:

Այսօր 21րդ դարու երկրորդ տասնամեակին Հայց. Առաքելական Եկեղեցին իր բոլոր նուիրապետական աթոռներով ու կառույցներով իր ուժերն ու «հարստութիւնը» պէտք է համատեղէ, որպէսզի իւրաքանչիւր ծուխ, թեմ կամ եկեղեցա-

կան համայնք վերածուի իսկական հոգեւոր «տուն»ի մը, ուր Հաւատքը, Յոյսը եւ Սէրը համայնքային եւ հոգեւոր կեանքին հիմնաքարերն են:

Վարչական ու կազմակերպչական ծիրէն անդին ու աւելի կենսական՝ Հայց. Եկեղեցին պէտք է մտաւորական շփում մշակէ հասարակութեան հետ մարդկութիւնը յուզող այժմէական ընկերաբարոյական ու այլ հարցերու մասին: Պաշտամունքային կամ ծիսական բարեփոխումներ ցանկալի են եւ թերեւս անհրաժեշտ, բայց իմաստագործ են երբ հասարակութեան կամ բարեպաշտ ժողովուրդին աւօրեային հետ ոչ առնչութիւն ունին ոչ ալ ուղղակի ազդեցութիւն: Օրինակ՝ մկրտութեան ծէսի բարեփոխումը եւ կանոնաւորութիւնը շատ աւելի իմաստալից պիտի ըլլայ եթէ նաեւ նոյնքան լուրջ ժամանակ, մտածողութիւն ու ջանք թափուի հայ մարդուն բացատրելու թէ ի՞նչ է մկրտութեան իմաստը եւ ի՞նչ է ծէսին առնչութիւնը իր 21րդ դարու կեանքին մէջ: Այսինքն՝ ինչ է մկրտուած հայ քրիստոնեայ ըլլալու իմաստը ներկայ բազմակարծիք եւ բազմահոսանք աշխարհին մէջ, ուր հայ մարդը, ի տարբերութիւն հեռաւոր անցեալին, մնայուն շփում ունի այլազան եւ ոչ աւանդական մտածողութիւններու եւ թեքումներու հետ:

Եկեղեցի մը առանց յստակ քրիստոնէական առաքելութեան՝ աշխարհիկ կազմակերպութիւն մըն է, գործը իր հոգեւոր գործօնէն: Եկեղեցի մը առանց հաւաքար կամ անհատային արթող հաւատացեալներու՝ լոկ կառույց մըն է: Եկեղեցի մը առանց ուրիշներու օգնելու պատրաստակամութեան եւ համայնքային ծառայութեան՝ պարզապէս անցեալի փառքերու պահեստանոց մըն է:

Սա է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուց այսօրուան հիմնախնդիրը. մնացեալը՝ թէկուզ կարեւոր, մանրամասնութիւններ են:

Կարելի է միտքեր կամ քննադատութիւններ դրկել Հրաջ Զիւլիկիբեանին iHratch@gmail.com հասցեով կամ www.hratch.info կայքէջով:

Այս ամէնից կարելի է եզրակացնել, որ, իհարկէ, դժուար է պատկերացնել յեղափոխական գարգացումներն առանց օբեկտիւ նախադրեալների, բայց արդի աշխարհում նաեւ դժուար է պատկերացնել ծաւալուն հասարակական շարժումներն առանց արտաքին ռեսուրսային սնուցումների՝ լինեն դրանք պետութիւններ, թէ բազմաբեւեռ աշխարհակարգի նոր սուբեկտներ: Եթէ դա չի բաւարարում, ապա կազմակերպութեան միջամտութիւն, ինչպէս տեղի ունեցաւ Լիպիայում: Բայց սա արդէն մեզ մտայնում է տեղի ունեցող դէպքերի աշխարհաքաղաքական դրդապատճառների վարկածին:

«Աշխարհաքաղաքականութիւն» վարկած. Այս մտայնման համաձայն՝ յեղափոխական շարժումները նախաձեռնուել էին ոչ թէ յանուն արաբական երկրների արդիականացման եւ գլոբալ հանրութեանը նրանց ինտեգրման) ինչ-

պէս յայտնի է, տեղի ունեցաւ ուղիղ հակառակը), այլ որոշակի աշխարհաքաղաքական նպատակների հասնելու համար: Նման հարցադրումն օրինաչափ է եւ այնքան էլ ինքնատիպ է, քանի որ դրսից հրահրող յեղափոխութիւններն առնուազան վերջին տասնամեակներում (իսկ ոմանց կարծիքով՝ վերջին հարիւրամեակում) հենց նման նպատակներ են հետապնդել: Սակայն աւելի վաղ այդ վերջնականութիւնը որոշ չափով միանշանակ էին եւ յատուկ գաղտնագրածման կարիք չուներին: Իսկ արաբական աշխարհի գործընթացների պարագայում ինտրիգը շատ աւելի բարդ է, մանաւանդ եթէ հաշուի առնենք հարցի նախապատմութիւնը, այն է՝ ամբրիկեան ներխուժումն իրաք 2003թ.:

Այս ամէնը լաւ հասկանալու համար փորձենք գնահատել այսպէս կոչուած մերձաւոր արեւելեան տուրբուլիզացիայի որոշ միջանկեալ արդիւնքներ:

ԱՐՄԻՆԱՅԵԱԼ ԷՏԻ ԵՒ ՍԱՐԻՆ ՊՈՉՆՈՅՄԱՆ 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013 «Մասիս» կը շնորհաւորէ նորապսակ գոյգերը, ջերմագին մաղթանքներով, յատկապէս Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեաններուն: \*\*\*\*\* Էտի եւ Սարին Պոչնոյայեանի ամուսնութեան ուրախ առիթով, մի ոմն կը նուիրէ \$200 «Մասիս»ին:

**ԽԱՉԿԵՐԱՑ...**

Շարունակուած էջ 16-էն

ճարները երեւակայութեան ճախարանքից յառնած տաճարները, նրանց մատենաները, թոյլատրել պահպանել որպէս նրանց ստեղծագործ մտքի թուրիքի արգասիքը: Հասպատեսել էք արդեօք, մայր ոստան Աթէնքի Ակրոպոլ բլուրին յառնած՝ նրա հովանաւորեալ՝ հրաշածին Աթենաս-Պալլասի սիւնագարդ, մարմարակերտ տաճարը:

Տրդատ Գ. Արշակունի, ասում են սահմանակից երկու կայսրութիւններին չձուլուելու համար հրամայել է երկրում հեռու մի վարդապետի ուսմունքի պաշտամունքը դաւանել: Ախրոս, որ թագաւորի զարմից մի ուրիշ Արշակունի, հօրենական գերդաստանի վրէժփին յագուրդ տալու համար, երկրի բազմազար գորքով, հարէր եւ աւելի տարիներ պատերազմել է հայոց աստուածների մեհեանների սպասարկու՝ արի, արեւորդի մարդկանց հետ, սպաննել, կրօնափոխ արել նրանց, փել նրանց աստուածների մեհեան-տաճարները, այրել արիական ցեղի մշակութի, Արմէն-Հայերի նշանակագրերով յօրինուած նրանց զարմի պատմութեան մատենաները: Արմէն-Հայը աւելի հպարտ բարեւի կը կանգնէր աշխարհին: Աստուածների արքաների պալատների պատերին նկարագարդուած էր եղել նուաճուած Մուսասիրի խալդի աստուծոյ տաճարը, որը որպէս ճարտարապետութեան հրաշածին կոթող: Արեւմուտքի իմաստունները այն օրինակել են՝ իրենց հին ու նոր աշխարհների կոթողների արարման համար: Սիրոյ, յոյսի ու խաղաղութեան տիեզերական հատուքը լինէր լոյսի ու կեանքի յարատեւութեան պաշտամունք, սակայն ոչ ազգային ոգեղէն լոյս, օտարամուտ էր այն:

Բիւզանդիայի Կոնստանդին կայսրի մայրը՝ Հեղինէ բարեպաշտ իշխանուհին, երեք հարիւր քսան եօթ թուականին, Երուսաղէմ է այցելել: Իշխանուհու այցելութեան նպատակը Քրիստոսի խաչը յայտնաբերելն էր: Նախնիների գրաւոր աւանդութիւնների համաձայն, խաչի թաղուած լինելու տեղը յայտնի էր եղել միայն Յուդա անուսով մի հրեայ մարդու: Նա մերժել է յայտնել խաչի գտնուելու տեղը, սակայն վեց օր ցամաքած ջրհորում անօթի ու ծարաւ մնալուց յետոյ, կամեցել է ցոյց տալ նրա գտնուելու տեղը: Գողգոթայի բլուրի աղբակոյտի պեղումներից յայտնաբերել են երեք խաչափայտեր եւ Պիղատոսի հրամանով Քրիստոսի գլխաւերելու ամրացուած եռալեզու ցուցատախտակը: Պեղումների մօտակայքից փոքրիկ տղայի յուղարկաւորութեան թափօր է այցնում: Հեղինէն խնդրում տղայի դին յաջորդաբար դնել խաչափայտերի վրայ: Երբ նրա դին հանգ-

չում է խաչափայտերից մէկի վրայ, տիեզերքի աստղերի լոյսն է այնտեղ վարարում, լոյսերի մէջ շարունակ տղայի աչքերն են բացուում, արեւային լոյսի պատմուճանը իրանին՝ ոտքի կանգնում: Ականառես մարդիկ, սաղմոսների երգերով Քրիստոսի խաչը տանում Երուսաղէմ, ցուցադրում ի տես Երուսաղէմցիներին: Այդ հրաշքի լոյսից շատեր Քրիստոսի հաւատքն են դաւանում: Հեղինէ իշխանուհին Գողգոթայի բլուրին կառուցում Յարութեան տաճարը, այնտեղ կանգնեցնում խաչափայտը:

Ըստ այլ մի աւանդական պատմի, իբր Հռոմի Կլաւտիոս կայսրի կինը՝ Պատրոնիկէն, Քրիստոնէայ լինելով, ուխտագնացութեան գնում Երուսաղէմ, որտեղ հանդիպում է Տեառնեղբայր Յակոբոս առաքեալին: Նա յայտնում է կայսրուհուն, որ հրեաները Քրիստոսի խաչը աւագակներին խաչերի հետ դրել են Քրիստոսի գերեզմանում, ծածկել հողով եւ արգիլել նրանց մօտենալ: Կայսրուհու կարգադրութեամբ խաչերը հանում են հողից: Որոշելու համար որն է Քրիստոսի խաչը, նրանց մօտեցնում են մահացած մի աղջկայ դին, որը Քրիստոսի խաչին հպեցնելով լոյսի սիւն է իջնում նրա վրայ, ականներն են դառնում արեգակունք, դէմքն է վարդանում: Մարդկանց հոծ բազմութեամբ խաչը տանում Երուսաղէմ, Յակոբոսը ի տես մարդկանց այն վեր է բարձրացնում, տանում դնում տաճարի աւագ խորանին: Յակոբոսը, կայսրուհուն նուիրում է խաչափայտից մի կտոր, որը այն իր հետ տանում Հռովմ: Իբր թէ այդ մասունքին հետագային տիրանում են Գայեանէ-Հռիփսիմէ կոյսերը եւ այն բերում Հայաստան: Հռովմի Կլաւտիոս կայսրի ու թագուհու մահից յետոյ հրեաները սպաննում են Յակոբոսին, Քրիստոսի ու միւսների խաչերը նորէն Գողգոթայում թաղում, ծածկում աղբով:

Մի այլ աւանդապատմով, Երուսաղէմի եպիսկոպոս Յակոբոս Տեառնեղբայրը, Երուսաղէմի երկնակամարում նկատում է հիւսիսից հարաւ, արեւելքից արեւմուտք լուսաճաճանչ հսկայական մի խաչ: Ամբողջ Երուսաղէմը, հայեացքները երկնքին յարած երկիւղածութեամբ դիտում այն, որին ի տես շատ-շատ Երուսաղէմցիներ Քրիստոսի հաւատքին են յարում: Յակոբոսը շարական է յօրինում, որը մինչեւ հիմա կատարում է պատարագի ժամերգութեան ժամանակ՝

Խաչի բո,  
Քրիստոս,  
Երկրպագանբմբ  
Վեցերորդ դարում, Սասանեան Պարսկաստանը պատերազմում է Բիւզանդական կայսրութեան հետ, գրաւում Երուսաղէմը, գերավարում Յարութեան տաճարում գտնուող խաչափայտը, տանում իրենց հետ: Արեւելքի երկու հզօր

կայսրութիւններ՝ Բիւզանդիան եւ Պարսկաստանը վեց հարիւր տարիներ ճակատամարտել են նոր տարածքների տիրելու համար, երկու բանականերում էլ արմիններ ու արմինների այրուճիի գունտեր: Եւ այն ո՞րտեղ՝ հայոց սրբազան լեռնաշխարհում, վերածելով այն պատերազմի թատերաբեմի ու քանդումի: Պատերազմներից հիւժած երկու կայսրութիւնների տարածքներ են ներխուժել իրենց մարգարէի հաւատքի կորովով մրրկած արաբներ, անապատի դաժանութիւնը իրենց սրտերում թուրք սելճուքներ, որոնք անցնելով հայկական սրբազան լեռնաշխարհով աւեր ու հրդեհ թողել իրենց ճամբաներին, տիրել արմինների ու նրանց աշխարհներին:

Բիւզանդիան, մեծաքանակ զօրքով, պատերազմի ելել Պարսկաստանի դէմ: Նրա զօրամիւտերումներում մարտնչել է նաեւ հայկական հեծելազօր գունդը: Հայոց այրուճին, բազում մարտերում, յաղթանակի դափնիներով է պսակել երկրի ռազմարուեստի փառքը: Արեւելքի Արքաների-Արքայ Մեծն Տիգրանի ռազմավարութեան շնորհիւ, նրա զլխաւորած հեծելազօր գունդերը, նուաճել են Սելեւկիան, Առաջաւոր Արեւելքը, մինչեւ Իսրայէլ ու Նաբաթիա: Կատաղի ճակատամարտերում պարտուել է Պարսկաստանը, ազատագրուել Քրիստոսի խաչափայտը: Չինուորական աւանձին դասակներ, անցնելով հայոց աշխարհի ճամբաներով, ուսամբարձ տարել խաչափայտը, այն նորէն կանգնեցրել Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարում: Ի երախտագիտութիւն հայոց գինուորական աջակցութեան, կայսրը հրամայել է Քրիստոսի

խաչափայտից, որպէս սուրբ մասունք, մի կտոր նուիրել հայոց աշխարհին, ասում են մինչեւ հիմա այն պահպանում է Հլմիածնի թանգարանում: Աւանդութիւն չէ, պատմիչների պատմական հաւաստում է:

Վարագայ Սուրբ խաչ վանք: Գայեանէի գլխաւորութեամբ Քրիստոնէայ միանձնուհի կոյսերի մի խումբ՝ Հռիփսիմէ, Շողակաթ եւ այլք, մօտաւորապէս վաթսուն հոգի, Հռովմում Քրիստոնէութեան հաւատք դաւանելու ու քարոզելու համար հալածանքների են ենթարկուել: Խումբը, իր մօտ գտնուող Քրիստոսի խաչափայտի մի կտորի հետ, փախնում ու հանգրուանում են Հայաստան, սկզբում Վանայ ծովի շրջանում: Խաչափայտի կտորը թաքցնում են Վանի մօտակայ լեռան լանջի մի ժայռի ծերպում: Հետագային, մի հովիւ այն գտնում է եւ յանձնում Վան քաղաքի մօտ գտնուող վարագայ վանք: Արծրունեաց Սէնէքերիմ թագաւորը, Վանի նստավայրից փոխադրւում Սեբաստիա, իր հետ տանելով խաչափայտի կտորը: Դէպքերի բերումով Սէնէքերիմը վերագաւնում է Վան, խաչափայտի կտորը պահպանութեան յանձնում քաղաքի Սուրբ Նշան եկեղեցի: Սելջուք թուրքերի արշաւանքների առեն, նրանց կողմից Վանը գրաւելուց յետոյ, խաչափայտի կտորը անհետ կորում է: Հայ եկեղեցին, ի յիշատակ վարագայ խաչին, Սուրբ խաչի սոսից երկու շաբաթ անց, տօնում է նաեւ Վարագայ Սուրբ խաչի տօնը:

Այդ օրը, տարեց հայերը, իրենց խաչի հաւատքի օրհնութիւնը եւ շարականների տիեզերական լոյսը տանում են իրենց գաւակների ու թոռների սրտերին վառելու:

**ԹԱԼԻՇ ԽՄԱԳՐԻ՝ «ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՊԵՐԸ»**

Շարունակուած էջ 5-էն

Նոյնիսկ այս ամէնը հաշուի առնելով՝ մենք պէտք է քաջ գիտակցենք, որ թալիշներն ունեն իրենց շահերը, մենք էլ՝ մերը: Որոշ հարթակներում մեր ու իրենց շահերը համընկնում են, որոշ դէպքերում էլ՝ չեն համընկնի: Միամտութիւն կը լինէր կարծել, որ դատական նիստի ժամանակ, որը կարող է վատ աւարտ ունենալ Մամեդովի համար, վերջինս դրական կ'արձագանքի հայերի հետ առնչութիւն ունենալու մեղադրանքներին: Չարմանալի չէր նաեւ այն, որ դահլիճն անձնական վիրաւորանք ու սաղրանք է որակել հայերի հետ շփուելու մեղադրանքը: Չմոռանանք, որ թալիշների զգալի մասն այնուամենայնիւ դիտում ու կարդում է ատրպէյճանական մամուլ, ապրում է ատրպէյճանցիների հետ կողք կողքի, իսկ հայերի հետ շփումներ հաստատում է միայն թալիշների մտաւորական շերտը: Եւ առհասարակ, եթէ ուշադիր հետեւ ենք անգամ թալիշ մտաւորականների հարցազրույցներին, ապա նրանք իրականում կողմ են Ատրպէյճանի այսպէս կոչուած «տարածքային ամբողջականութեանը», շատ անգամ էլ՝ բնաւ հակաիշխանական չեն եւ խուսափում են նախագահ Իլհամ Ալիեւի դէմ տեսակէտներ արտայայտել: Նրանց մի մասն էլ ցանկանում է պարզապէս սեփական իրաւունքների պաշտպանութիւն, խօսքի ազատութիւն եւ կեանքի քիչ թէ շատ բարօք

պայմաններ, այլ ոչ թէ անկախ կամ ինքնավար Թալիշստան: Ինչեւէ, նոյնիսկ այս պարագան չպէտք է մեզ մտահոգի, քանի որ, ինչպէս նշեցի, իւրաքանչիւրս մեր շահը ունենք: Անշուշտ կան նաեւ ինքնավար թալիշական հանրապետութեան համար պայքարող թալիշներ, որոնց քանակի մասին յստակ տեղեկութիւններ ասել չենք կարող, հարցը կարօտ է հանգամանալից ուսումնասիրութեան:

Հարց է ծագում. Ի՞նչ պէտք է անենք մենք:

Պատասխանը պարզ է: Մենք պէտք է ստեղծուած իրավիճակից հնարաւորինս օգուտ քաղենք մեզ համար՝ զարգացնելով ու տարածելով Շուշիի թալիշական ռատիոյի հաղորդումները, փորձելով այդ կերպ ազգային ինքնագիտակցութիւն արթնացնել թալիշների մօտ, նաեւ խորացնել գիտական-մշակութային կապերը նրանց հետ, ինչու էլ, պարբերաբար խօսենք թալիշների իրաւունքների ոտնահարման, ձերբակալութիւնների ու իշխանութիւնների կողմից հետապնդուելու մասին, յատկապէս որ դա իրականութիւն է: Ազգային փոքրամասնութիւնների հարցը միշտ էլ սուր է եղել ու սուր է լինելու Ատրպէյճանի համար, ուստի Արցախեան չլուծուած հակամարտութեան, սահմանային միջադէպերի ու տեղեկատուական պատերազմի պայմաններում այս իրողութիւնը կարելի է յաջողութեամբ կիրառել հենց Ատրպէյճանի պետական կառուցների դէմ:

**ԸՆՈՐՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ**  
ՎԱՐԳԵՄ ՄԱՆԿՐԵԱՆԻ մահուան առթիւ Մանկրեան եւ Քէլէճեան ընտանիքները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց՝ որոնք ծաղկեպսակ ուղարկելով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով, հեռաձայնով եւ անձամբ ներկայ գտնուելով թաղման արարողութեան իրենց սուգին բաժնեկից եղան:  
Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՑԱՒԱԿՑԱԿԱՆ**  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐԻԿԵԱՆԻ անակնկալ մահուան տխուր առիթով «Շիրակաչէն»ի խմբակցութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն:



ARMENIAN INDEPENDENCE DAY  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

# Փառաստօն FESTIVAL

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

## SUNDAY SEPTEMBER

### 22, 2013

## VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

**ԵՐԳ ՈՒ ՊԱՐ**

**ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ**

**ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ**

**ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ**

**Live Music**

**Dancing**

**Art Work Exhibition**

**Kids Games**

**Armenian Food**



To reserve your vendor booth  
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միութեան

**(818) 391-7938**

### Sponsors




ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC.



WEYCO Group, Inc.

WWW.NAVACOIND.COM  
1.800.628.2759



[www.massispost.com](http://www.massispost.com)